

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ



«Կուբ Ինվեսթ»

փակ բաժնետիրական ընկերություն

թողարկողի անվանումը և կազմակերպչաիրավական ձևը

ՀՀ, ք. Երևան, 0010, Վ. Սարգսյան 10

Հեռ՝ +374 11 800810

Էլ.-փոստ՝ info@cubeinvest.am

Կայք՝ www.cubeinvest.am

«Կուբ Ինվեսթ»

փակ բաժնետիրական ընկերություն

գլխավոր տեղաբաշխողի անվանումը և կազմակերպչաիրավական ձևը

ՀՀ, ք. Երևան, 0010, Վ. Սարգսյան 10

Հեռ՝ +374 11 800810

Էլ.-փոստ՝ info@cubeinvest.am

Կայք՝ www.cubeinvest.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ

Արժեթղթերի տեսակը՝	Անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը	Համապատասխան թողարկման ծավալի ու անվանական արժեքի
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի թողարկման ընդհանուր անվանական ծավալը՝	5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ,
Արժեկտրոնը՝	Տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը հաշվարկվելու է հիբրիդային եղանակով: Շրջանառության առաջին 6 ամիսների ընթացքում պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային հաստատագրված տոկոսադրույք, որը սահմանվելու է Թողարկողի կողմից յուրաքանչյուր պարտատոմսի թողարկման համար տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Շրջանառության առաջին 6 ամիսների ավարտից հետո պարտատոմսերի համար կիրառվելու են տարեկան արժեկտրոնային լողացող տոկոսադրույք, մասնավորապես՝

Յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող աշխատանքային օրվա դրությամբ գործող ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը գումարելով Թողարկողի կողմից՝ տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ որոշված տոկոսադրույքը (spread). Հաշվարկված տոկոսադրույքը կիրառարակվի Թողարկողի պաշտոնական ինտերտետային կայքում (www.cubeinvest.am)՝ էական փաստեր և տեղեկատվություններ պարունակող հաշվետվության տեսքով մինչև տվյալ արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկման օրվա ավարտը:

Ընդ որում, սույն կետի իմաստով կիսամյակ է համարվում պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկվող յուրաքանչյուր 6(վեց) ամիսները:

Շրջանառության ժամկետը՝

ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ.....	6
1.1. Տեղեկատվություն Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ.....	6
1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերը.....	9
1.3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները	13
1.4. Թողարկողի աուդիտն իրականացնող անձինք և խորհրդատուներ.....	14
1.5. Թողարկողի ղեկավարություն և բաժնետերերը	14
1.6. Պարտատոմսերի հիմնական տվյալները.....	15
1.7. Պարտատոմսերի առաջարկի ծրագրի համակողմանի նկարագիրը.....	17
1.8. Վերջնական պայմանների հրապարակման ձևը.....	17
1.9. Ամփոփ ֆինանսական տվյալներ.....	18
ԲԱԺԻՆ 2. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	20
2.1. Ռիսկային գործոններ	20
2.2. Հիմնական տեղեկատվություն.....	23
2.3. Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն.....	24
2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները	37
2.5. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	46
2.6. Լրացուցիչ տեղեկատվություն	47
ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	48
3.1. Անկախ աուդիտորները	48
3.2. Ռիսկային գործոններ	48
3.3. Տեղեկություն Թողարկողի մասին	56
3.4. Բիզնեսի նկարագիրը	58
3.5. Թողարկողի կառուցվածքը	62
3.6. Զարգացման վերջին միտումները	62

3.7. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները.....	63
3.8. Հսկող անձիք	74
3.9. Ակտիվներ և պարտավորություններ, ֆինանսական վիճակ.....	74
3.10. Մասնագիտակն կարծիք.....	75
3.11. Այլ տեղեկատվություն	75
ԲԱԺԻՆ 4. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	76
ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (իրավաբանական անձանց համար).....	76
ՀԱՎԵԼՎԱԾ 2: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար).....	78
ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը	80
ՀԱՎԵԼՎԱԾ 4: Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը	81
ՀԱՎԵԼՎԱԾ 5: Թողարկման վերջնական պայմաններ.....	82
ՀԱՎԵԼՎԱԾ 6: Ֆինանսական հաշվետվություններ.....	89

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք Ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել Ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Արսեն Կատվայան անուն ազգանուն	Խորհրդի նախագահ պաշտոն		05.05.2026 ամսաթիվ
Հայկ Մկրտչյան անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն		05.05.2026 ամսաթիվ
Ռոբերտ Պետրոսյան անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն		05.05.2026 ամսաթիվ
Միքայել Մարգարյան անուն ազգանուն	Գլխավոր տնօրեն - Տնօրինության նախագահ պաշտոն		05.05.2026 ամսաթիվ
Արմեն Տեր- Հակոբյան անուն ազգանուն	Գանձապետ - Տնօրինության անդամ պաշտոն		05.05.2026 ամսաթիվ
Կարինե Քոչարյան անուն ազգանուն	Ադմինիստրատիվ տնօրեն - Տնօրինության անդամ պաշտոն		05.05.2026 ամսաթիվ
Շուշան Հարությունյան անուն ազգանուն	Գործառնական վարչության պետ - Տնօրինության անդամ պաշտոն		05.05.2026 ամսաթիվ
Արմեն Ազիզյան անուն ազգանուն	Գլխավոր հաշվապահ պաշտոն		05.05.2026 ամսաթիվ
Միքայել Մարգարյան անուն ազգանուն	Գլխավոր տնօրեն - Տնօրինության նախագահ պաշտոն		05.05.2026 ամսաթիվ

Ստորագրությունները հավաստում են՝

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

Ամփոփաթերթը պետք է դիտվի՝ որպես Ծրագրային ազդագրի ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ծրագրային ազդագրի վրա: Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ծրագրային ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում: Ներդրողը կարող է ձեռք բերել սույն Ազդագիրը և վերջինիս կից ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով www.cubeinvest.am կայքից:

1.1. Տեղեկատվություն Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

1.1.1 Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է

Հայերեն՝ «Կուբ Ինվեսթ» փակ բաժնետիրական ընկերություն

Ռուսերեն՝ «Куб Инвест» закрытое акционерное общество

Անգլերեն՝ «Cube Invest» Closed Joint Stock Company

Թողարկողի կարճ ֆիրմային անվանումն է

Հայերեն՝ «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ

Ռուսերեն՝ «Куб Инвест» ЗАО

Անգլերեն՝ «Cube Invest» CJSC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10

Թողարկողի պետական գրանցման համարն է՝ 13

Թողարկողի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10

Կապի միջոցներ՝ Հեռ՝ +374 11 800810

Էլ.-փոստ՝ info@cubeinvest.am

Կայք՝ www.cubeinvest.am

Պարտատոմսերին առնչվող հարցերի դեպքում ներդրողները կարող են դիմել «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ (այսուհետ Թողարկող) հետևյալ հեռախոսահամարով +374 11 800810:

1.1.2 Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ն ստեղծվել է 2017թ.-ի հունվարին ՀՀ օրենսդրության համաձայն: Թողարկողը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում 2017թ.-ի փոտրվարի 03-ին: Թողարկողի պետական գրանցման համարն է N 13: Թողարկողին տրամադրվել է ներդրումային ծառայությունների մատուցման թիվ 13 լիցենզիան:

Թողարկողի հիմնական գործունեությունն է բաժնետոմսերի և պարտատոմսերի տեղաբաշխման, շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի), արժեթղթերի ռեեստրի վարման, պահառուական, արտարժույթի առուվաճառքի, ներքին և գլոբալ արժեթղթերի շուկաներում բրոքերային ծառայությունների մատուցումը: Թողարկողի գործունեությունը կարգավորում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Ստորև ներկայացված է Թողարկողի զարգացման համառոտ պատմական ակնարակը՝ ժամանագրական կարևոր նշումներով՝

- 2017 թվականի հունվարին հիմնադիր ժողովի որոշմամբ ստեղծվել է «Կուբ Ինվեսթ» փակ բաժնետիրական ընկերությունը:
- 2017 թվականի փետրվարին Ընկերությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում, ստացել է թիվ 13 գրանցման վկայականը և ներդրումային ծառայությունների մատուցման թիվ 0013 լիցենզիան:
- 2022 թվականի մայիսից Ընկերությունը հանդիսանում է Հայաստանի ֆոնդային բորսայի անդամ:
- 2022 թվականի մայիսից Ընկերությունը հանդիսանում է Հայաստանի դեպոզիտարիայի հաշվի օպերատոր և կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի (ԿՇՀՀ) անդամ:
- 2024 թվականից Ընկերությունը դարձել է Եվրոպայի ֆինանսական շուկաների ասոցիացիայի (AFME) անդամ:
- 2024 թվականի դեկտեմբերին Ընկերությունը ստացել է ISO 27001:2022 սերտիֆիկատը՝ միջազգային հեղինակավոր Quay Audit UK Limited ընկերության կողմից, որը սահմանում է տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգի (ISMS) պահանջները:

- 2025 թվականի մարտին Ընկերությունն արձանագրել է վարկանիշային աճ ֆինանսական գնահատման ոլորտում՝ ստանալով B- Stable Outlook վարկանիշ FitchRatings միջազգային վարկանշային գործակալությունից:
- 2026 թվականի մարտին Ընկերությունն արձանագրել է վարկանիշային աճ ֆինանսական գնահատման ոլորտում՝ ստանալով B- Positive Outlook վարկանիշ FitchRatings միջազգային վարկանշային գործակալությունից:

1.1.3 Թողարկողի կանոնադրական կապիտալը

2026թ.-ի մարտի 31-ի դրությամբ Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմել է 8,400,000,000 (ութ միլիարդ չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ, որը կազմում է 84,000 (ութսունչորս հազար) հատ հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Ազդագրի գրանցման ներկայացման օրվա դրությամբ Թողարկողի բաժնետերն են.

- Արմեն Տեր-Հակոբյանը՝ 50% բաժնեմասով,
- Արմինե Նաջարյանը՝ 50% բաժնեմասով:

1.1.4 Թողարկողի կազմակերպական և խմբի կառուցվածքը

Թողարկողի ներքին կազմակերպական կառուցվածքը ներկայացված է [Հավելված 4-ում](#):

Թողարկողի մասնակիցները ունեն մասնակցություն նաև հետևյալ ընկերություններում՝

Արմեն Տեր-Հակոբյանը՝ «Ա3» ՍՊԸ (50%), «ԱՌ Փրոֆերթիս» ՍՊԸ (50%), Կուբ Կրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ (50%),

Արմինե Նաջարյանը՝ «Ա3» ՍՊԸ (50%), «ԱՌ Փրոֆերթիս» ՍՊԸ (50%), Կուբ Կրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ (50%), «ՖՄՆ» ՍՊԸ (50%), «Արմի Մետ» ՍՊԸ (100%):

1.1.5 Թողարկողի բիզնես նկարագիրը

Թողարկողը 2017թ.-ի փոտրվարի 03-ին գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում 2017թ.-ի փոտրվարի 03-ին և ստացել է թիվ 13 Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա: 2026թ.-ի մարտի 31-ի դրությամբ Թողարկողի սեփական կապիտալը կազմել է 20,289,405 հազար ՀՀ դրամ, իսկ ընդհանուր ակտիվները կազմել են 66,090,075 հազար ՀՀ դրամ, պարտավորությունները՝ 45,800,670 հազար ՀՀ դրամ:

Թողարկողը ֆինանսական շուկայում առաջարկում է հետևյալ ծառայությունները՝ Բաժնետոմսերի և պարտատոմսերի տեղաբաշխման ծառայություններ, Բրոքերային ծառայություններ ներքին և գլոբալ արժեթղթերի շուկաներում, Շուկա ստեղծողի (Մարքեթ մեյքերի) ծառայություն, Արժեթղթերի ռեեստրի վարում, պահառուական ծառայություններ, Արտարժույթի առուվաճառքի ծառայություններ: Թողարկողի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը տեղադրված է Թողարկողի ինտերնետային կայքում:

1.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերը

1.2.1 Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Թողարկողին առնչվող ռիսկերի համալիր նկարագրությանը ներդրողը կարող է ծանոթանալ Ազդագրի 3-րդ բաժնում:

Աճող մրցակցություն: Առկա շուկայական պայմաններում՝ ներդրումային ծառայությունների ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը, հետևաբար շուկայում մրցակիցների ակտիվության բարձրացումը կարող է բացասաբար ազդել Թողարկողի ֆինանսական ցուցանիշների վրա:

Ինֆլացիոն կամ գնողունակության ռիսկ: Չնայած Թողարկողը ներդրել է բավականին ճկուն և արդյունավետ գնագոյացման համակարգ իր կողմից առաջարկվող ծառայությունների համար՝ պետք՝ նկատի ունենալ, որ կախված Թողարկողի կողմից ծառայությունների գնային առաձգականության և եկամուտների առաձգականության բնութագրիչներից, Թողարկողի հասույթը կարող է նվազել <<-ում սպասվելիք գնաճի պայմաններում:

Նորմատիվ և օրենսդրական դաշտի փոփոխություններ: Թողարկողը գործում է << տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկում: Օրենսդրական դաշտի փոփոխությունները, ներառյալ ներդրուային ընկերությունների նկատմամբ կիրառվող տնտեսական նորմատիվների հնարավոր խստացումները, կարող են իրենց ազդեցությունն թողնել Թողարկողի շահութաբերության ցուցանիշների վրա:

Աշխարհաքաղաքական ռիսկ: Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավահիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ

ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վրա, որն էլ իր հերթին կարող է ազդեցությունն թողնել Թողարկողի շահութաբերության ցուցանիշների վրա:

Վարկային ռիսկ: Վարկային ռիսկը Ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործարքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտավորությունները Թողարկողի նկատմամբ:

Գործառնական ռիսկ: Գործառնական ռիսկը ներքին գործընթացների և համակարգերի ոչ համարժեքության կամ խափանումների, ինչպես նաև մարդկանց և արտաքին գործոնների անբարենպաստ ազդեցության արդյունքում կորուստների առաջացման հավանականությունն է:

Շուկայական ռիսկ: Շուկայական գործոնների ազդեցության ներքո Թողարկողի ներդրումների արժեքը կորցնելու ռիսկն է: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքի, գնային, արտարժույթային և կապիտալի գործիքների գնային ռիսկերը:

Տոկոսադրույքի ռիսկ: Ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքների հնարավոր փոփոխության ռիսկն է՝ տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Թողարկողը մշտապես կրում է շուկայական տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների ռիսկը:

Արտարժույթային ռիսկ: Արտարժույթային շուկայում փոխարժեքի տատանումը կարող է բացասական ազդել Թողարկողի ֆինանսական ցուցանիշների վրա:

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Թողարկողը կարող է ունենալ դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները կատարելիս, որոնք մարվում են դրամային միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվների միջոցով:

1.2.2 Պարտատոմսերին առընչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Տոկոսադրույքի ռիսկը: Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ եկամտաբերության ցուցանիշի վերանայման: Ընդ որում, ընդունված է համարել, որ այլ հավասար պայմաններում պարտատոմսերի երկրորդային շուկայում պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների բարձրացումը այլ հավասար պայմաններում հանգեցնում է պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքը հաշվարկվելու է հետևյալ սկզբունքով՝

- Շրջանառության առաջին 6 ամիսների ընթացքում պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային հաստատագրված տոկոսադրույք, որը սահմանվելու է Թողարկողի կողմից յուրաքանչյուր պարտատոմսի թողարկման համար տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ և վճարվելու է կիսամյակային պարբերականությամբ:
- Շրջանառության առաջին 6 ամիսների ավարտից հետո պարտատոմսերի համար կիրառվելու են տարեկան արժեկտրոնային լողացող տոկոսադրույք, մասնավորապես՝

Յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ գործող ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը գումարելով Թողարկողի կողմից՝ տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ որոշված տոկոսադրույքը (spread): Հաշվարկված տոկոսադրույքը կլորացվում է ստորակետից հետո մինչև 2 (երկու) նիշի ճշտությամբ և կիրառվում է հաջորդ կիսամյակի ընթացքում՝ պարտատոմսի գնի հաշվարկման և արժեկտրոնի վճարման ժամանակ:

Թողարկողը յուրաքանչյուր ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող աշխատաքային օրը սահմանում է նոր արժեկտրոնի տոկոսադրույքը՝ ելնելով տարեկան արժեկտրոնային եկամտաբերության վերոնշյալ հաշվարկից:

Հաշվարկված տոկոսադրույքը կիրապարակվի Թողարկողի պաշտոնական ինտերտետային կայքում (www.cubeinvest.am)՝ էական փաստեր և տեղեկատվություններ պարունակող հաշվետվության տեսքով մինչև տվյալ արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկման օրվա ավարտը: Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ կողմից ցուցակման վերաբերյալ դրական եզրակացության առկայության դեպքում նշված հաշվետվությունները որպես էական փաստեր և տեղեկատվություններ կուղարկվեն նաև Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ և ՀՀ ԿԲ:

Ընդ որում, սույն կետի իմաստով կիսամյակ է համարվում պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկվող յուրաքանչյուր 6(վեց) ամիսները:

Պարտատոմսերի տոկոսադրույքները վճարվելու են կիսամյակային պարբերականությամբ: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ արժեկտրոնային տոկոսադրույքը փոփոխական հիմքով հաշվարկելու դեպքում՝ պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կարող է նվազել, ինչի արդյունքում ներդրողները կարող են ստանալ ավելի ցածր արժեկտրոնային եկամուտ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կարող է նաև աճել, ինչը ներդրողներին հնարավորություն կտա ստանալ ավելի բարձր եկամուտ:

Շուկայական ռիսկը: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշներով և դրանց փոփոխություններով պայմանավորված: Ներդրողը պետք է հաշվի առնվի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

Վերաներդրման ռիսկ: Այն բոլոր ներդրողներն, ովքեր Թողարկողի պարտատոմսերը ձեռք կբերեն մինչև մարումը և ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենք են կրելու վերաներդրման ռիսկը, որը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները Թողարկողի պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը (ապահովված պարտատոմսերի դեպքում այդ ռիսկը համեմատաբար ավելի ցածր է), որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Արտարժույթային ռիսկ: Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ դրամով, հետևապես ներդրումները և ներդրումների հետ ստացումը (պարտատոմսերի ձեռք բերման/մարման դիմաց ստացվող գումարներ) իրականացվելու են թողարկման արժույթով: Ուստի, այս իմաստով

արտարժույթային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր սույն պարտատոմսերում ներդնելու նպատակով ստացված կլինեն իրենց ֆինանսական միջոցները փոխարկել այլ արժույթներից թղարկման արժույթի:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը չի կարող երաշխավորել, որ պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով: Այնուամենայնիվ,

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր (գնաճի չափով):

1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Թողարկողի գործունեությունը մշտապես գտնվում է Թողարկողի Բաժնետերերի Ժողովի, խորհրդի և Տնօրինության ուշադրության ներքո և իրականացվում է համաձայն Թողարկողի զարգացման ծրագրի, ինչը հնարավորություն է տալիս օպերատիվ կերպով արձագանքել շուկայական իրավիճակի փոփոխություններին և համապատասխանեցնել Թողարկողի գործունեությունը շուկայի պահանջներին և նվազեցնել ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը:

31.03.2026թ.-ի արդյունքներով 2025թ.-ի տարեվերջի համեմատ Թողարկողի ակտիվները նվազել են 26.75%-ով՝ կազմելով 66,090,075 հազար ՀՀ դրամ, պարտավորությունները՝ 36.02%-ով՝ կազմելով 45,800,670 հազար ՀՀ դրամ, իսկ կապիտալը աճել է 8.67%-ով՝ կազմելով 20,289,405 հազար ՀՀ դրամ:

Հաշվի առնելով Թողարկողի առաքելությունը և նպատակները, բաժնետերերի դիրքորոշումը Թողարկողը 2026թ.-ին իր առջև դրել է հետևյալ նպատակները՝

- ՀՀ ֆինանսական շուկայում ամրապնդել պրոֆեսիոնալ, բարեխիղճ և վստահելի գործընկերոջ կարգավիճակը,

- Ամրապնդել իր ուրույն տեղը Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում և նպաստել արժեթղթերի շուկայի զարգացմանը,
- Թողարկողի քաղաքականությունը ուղղված է լինելու ֆիզիկական և իրավաբանական հաճախորդների ներգրավման ավելացմանը:
- Կիրառել նոր մոտեցումներ, բարձրակարգ տեխնոլոգիաներ և համակարգեր՝ ավելացնել փաստացի մատուցվող ծառայությունների ցանկը,
- Տեխնոլոգիաների ակտիվ կիրառմամբ մատուցել հարմարավետ, պարզ և շահավետ ներդրումային ծառայություններ:

2026թ.-ի երկրորդ եռամսյակի ընթացքում՝ մինչ սույն Ծրագրային ազդագրի ներկայացման օրը, Թողարկողի հիմնական ֆինանսական ցուցանիշների և գործունեության էական փոփոխություն տեղի չեն ունեցել՝ համեմատելով 2026թ.-ի առաջին եռամսյակի ֆինանսական ցուցանիշների հետ: Թողարկողը միտված է պահպանել հիմնական ցուցանիշների շարունակական աճը:

Գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաները ուժի մեջ են, դատական հայցեր առկա չեն, բացակայում և չեն սպասվում կազմակերպական փափոխություններ:

Թողարկողի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման հիմնական նպատակն է՝ իրացվելության մակարդակի բարձրացումը, Ենթակառուցվածքների ընդլայնումը և զարգացումը, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը (վեբ և մոբայլ հավելվածների ներդնում), Նորարարական տեխնոլոգիաների (Արհեստական բանականության) ներդրմամբ նոր պրոդուկտների մշակումը և ներկայացումը շուկային:

1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձինք և խորհրդատուներ

Թողարկողի 2023-2025 թվականների ֆինանսական գործունեության աուդիտն իրականացրել է «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ն: Աուդիտորի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 9, հեռ.՝ +374-10-500964, կայք՝ <http://www.grantthornton.am>:

1.5. Թողարկողի ղեկավարություն և բաժնետերերը

Թողարկողի կառավարման մարմիններն են՝

- Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը՝ Թողարկողի կառավարման բարձրագույն մարմինը,
- Խորհուրդը,

- Տնօրինությունը,

1.5.1 Թողարկողի բաժնետերերը

Սույն Ծրագրային Ազդագիրը կազմելու պահին Թողարկողի բաժնետերերն են եղել՝

- Արմեն Տեր-Հակոբյանը - 50%
- Արմինե Նաջարյանը - 50%

1.5.2 Խորհուրդ

Անուն Ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Փորձառություն
Արսեն Կատվալյան	Խորհրդի նախագահ	28 տարի և ավել
Հայկ Մկրտչյան	Խորհրդի անդամ	30 տարի և ավել
Ռոբերտ Պետրոսյան	Խորհրդի անդամ	31 տարի և ավել

1.5.3 Ղեկավարներ

Անուն Ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Փորձառություն
Միքայել Մարգարյան	Գլխավոր տնօրեն, Տնօրինության նախագահ	14 տարի և ավել
Արմեն Տեր-Հակոբյան	Գանձապետ, Տնօրինության անդամ	27 տարի և ավել
Կարինե Քոչարյան	Ադմինիստրատիվ տնօրեն, Տնօրինության անդամ	33 տարի և ավել
Շուշան Հարությունյան	Գործառնական վարչության պետ, Տնօրինության անդամ	27 տարի և ավել
«ՍթեփԱֆ»ՍՊԸ՝ Արմեն Ազիզյանի	Գլխավոր հաշվապահ	12 տարի և ավել

Թողարկողի աշխատակիցների քանակը՝ 2025թ.-ի դեկտեմբերի 31 դրությամբ 42 է:

1.6. Պարտատոմսերի հիմնական տվյալները

Թողարկվող պարտատոմսերը անվանական են, ոչ փաստաթղթային, անբաժանելի են և փոխարկելի չեն :

Պարտատոմսերի դիմաց տոկոսային եկամուտը վճարվելու է արժեկտրոնների տեսքով:

Թողարկման (առաջարկի) առավելագույն ծավալը կազմում է 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ:

Թողարկման արժույթը ՀՀ դրամն է:

Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են այն արժույթով, որով թողարկվել են պարտատոմսերը:

Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվում են ՀՀ դրամով:

Տեղաբաշխվող պարտատոմսերի քանակը որոշվելու է Թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքը հաշվարկվելու է հետևյալ սկզբունքով՝

- Շրջանառության առաջին 6 ամիսների ընթացքում պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային հաստատագրված տոկոսադրույք, որը սահմանվելու է Թողարկողի կողմից յուրաքանչյուր պարտատոմսի թողարկման համար տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ և վճարվելու է կիսամյակային պարբերականությամբ:
- Շրջանառության առաջին 6 ամիսների ավարտից հետո պարտատոմսերի համար կիրառվելու են տարեկան արժեկտրոնային լողացող տոկոսադրույք, մասնավորապես՝

Յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ գործող ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը գումարելով Թողարկողի կողմից՝ տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ որոշված տոկոսադրույքը (spread): Հաշվարկված տոկոսադրույքը կլորացվում է ստորակետից հետո մինչև 2 (երկու) նիշի ճշտությամբ և կիրառվում է հաջորդ կիսամյակի ընթացքում՝ պարտատոմսի գնի հաշվարկման և արժեկտրոնի վճարման ժամանակ:

Թողարկողը յուրաքանչյուր ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող աշխատանքային օրը սահմանում է նոր արժեկտրոնի տոկոսադրույքը՝ ելնելով տարեկան արժեկտրոնային եկամտաբերության վերոնշյալ հաշվարկից:

Հաշվարկված տոկոսադրույքը կիրառարակվի Թողարկողի պաշտոնական ինտերտետային կայքում (www.cubeinvest.am)՝ էական փաստեր և տեղեկատվություններ պարունակող հաշվետվության տեսքով մինչև տվյալ արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկման օրվա ավարտը: Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ կողմից ցուցակման վերաբերյալ դրական եզրակացության առկայության դեպքում նշված հաշվետվությունները որպես էական փաստեր և տեղեկատվություններ կուղարկվեն նաև Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ և ՀՀ ԿԲ:

Ընդ որում, սույն կետի իմաստով կիսամյակ է համարվում պարտավորումների թողարկման օրվանից հաշվարկվող յուրաքանչյուր 6(վեց) ամիսը:

1.7. Պարտատոմսերի առաջարկի ծրագրի համակողմանի նկարագիրը

Թողարկվող պարտատոմսերի բաժանաորդագրություն չի իրականացվելու:

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու և ավարտվելու օրը, ձեռքբերման գործընթացի մանրամասները և վաճառքի պայմանները ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը մանրամասն նկարագրությունը ներդրողը կարող է ծանոթանալ սույն Ազդագրի Բաժին 2-րդում:

1.8. Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային տեղաբաշխումը սկսելուց առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել առնվազն իր ինտերնետային կայքում:

1.9. Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ստորև ներկայացված են Թողարկողի 2023-2026թթ, ամփոփ ֆինանսական տվյալները:

Ցուցանիշի անվանումը (հազար ՀՀ դրամ)	31.03.2026թ. (առաջիկա չանցած)	2025թ. (առաջիկա անցած)	2024թ. (առաջիկա անցած)	2023թ. (առաջիկա անցած)
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,652,713	8,516,816	8,494,041	4,589,127
Սեփական կապիտալի միջին մեծություն	19,463,049	15,138,284	8,532,856	3,131,272
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	8.49	56.26	99.55	146.56
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսերի նվազեցումից հետո	1,652,713	8,516,816	8,494,041	4,589,127
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	78,156,945	78,315,500	46,377,719	15,891,768
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	2.11	10.88	18.31	28.88
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,652,713	8,516,816	8,494,041	4,589,127
Գործառնական եկամուտ	3,282,231	16,309,596	20,043,101	15,093,953
Զուտ շահույթի մարժա (NPM)	0.50	0.52	0.42	0.30
Գործառնական եկամուտ	3,282,231	16,309,596	20,043,101	15,093,953
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	78,156,945	78,315,500	46,377,719	15,891,768
Ակտիվների օգտագործման գործակից(AU), %	0.04	0.21	0.43	0.95
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	78,156,945	78,315,500	46,377,719	15,891,768
Սեփական կապիտալի միջին մեծություն	19,463,049	15,138,284	8,532,856	3,131,272
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	4.02	5.17	5.44	5.08
Զուտ տոկոսային եկամուտ	626,047	-2,938,399	(1,620,827)	(590,608)
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	70,671,071	77,719,213	40,384,891	5,763,119
Զուտ տոկոսային մարժա (NIM)	0.01	-0.04	(0.04)	(0.102)

Տոկոսային եկամուտ	1,357,752	446,726	292,118	484,051
Եկամատաբեր ակտիվների միջին մեծություն	70,671,071	77,719,213	40,384,891	5,763,119
Եկամատաբեր ակտիվների եկամատաբերություն	0.02	0.01	0.01	0.08
Տոկոսային ծախսեր	731,705	3,385,125	1,912,945	1,074,659
Պարտավորություններ, որոնց կատարվում են տոկոսային ծախսեր գծով	22,100,314	58,236,134	39,428,401	9,319,697
Ծախսատարություն պարտավորությունների, որոնց կատարվում են տոկոսային ծախսեր այն գծով	0.03	0.06	0.05	0.12
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսերի նվազեցումից հետո	1,652,713	8,516,816	8,494,041	4,589,127
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	84,000	84,000	76,000	64,000
Զուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվարկով (EPS)	19.68	101.39	111.76	71.71
Սպրեդ	(0.01)	(0.05)	(0.0413)	(0.052)

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են [Հավելված 3](#)-ում:

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆԱՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԶԱԴԱԳՐԻ ՄՅՈՒՄ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ԲԱԺԻՆ 2. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1. Ռիսկային գործոններ

Տոկոսադրույքի ռիսկ: Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ եկամատաբերության մակարդակի վերանայման, ընդ որում ընդունված է համարել, որ այլ հավասար պայմաններում պարտատոմսերի երկրորդային շուկայում պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքը հաշվարկվելու է հետևյալ սկզբունքով՝

- Շրջանառության առաջին 6 ամիսների ընթացքում պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային հաստատագրված տոկոսադրույք, որը սահմանվելու է Թողարկողի կողմից յուրաքանչյուր պարտատոմսի թողարկման համար տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ և վճարվելու է կիսամյակային պարբերականությամբ:
- Շրջանառության առաջին 6 ամիսների ավարտից հետո պարտատոմսերի համար կիրառվելու են տարեկան արժեկտրոնային լողացող տոկոսադրույք, մասնավորապես՝

Յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ գործող ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը գումարելով Թողարկողի կողմից՝ տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ որոշված տոկոսադրույքը (spread): Հաշվարկված տոկոսադրույքը կլորացվում է ստորակետից հետո մինչև 2 (երկու) նիշի ճշտությամբ և կիրառվում է հաջորդ կիսամյակի ընթացքում՝ պարտատոմսի գնի հաշվարկման և արժեկտրոնի վճարման ժամանակ:

Թողարկողը յուրաքանչյուր ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող աշխատաքային օրը սահմանում է նոր արժեկտրոնի տոկոսադրույքը՝ ելնելով տարեկան արժեկտրոնային եկամտաբերության վերոնշյալ հաշվարկից:

Հաշվարկված տոկոսադրույքը կիրառարակվի Թողարկողի պաշտոնական ինտերտետային կայքում (www.cubeinvest.am)՝ էական փաստեր և տեղեկատվություններ պարունակող հաշվետվության տեսքով մինչև տվյալ արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկման օրվա ավարտը: Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ կողմից ցուցակման վերաբերյալ դրական եզրակացության առկայության դեպքում նշված հաշվետվությունները որպես էական փաստեր և տեղեկատվություններ կուղարկվեն նաև Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ և ՀՀ ԿԲ:

Ընդ որում, սույն կետի իմաստով կիսամյակ է համարվում պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկվող յուրաքանչյուր 6(վեց) ամիսները:

Պարտատոմսերի տոկոսադրույքները վճարվելու են կիսամյակային պարբերականությամբ: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ արժեկտրոնային տոկոսադրույքը փոփոխական հիմքով հաշվարկելու դեպքում՝ պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կարող է նվազել, ինչի արդյունքում ներդրողները կարող են ստանալ ավելի ցածր արժեկտրոնային եկամուտ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կարող է նաև աճել, ինչը ներդրողներին հնարավորություն կտա ստանալ ավելի բարձր եկամուտ:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են (կարճաժամկետ կամ երկարաժամկետ ժամանակամիջոցում) նվազել ներքին և միջազգային տնտեսություններում տնտեսական ցուցանիշների փափախությունների և /կամ նման փափոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են տատանվել և ժամանակի ընթացում կարող են իջնել և/կամ բարձրանալ: Միևնույն ժամանակ ներդրողը պետք է հաշվի առնի, որ, անկախ շուկայական պայմանների փոփոխություններից և սպասումներից, Թողարկողի կողմից արժեկտրոնների վճարման (արժեկտրոնային պարտատոմսերի դեպքում) և պարտատոմսերի անվանական գումարի մարման մեծությունները, արտահայտված թղարկման արժույթով, չեն փոխվում:

Վերաներդրման ռիսկ: Այն բոլոր ներդրողները, ովքեր Թողարկողի արժեկտրոնային պարտատոմսերը ձեռք կբերեն ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամատաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկը, որը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերի պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամատաբերությամբ (ձեռքբերման/գնման գործարքով սահմանված մինչև մարումը եկամատաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորությունների հավանական բացակայությամբ: Հավանական է, որ վերաներդրման ռիսկը ներդրումային որոշում կայացնելու գործընթացում էական գործոն չի հանդիսանա ընթացիկ կամ կարճաժամկետ (մեկ արժեկտրոնային ժամանակամիջոցից ոչ ավել) ներդրումային հորիզոն ունեցող ներդրողների համար:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորոտիվ պարտատոմսեր ձեռք բերելիս (ապահովված պարտատոմսերի դեպքում ավելի քիչ) իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում թողարկողի հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու (արժեկտրոնային պարտատոմսերի դեպքում) կամ պարտատոմսերը իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար վերջիններիս նախատեսում է օժտել որոշակի ներդրումային որակներով (պարբերական արժեկտրոնային վճարումներ (արժեկտրոնային պարտատոմսերի դեպքում), մրցակցային եկամատաբերություն, առևտրին թույլտվություն կարգավորովող շուկայում, ինչպես նաև շուկա ստեղծող ընկերության կամ ընկերությունների հետ համապատասխան պայմանագրի կնքման բանակցությունների վարում): Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը դրանց շրջանառության ժամկետի ընթացքում ելնելով տնտեսական միջավայրի բացասական փոփոխություններից և/կամ ֆինանսական շուկայի անբարենպաստ միտումներից ներդրողները ցանկացած պահի կարող են իրականացնել

կամ ձեռք բերել երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց ֆինանսապես շահավետ գնով:

Արտարժույթային ռիսկ: Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ դրամով, հետևապես ներդրումները և ներդրումների հետ ստացումը (պարտատոմսերի ձեռք բերման/մարման դիմաց ստացվող գումարներ) իրականացվելու են թողարկման արժույթով: Ուստի, այս իմաստով արտարժույթային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր սույն պարտատոմսերում ներդնելու նպատակով ստացված կլինեն իրենց ֆինանսական միջոցները փոխարկել այլ արժույթներից թողարկման արժույթի:

Ինֆլյացիոն կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առակայության պարագայում, Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող տարեկան եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել ավելի ցածր (գնաճի չափով) տարեկան եկամտաբերությունից:

2.2. Հիմնական տեղկատվություն

Թողարկողի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման հիմնական նպատակն է՝

- Իրացվելության մակարդակի բարձրացումը,
- Ենթակառուցվածքների ընդլայնումը և զարգացումը,
- Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը (վեբ և մոբայլ հավելվածների ներդնում),
- Նորարարական տեխնոլոգիաների (Արհեստական բանականության) ներդրմամբ նոր պրոդուկտների մշակումը և ներկայացումը շուկային:

2.2.1 Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել առնվազն իր ինտերնետային կայքում՝ www.cubeinvest.am:

2.3. Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն

2.3.1 Արժեթղթերի տեսակը և դասը

Թողարկվող պարտատոմսերն անվանական, անբաժանելի, ոչ փոխարկելի արժեկտրոնային պարտատոմսեր են:

Թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր:

2.3.2 Երկիրը

Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի: Վեճերի և դատական գործընթացների առկայության դեպքում վերջիններս կարգավորվելու են ՀՀ օրենսդրության համաձայն:

2.3.3 Արժեթղթերի ձևը

Թողարկված պարտատոմսերը ոչ փաստափղթային են, իսկ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը կավարի «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ը (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1 5-րդ հարկ, հեռ՝ +374 60 615555)՝ համաձայն «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Դեպոզիտարիա) համապատասխան կանոնների և ընթացակարգերի:

2.3.4 Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, Տեղաբաշխվող պարտատոմսերի քանակը որոշվելու է Թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

2.3.5 Թողարկման արժույթը

Թողարկման արժույթը ՀՀ դրամն է:

2.3.6 Պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկանկության մասին» ՀՀ օրենքի՝ Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

- Առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ ՀՀ ԿԲ-ի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում,
- երկրորդ՝ այն պարտատերերի պահանջները, որոնք Թողարկողին վարկ, փոխառություն են տրամադրել Թողարկողի մոտ ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի.
- երրորդ՝ Թողարկողի այլ պարտավորությունները,
- չորրորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ Թողարկողի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.
- հինգերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.
- վեցերորդ՝ Թողարկողի մասնակիցների պահանջները:

Թողարկողի սնանկ ճանաչվելու դեպքում պարտատերերին վճարումները կատարվում են «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, որի համաձայն Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են 3-րդ հերթին:

Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

Պարտատոմսերի վերադասակարգում չի նախատեսվում:

2.3.7. Արժեթղթերից բխող իրավունքները

Պարտատոմսերից բխող իրավունքներն են.

- Ստանալ պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները (արժեկտրոնային պարտատոմսերի դեպքում) և մարման գումարը՝ ըստ Ծրագրային ազդագրով սահմանված կարգի: Արժեկտրոնային եկամտի ստացման և շրջանառության ժամկետի վերջում պարտատոմսերի մարման գումարի ստացման իրավունքի իրականացման

համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում և արժեկտրոնային եկամուտը/պարտատոմսի մարման գումարը փոխանցվում է ներդրողի բանկային հաշվին համաձայն Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի հետ կնքվելիք Արժեթղթերի գծով եկամուտների փոխանցման պայմանագրի (այսուհետ՝ եռակողմ Պայմանագիր), ինչպես նաև ներդրողի և իր արժեթղթերի պահառուի միջև կնքված համապատասխան պայմանագրի, եռակողմ Պայմանագրի կողմերն են Թողարկողը և Դեպոզիտարիան, քանի որ այս դեպքում Թողարկողը հանդես է գալիս նաև որպես Հաշվի օպերատոր,

- Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենսդրությամբ թույլատրվող գործողություններ,
- Գրավադրել պարտատոմսերը օրենսդրությամբ սահմանված կարգով,
- Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ-ում (այսուհետ՝ «Բորսա») (ֆոնդային բորսայում ցուցակված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ տեքստում՝ «Օրենք») սահմանված կարգով: Ընդ որում, ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Օրենքով արգելվում է կարգավորվող շուկայից (Բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր,
- Օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

Միաժամանակ պարտատոմսի սեփականատերը պարտավոր է պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռք բերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին, կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն, ինչպես նաև կրել օրենսդրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

2.3.8 Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պայմանները

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որը հաշվարկվելու է հիբրիդային եղանակով, մասնավորապես.

- Շրջանառության առաջին 6 ամիսների ընթացքում պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային հաստատագրված տոկոսադրույք, որը սահմանվելու է Թողարկողի կողմից յուրաքանչյուր պարտատոմսի թողարկման համար տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ և վճարվելու է կիսամյակային պարբերականությամբ:
- Շրջանառության առաջին 6 ամիսների ավարտից հետո պարտատոմսերի համար կիրառվելու են տարեկան արժեկտրոնային լողացող տոկոսադրույք, մասնավորապես՝

Յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ գործող ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը գումարելով Թողարկողի կողմից՝ տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ որոշված տոկոսադրույքը (spread). Հաշվարկված տոկոսադրույքը կլորացվում է ստորակետից հետո մինչև 2 (երկու) նիշի ճշտությամբ և կիրառվում է հաջորդ կիսամյակի ընթացքում՝ պարտատոմսի գնի հաշվարկման և արժեկտրոնի վճարման ժամանակ:

Թողարկողը յուրաքանչյուր ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող աշխատաքային օրը սահմանում է նոր արժեկտրոնի տոկոսադրույքը՝ ելնելով տարեկան արժեկտրոնային եկամտաբերության վերոնշյալ հաշվարկից:

Հաշվարկված տոկոսադրույքը կիրապարակվի Թողարկողի պաշտոնական ինտերտետային կայքում (www.cubeinvest.am)՝ էական փաստեր և տեղեկատվություններ պարունակող հաշվետվության տեսքով մինչև տվյալ արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկման օրվա ավարտը: Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ կողմից ցուցակման վերաբերյալ դրական եզրակացության առկայության դեպքում նշված հաշվետվությունները որպես էական փաստեր և տեղեկատվություններ կուղարկվեն նաև Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ և ՀՀ ԿԲ:

Ընդ որում, սույն կետի իմաստով կիսամյակ է համարվում պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկվող յուրաքանչյուր 6(վեց) ամիսները:

Պարտատոմսերի տոկոսադրույքները վճարվելու են կիսամյակային պարբերականությամբ: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ արժեկտրոնային տոկոսադրույքը փոփոխական հիմքով հաշվարկելու դեպքում՝ պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կարող է նվազել, ինչի արդյունքում ներդրողները կարող են ստանալ ավելի ցածր արժեկտրոնային եկամուտ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կարող է նաև աճել, ինչը ներդրողներին հնարավորություն կտա ստանալ ավելի բարձր եկամուտ:

Լողացող տոկոսադրույքի հիմքում ընկած ցուցանիշի նկարագրությունը:

Պարտատոմսերի շրջանառության առաջին 6 ամիսների ավարտից հետո պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային լողացող տոկոսադրույք՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԲ Դրամավարկային քաղաքականություն իրականացման շրջանակներում սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքը:

ՀՀ ԿԲ-ն իրականացնում է դրամավարկային քաղաքականություն՝ գների կայունության նպատակն ապահովելու համար: Դրամավարկային քաղաքականության տեսանկյունից նպատակադրվում է սպառողական գների՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ փոփոխությունը:

ՀՀ ԿԲ-ն գների կայունությունը սահմանվում է որպես գների տարեկան 3% աճ: Սա չի նշանակում, որ գնաճը պետք է լինի ուղիղ 3%: Այն կարող է ձևավորվել նպատակային մակարդակից ցածր կամ բարձր: Սակայն, միջին հաշվով, Կենտրոնական բանկը պետք է ձգտի գնաճը մոտեցնել 3% թիրախային մակարդակին:

Սահմանելով փողի գինը, որը տոկոսադրույքն է, դրամավարկային քաղաքականությունն ազդում է ֆինանսական ակտիվների գների և տնտեսվարողների սպասումների վրա՝ դրանով ազդեցություն թողնելով համախառն պահանջարկի և գների վրա:

Կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացում սահմանում է իրացվելիության գինը՝ քաղաքականության տոկոսադրույքը, որի միջոցով ուղղորդում է Կենտրոնական բանկի՝ վերաֆինանսավորման և շուկայական գործառնությունները՝ նպատակ ունենալով ճշգրտելու տնտեսվարողների վարքագիծը և ապահովելու գնաճային սպասումների խարսխում 3% թիրախային մակարդակում: Տոկոսադրույքի փոփոխությունը

ազդում է տնտեսվարողների՝ տնային տնտեսությունների և ձեռնարկությունների վարքագծի և որոշումների կայացման վրա, ինչն արտացոլվում է պահանջարկի և գնաճի զարգացումներում:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային վճարումների կատարման կարգը

Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային եկամուտները վճարվում են կիսամյակային պարբերականությամբ:

Արժեկտրոնների հաշվարկման օրերը ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվելու (մարվելու) են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման (մարման) օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա վերջի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Թողարկողը պարտավոր է, համաձայն եռակողմ Պայմանագրի, մինչև պարտատոմսերի հերթական արժեկտրոնների հաշվարկման օրը մինչև ժամը 12:00 Հաշվի օպերատորի Դեպոզիտարիայում վարվող դրամական հաշվի վրա ապահովել հերթական արժեկտրոնների վճարման համար անհրաժեշտ ամբողջ գումարը:

Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարներն անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 0.1 ՀՀ դրամ ճշտությամբ (ընդ որում, կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոնների համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր թիվը): Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

Թողարկողը արժեկտրոնի գումարները վճարելու է անկանխիկ ձևով՝ համաձայն Արժեթղթերի գծով եկամուտների փոխանցման եռակողմ պայմանագրի: Դրամական միջոցների այն մասը, որը հնարավոր չի լինի փոխանցել արժեթղթերի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում պարտատոմսի սեփականատերերի ռեեստրի փակման օրվա դրությամբ ռեեստրում նշված բանկային հաշիվների բացակայության կամ դրանց ճշտման անհնարինության պատճառով՝ Հաշվի օպերատորի կողմից կվերադարձվի Թողարկողի համապատասխան բանկային հաշվին: Այնուհետև Թողարկողը կգործադրի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին հայտնաբերելու ու նրան վճարման ենթակա գումարը փոխանցելու ուղղությամբ: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում Թողարկողը վճարման ենթակա գումարը վճարելու է նոտարի կամ դատարանի (օրենքով սահմանված դեպքերում) դեպոզիտ համաձայն ՀՀ օրենսդրության:

Համաձայն եռակողմ Պայմանագրի, Դեպոզիտարիան՝ արժեկտրոնի գումարների վճարման հիմքով, մինչև արժեկտրոնների վճարման օրվա 14:00 ՀՀ ԿԲ է ներկայացնում տեղեկատվություն պարտատոմսերի արժեկտրոնների վճարման փաստի մասին:

Արժեկտրոնի գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում հետևյալ բանաձևը՝

$$ԱԳ = (FV \times C) / k,$$

որտեղ՝

- ԱԳ-ն արժեկտրոնի գումարն է,
- FV - մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,
- C տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
- k-ն մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է (արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում k=4)

Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI = FV \times \frac{C}{k} \times \frac{DCS}{DCC},$$

որտեղ՝

- AI - կուտակված արժեկտրոնային եկամուտն է,
- FV - մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

- C - տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
- k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը,
- (արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում $k=4$),
- Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համարվում է Actual/Actual-ը (փաստացի/փաստացի), ընդ որում՝
 - DCS - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2-D1M1Y1],
 - DCC - արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3-D1M1Y1],
 - D1M1Y1 - գործարքի կատարման օրվա նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,
 - D2M2Y2 - գործարքի կատարման ամսաթիվն է,
 - D3M3Y3 - գործարքի կատարման օրվա հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

2.3.9 Արժեթղթերի մարման ժամկետը

Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու օրը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվում է պարտատոմսերի մարման օրվա նախորդող օրը: Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ մինչև ռեեստրի փակման պահը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք:

Թողարկողը պարտավոր է, համաձայն եռակողմ Պայմանագրի, մինչև մարման գումարների վճարման օրվա ժամը 12:00 Հաշվի օպերատորի Դեպոզիտարիայում վարվող դրամական հաշվի վրա ապահովել վճարման համար անհրաժեշտ ամբողջ գումարը:

Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Թողարկողը մարման գումարները վճարելու է անկանխիկ ձևով՝ համաձայն Արժեթղթերի գծով եկամուտների փոխանցման եռակողմ պայմանագրի: Դրամական միջոցների այն մասը, որը հնարավոր չի լինի փոխանցել արժեթղթերի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում պարտատոմսի սեփականատերերի ռեեստրի փակման օրվա դրությամբ ռեեստրում նշված բանկային հաշիվների բացակայության կամ դրանց ճշտման անհնարինության պատճառով՝ Հաշվի օպերատորի կողմից կվերադարձվի Թողարկողի համապատասխան բանկային հաշվին: Այնուհետև Թողարկողը կգործադրի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին հայտնաբերելու ու նրան վճարման ենթակա գումարը փոխանցելու ուղղությամբ: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում Թողարկողը վճարման ենթակա գումարը վճարելու է նոտարի կամ դատարանի (օրենքով սահմանված դեպքերում) դեպոզիտ համաձայն ՀՀ օրենսդրության:

Համաձայն եռակողմ Պայմանագրի, Դեպոզիտարիան՝ պարտատոմսերի մարման գումարների վճարման հիմքով, մինչև պարտատոմսերի մարման գումարի վճարման օրվա 14:00 ՀՀ ԿԲ է ներկայացնում տեղեկատվություն պարտատոմսերի մարման գումարի վճարման փաստի մասին: Պարտատոմսերի մասնակի մարումներ կամ վաղաժամկետ մարում չեն նախատեսվում:

2.3.10 Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը հաշվարկվում է Ազդագրի 2.4.3 կետում բերված բանաձևերի համաձայն: Տեղաբաշխման ընթացքում տարեկան եկամտաբերությունը հավասար է լինելու հայտարարված արժեկտրոնի եկամտաբերությանը: Տեղաբաշխման ավարտից հետո տարեկան եկամտաբերությունը որոշվելու է երկրորդային շուկայում՝ համաձայն տվյալ պահին շուկայում ձևավորված տոկոսադրույքների:

2.3.11 Նոր թողարկման մասին տեղեկատվություն

Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ որոշումն ընդունվել է Թողարկողի խորհրդի 28.04.2026թ.-ի 2026/08 որոշմամբ: Որոշմամբ ամրագրվել է այն առավելագույն ծավալը, որի

շրջանակներում Թողարկողի որոշմամբ (որոշումներով) կարող է իրականացվել պարտատոմսերի տեղաբաշխում (տեղաբաշխումներ): Պարտատոմսերի տեղաբաշխումներին վերաբերող վերջնական պայմանները հաստատված են համարվում համաձայն պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ կայացված Թողարկողի որոշման (որոշումների), այնքանով, որքանով վերջիններս չեն հակասում օրենսդրությանը:

2.3.12 Շրջանառության սահմանափակումներ

Թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին Թողարկողի համապատասխան իրավասու մարմնի որոշմամբ պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ այլ սահմանափակումներ չեն սահմանվում, բացի տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի նկատմամբ կիրառվող ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի սահմանափակումից, եթե նման որոշում կայացվի Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված որևէ այլ սահմանափակումներ չկան՝ բացառությամբ Օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի:

Թողարկողը պարտադիր դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ՝ Ֆոնդային բորսա կամ Բորսա) պարտատոմսերը ցուցակելու համար, և համաձայն գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս շրջանառությունը կարող է իրականացվել միայն Բորսայում:

Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ օտարել պարտատոմսերը Բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ Օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (Բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կորպորատիվ արժեթղթեր, բացառություն են կազմում.

- ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները, դրանք ՀՀ ԿԲ և ֆին. շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներն են,
- թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները:

2.3.13 Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկումը

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

Կարևոր ծանուցում: Չնայած այն հանգամանքին, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազգագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների փոփոխության արդյունքում առաջացած լրացուցիչ ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար):

ՀՀ-ում շահութահարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ պետական կառավարչական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ԿԲ-ի: «Հարկային օրենսգրքով» (այսուհետ՝ **Հարկային օրենսգիրք**) ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն (այսուհետ՝ **Ռեզիդենտ կազմակերպություն**) է համարվում այն կազմակերպությունը, որի գտնվելու վայրը հանդիսանում է ՀՀ-ն:

- **Ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը**

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Շահութահարկի գումարը ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ 18 (տասնութ) տոկոս դրույքաչափով:

- **Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը**

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Համաձայն Հարկային օրենսգրքի՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներին են դասվում նաև ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները: Ընդ որում, ոչ ռեզիդենտի ստացված պասիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով) ՀՀ տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, այսինքն՝ շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ և այլ պասիվ եկամուտներ:

ՀՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը: ՀՀ-ում ոչ ռեզիդենտի ստացած եկամտից Հարկային օրենսգրքով սահմանված կարգով հարկային գործակալները շահութահարկը պահում են 10 (տասը) տոկոս դրույքաչափով:

ՀՀ հարկային օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով ոչ ռեզիդենտ կազմակերպությունները ազատվում են շահութահարկի վճարումից:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձիք, Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսների կամ մարելիս զեղչի ձևով ստացված, ներառյալ օտարումից եկամուտների մասով, ազատվում են շահութահարկի վճարումից:

- **Պարտատոմսերից ստացվող եկամտի եկամտային հարկման կարգը և նկարագիրը**

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում, Հարկային օրենսգրքի համաձայն ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական

անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է «ՀՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես «տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես, համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, եթե Հայաստանի Հանրապետությունում է գտնվում նրա տունը կամ այլ բնակարանը, ընտանիքը, մասնագիտական կամ այլ գործունեության հիմնական վայրը:

- **Ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում**

Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը:

Տոկոսագումարների համար եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով: Ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը: Եկամտային հարկի պահումը (գանձումը) իրականացվում է տոկոսագումարների յուրաքանչյուր վճարման դեպքում: 2025թ.-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Հարկային օրենսգրքի» փոփոխությունների արդյունքում ռեզիդենտ ֆիզիկական անձինք ազատվում են մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը Բորսայում ցուցակված պարտատոմսերից՝ մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված եկամուտներից եկամտային հարկ վճարելու պարտավորությունից (բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց):

- **Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում**

Ոչ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է: Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները և եկամտային հարկի կիրառվող դրույքաչափը նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (եկամտային հարկի գծով), ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (շահութահարկի գծով) համար հարկային գործակալ է հանդիսանում Թողարկողը:

2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1 Առաջարկի պայմանները և վիճակագրությունը

Պարտատոմսերի տեղաբաշխվելու են ուղղակի վաճառքի միջոցով: Տեղաբաշխումն սկսելու օրը ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Տեղաբաշխումը կազմակերպվելու արտաբորսայական եղանակով:

Գործում են առաջարկից օգտվելու հետևյալ պայմանները.

Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը պետք է կատարվի պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացման հիմքով, ոչ ուշ քան պարտատոմսերի ձեռքբերման օրվա 16:30-ը: Եթե համապատասխան գումարները վճարվում են պարտատոմսերի ձեռքբերման օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված հատուկ այդ նպատակով բացված բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական ներկայացնողները պետք է տեղյակ լինեն, որ իրենց հայտ-հանձնարարականները չբավարարվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում պարտատոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ հատուկ բանկային հաշվի վրա մնալը մինչև պարտատոմսերի թողարկման պայմանների համաձայն դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V = P \times Q,$$

որտեղ՝

- V-ն պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունն է,
- P-ն պարտատոմսերի ձեռք բերման հայտի ներկայացման օրվա դրությամբ պարտատոմսի գինն է, որը հաշվարկվում է Ազդագրի 2.4.3. բաժնի համաձայն,
- Q-ն պարտատոմսերի այն քանակն է, որը ներդրողը ցանկանում է ձեռք բերել:

2.4.1.1 Առաջարկի առավելագույն ծավալը

Պարտատոմսերի թողարկման (առաջարկի) առավելագույն ծավալը կազմում է 5,000,000,000 (հինգ միլիարդ) << դրամով: Տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի ծավալը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

2.4.1.2 Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Պարտատոմսերի տեղաբաշխման հստակ ժամանակահատվածը՝ ներառյալ տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը, ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Թողարկողի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):

Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում Ծրագրային Ազդագրի լրացում, որը կապված է Ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է

չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել տեղաբաշխման ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Սահմանված հետգնման պահանջը պետք է Տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան 10 (տասը) աշխատանքային օրը՝ Ազդագրի լրացման հրապարակումից հետո:

Եթե առկա են հետ վերադարձման ենթակա դրամական միջոցներ, ապա դրանք վերադարձվում են Տեղաբաշխողի կողմից հետաձգման կամ չեղյալ հայտարարման որոշումն ընդունելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակամիջոցի համար: ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ տեքստում՝ Օրենք) համաձայն:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:

Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Տեղաբաշխողը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց Օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.1.3 Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը

Ներդրում կատարելու համար պետք է կատարել հետևյալ քայլերը.

Պարտավորումների ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Թողարկողին ներկայացնեն պարտավորումների ձեռքբերման հայտ-հանձնարարականը, որով կհավաստեն պարտավորումների թողարկման պայմաններն ընդունելու

իրենց պարտավորումները, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:

Պարտավորումների ձեռքբերման հայտ-հանձնարարականի լրացումից և պարշաճ կերպով Թողարկողին առաքումից հետո, սակայն ոչ ուշ քան պարտավորումների ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը պարտավորումն ձեռք բերել ցանկացող անձը պետք է թողարկման նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված հաշվեհամարին կատարի վճարում պարտավորումների ձեռքբերման հայտում նշված քանակի պարտավորումներ ձեռք բերելու դիմաց՝ վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն:

Թողարկման նպատակով Թողարկողի կողմից բացված հաշվեհամարին դրամական միջոցների ստացումից անմիջապես հետո Թողարկողը Դեպոզիտարիային ներկայացնում է պարտավորումների տեղաբաշխման հանձնարարագիր, որով արժեթղթերը հաշվեգրվում են ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին:

Պարտավորումների տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո թողարկման նպատակով բացված հատուկ հաշվեհամարին ստացված գումարները ենթակա են երկ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Տեղաբաշխողի կողմից ստացման ժամկետից:

Պարտավորումների ձեռքբերման հայտ-հանձնարարականը կհամարվի պարշաճ կերպով առաքված Տեղաբաշխողին, եթե այն առաքվել է Տեղաբաշխողի հետ միայն ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով (կամ առձեռն՝ Տեղաբաշխողի գրասենյակ այցելելով) և ստացվել է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում:

Տեղաբաշխողի հետ կապի միջոցներն են՝

- հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10, «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ,
- Էլեկտրոնային փոստ: info@cubeinvest.am,
- Հեռ. (+374 11) 800810,
- CBANet հասցե՝ Cube Invest IC/CBANet:

Իրավաբանական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է [Հավելված 1](#)-ում: Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է [Հավելված 2](#)-ում:

Պարտավորումների ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

Պարտավորումների ձեռքբերման համար ֆիզիկական և/ կամ իրավաբանական անձինք լրացնում են հայտ-հանձնարարականում նշված դաշտերը, որոնց լրացումը պարտադիր է հայտ-հանձնարարականի վավերականությունն ապահովելու համար:

Հայտ-հանձնարարականում նշված «Ձեռք բերվող պարտավորումների ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը» դաշտում ներդրողները պետք է նշեն «Ձեռք բերվող պարտավորումների քանակը՝ հափ» դաշտում ամրագրված թվի և «Ձեռք բերվող պարտավորումների միավորի ձեռքբերման գինը» դաշտում ամրագրված թվի արտադրյալը:

2.4.1.4 Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը

Տեղաբաշխման ընթացքում յուրաքանչյուր տրանշի առաջարկի ծավալի նվազեցման հնարավորություն կարող է նախատեսվել Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Տեղաբաշխման ընթացքում հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի և/կամ հայտ-հանձնարարականների մասնակի բավարարում:

Մասնակի բավարարման դեպք կարող է առաջանալ, երբ հայտ-հանձնարարականում նշված ձեռքբերվող պարտատոմսերի քանակը գերազանցում է հայտ-հանձնարարականը ներկայացնելու պահին առկա տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի մնացորդային քանակը:

Միաժամանակ ներկայացված հայտ-հանձնարարականների դեպքում, եթե հայտ-հանձնարարականներում նշված ձեռքբերվող պարտատոմսերի ընդհանուր քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի մնացորդային քանակը, ապա տվյալ հայտ-հանձնարարականները բավարարվում են համամասնորեն՝ ըստ հայտ-հանձնարարականներում նշված ձեռքբերվող պարտատոմսերի ընդհանուր քանակում յուրաքանչյուր հայտ-հանձնարարականով նշված ձեռքբերվող պարտատոմսերի քանակի մասնաբաժնի:

Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք)

աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

2.4.1.5 Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները պարտատոմսերի հայտ-հանձնարարականները պատշաճ կերպով առաքելուց, Տեղաբաշխողի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող հետ կանչել:

2.4.1.6 Նվազագույն և առավելագույն գումարները

Թողարկվող պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ, պարտատոմսերի ձեռքբերման քանակի և ազատ շրջանառության հետ կապված որևէ սահմանափակում կիրառելի չեն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,

2.4.1.7 Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները

Պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք վճարումը կատարում են թողարկման նպատակով Թողարկողի կողմից բացված հատուկ հաշվեհամարին: Վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված համապատասխան բանկային հաշվին դրամային միջոցների մուտքագրման պահից:

Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Տեղաբաշխողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

2.4.1.8 Առաջարկի արդյունքների հրապարակման ձևը և ժամկետները

Տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն Օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Հրապարակային տեղաբաշխումն սկսելու պահից յուրաքանչյուր 30-րդ օրվա ավարտից հետո ոչ ուշ, քան 15-րդ օրը, ինչպես նաև տեղաբաշխման ավարտից հետո՝ 30 օրվա

ընթացքում, Թողարկողը պարտավոր է ՀՀ ԿԲ ներկայացնել հաշվետվություն՝ տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին՝ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով: Տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն տեղաբաշխման ավարտից 3 (երեք) աշխատանքային օր Թողարկողի պաշտոնական կայքում:

2.4.1.9 Նախապատվության իրավունքը

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն՝ առաջնահերթություն ունի այն ներդրողը, ում հայտ-հանձնարարականի համաձայն վճարումը թողարկման նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

2.4.2 Տեղաբաշխման պլանը

2.4.2.1 Ներդրողների խմբերը

Առաջարկն ուղղված է ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռներեցներին ինչպես նաև որոկավարոված ներդրողներին:

2.4.2.2 Հայտերի բավարարման մասին տեղեկացումը

Ներդրողները Տեղաբաշխողից տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին մինչև հայտ-հանձնարարականի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Տեղաբաշխողին է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը/երը:

2.4.3 Առաջարկի գինը

2.4.3.1 Արժեթղթերի գինը

Արժեկտրոնային պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$DP = CP + FV * \frac{C_t}{f} * \frac{A}{E}$$

$$CP = \frac{FV * (C_t/f) * (1 - (1 + y/f)^{-N})}{(y/f)} * \left(1 + \frac{y}{f}\right)^{1-\tau} + \frac{FV}{(1 + y/f)^N} * \left(1 + \frac{y}{f}\right)^{1-\tau} - FV * \frac{C_t}{f} * \frac{A}{E}$$

$$\tau = \frac{DSC}{E}$$

$$C_t = ReferenceRate_t + Spread$$

Որտեղ՝

FV-պարտատոմսի անվանական արժեքը,

DP-պարտատոմսի ամբողջ գինը(ներառված կուտակված տոկոսագումարը),

CP- պարտատոմսի մաքուր գինը (առանց կուտակված տոկոսագումարը),

C_t-արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը(%),

y- տարեկան եկամտաբերությունը(%),

f-արժեկտրոնի վճարման պարբերականությունը (1-տարեկան, 2-կիսամյակային, 4-եռամյակային, 12- ամսական)

N-մինչև մարման ժամկետը մնացած արժեկտրոնների քանակը,

E-տվյալ փուլի փաստացի տևողությունը օրերով,

A-նախորդ արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրը, փաստացի օրերի թիվը, իսկ առաջին արժեկտրոնի վճարման դեպում՝ թողարկման օրից մինչև գործարքի կատարման օրը փաստացի օրերի թիվը,

DSC - գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարման օրը,

ReferenceRate_t-ուղենիշային տոկոսադրույք (%),

Spread- սահմանված տոկոսադրույք (%),

Ամսաթվերի միջև օրերի քանակի հաշվարկման մեթոդը-ACT/ACT

Մինչև տեղաբաշխման սկիզբը տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի, պարտատոմսերի վաճառքի գինը կիրապարակվի Թողարկողի ինտերնետային կայքում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Ներդրողները պարտավոր են նաև Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական արժեթղթերի հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

2.4.4 Տեղաբաշխումը

2.4.4.1 Երաշխավարված տեղաբաշխում իրականացնողները

Երաշխավարված տեղաբաշխում իրականացնողներ առկա չեն:

2.4.4.2 Չերաշխավարված տեղաբաշխում իրականացնողները

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ն լավագույն ջանքերի գործադրմամբ, չերաշխավորված եղանակով տեղաբաշխելու է մինչև 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ առավելագույն ծավալով պարտատոմսերը:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ՝

- Չերաշխավորված տեղաբաշխման դեպքում տեղաբաշխման ավարտին պարտատոմսերի՝ հայտարարված տեղաբաշխման ծավալը կարող է ամբողջությամբ չտեղաբաշխվել, այսինքն կարող է տեղի ունենալ թերտեղաբաշխում,
- Անկախ տեղաբաշխման ավարտին պարտատոմսերի փաստացի տեղաբաշխված ծավալից՝ տեղաբաշխումը համարվում է կայացած:

2.4.4.3 Տեղաբաշխման պայմանները

Թողարկողը և Տեղաբաշխողը նույն իրավաբանական անձն է՝ «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ:

Թողարկողը/Տեղաբաշխողը այլ տեղաբաշխողների և/կամ խմբի հետ համատեղաբաշխման պայմանագիր չի կնքել:

2.4.4.4 Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր

Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

2.4.4.5 Վճարում ընդունող բանկերը և պահառուները

Պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով Տեղաբաշխողի՝ «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ի կողմից բացված հաշվեհամարին: Եթե ներդրողը

պարտատոմսերի ձեռքբերումը իրականացնելու է իր բրոքերային ընկերության միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել ներդրողի բրոքերային ընկերության հետ:

Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/ անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես Գլխավոր պահառու համաձայն ՀՀ օրենսդրության և կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոնների: Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ կոնտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (Դեպոզիտարիայի ենթապահառու)՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ (հեռ.՝ +374 60 615 555, +374 10 543 321):

Պարտատոմսերի ռեեստրի վարման հաշվի օպերատոր հանդիսանում է «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ն: Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշիվ:

2.5 Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

2.5.1 Առևտրին թույլտվությունը

Սույն Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո Թողարկողը պարտադիր դիմելու է Բորսային՝ տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու համար: Ընդ որում պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու դիմումը կարող է չբավարարվել Բորսայի կողմից:

Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ և պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների հիման վրա դրանց դիմաց կատարված վճարումները կվերադարձվեն 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

2.5.2 Շուկաները

Այս պահին Թողարկողի կողմից սույն Ծրագրային Ազդագրով գրանցվող պարտատոմսերը թույլատրված չեն հրապարակային առևտրի ոչ մի շուկայում:

2.5.3 Շուկա ստեղծողները

Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու դեպքում Թողարկողը մտադիր է մասնագիտացված անձանց հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր:

Ներդրողները Թողարկողի պարտատոմսերի համար ներգրավված շուկա ստեղծող(ներ) մասին կարող են տեղեկանալ Հայաստանի ֆոնդային բորսայի կայքից՝ www.amx.am:

2.6 Լրացուցիչ տեղեկատվություն

2.6.1 Խորհրդատուներ

Սույն Ծրագրային Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել այլ խարհրդատուների ծառայություններից:

2.6.2 Աուդիտորական եզրակացությունը

Բացի սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են [հավելված 6](#)-ում:

2.6.3 Թողարկողի վարկանիշը

Թողարկողը 2026 թվականի մարտին Ընկերությունն ստացել է B- Positive Outlook վարկանիշ [Fitch Ratings](#) միջազգային վարկանշային գործակալությունից:

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1. Անկախ աուդիտորները

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ յուրաքանչյուր տարի «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվություններն աուդիտի ենթարկելու նպատակով հրավիրում է արտաքին աուդիտ: Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ Ֆինանսական հաշվետվությունները գերծ են էական անճշտություններից:

Թողարկողի 2023, 2024, 2025 թվականի ֆինանսական գործունեության աուդիտն իրականացրել է «ԳՐԱՆԹ ԹՈՂՆԹՈՆ» ՓԲԸ-ն: Աուդիտորի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 9, հեռ.՝ +374-10-500964, կայք՝ <http://www.grantthornton.am>:

3.2 Ռիսկային գործոններ

Ներքոնշյալ ռիսկերից յուրաքանչյուրը կարող է հանգեցնել Թողարկողի ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և կանխիկ դրամական հոսքերի վատթարացմանը, ինչպես նաև շուկայական դիրքի, մրցունակության և հեռանկարային զարգացման վատթարացմանը, ինչը հավանական է, որ կարող է հանգեցնել Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների՝ լրիվ կամ մասնակի չկատարմանը կամ որոշակի կերպով դժվարացնել ներդրողների կողմից ապագայում պարտատմաների արագ և շահավետ գնով իրացումը, արժեկտրոններով նախատեսված տոկոսագումարների ստացումը և մարումը:

Ռիսկերը, որոնց ենթարկված է կամ կարող է ենթարկվել Թողարկողը, ներառում են ներքին և արտաքին հանգամանքներ, որոնք կարող են սպառնալ Թողարկողի գործունեության անընդհատությանը կամ բացասական ազդեցություն ունենալ թողարկողի կապիտալի կամ շահույթի վրա:

Աճող մրցակցություն: Առկա շուկայական պայմաններում՝ ներդրումային ծառայությունների ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը, հետևաբար շուկայում մրցակիցների ակտիվության բարձրացումը կարող է բացասաբար ազդել Թողարկողի ֆինանսական ցուցանիշների վրա:

Ինֆլացիոն կամ գնողունակության ռիսկ: Չնայած թողարկող ներդրել է բավականին ճկուն և արդյունավետ գնագոյացման համակարգ իր կողմից առաջարկվող ծառայությունների համար՝ պետք՝ նկատի ունենալ, որ կախված Թողարկողի կողմից ծառայությունների գնային

առաձգականության և եկամուտների առաձգականության բնութագրիչներից, Թողարկողի հասույթը կարող է նվազել ՀՀ-ում սպասվելիք գնաճի պայմաններում: Այնուամենայնիվ, տոկոսադրույքների վերանայման և տոկոսադրույքի հանդեպ զգայուն ակտիվների ու պարտավորությունների տարբերության կառավարման ճկուն քաղաքականությունը Թողարկողի մոտ, թույլ են տալիս համարել, որ մակրոտնտեսական միջավայրի կտրուկ փոփոխության արդյունքում առաջացող վերոնշյալ ռիսկերը չեն կարող էական ազդեցություն ունենալ Թողարկողի շահութաբերության և իրացվելիության վրա:

Նորմատիվ և օրենսդրական դաշտի փոփոխություններ: Թողարկողը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկում: Օրենսդրական դաշտի փոփոխությունները, ներառյալ ներդրումային ընկերությունների նկատմամբ կիրառվող տնտեսական նորմատիվների հնարավոր խստացումները, կարող են իրենց ազդեցությունն թողնել Թողարկողի շահութաբերության ցուցանիշների վրա:

Աշխարհաքաղաքական ռիսկ: Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավահիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վրա, որն էլ իր հերթին կարող է ազդեցություն թողնել Թողարկողի շահութաբերության ցուցանիշների վրա:

Թողարկողը աշխարհաքաղաքական իրավիճակների փոփոխություններից առաջացած ռիսկը զսպելու համար իրականացնում է ներդրումային պորտֆելի դիվերսիֆիկացիա՝ ըստ արժեթղթերի թողարկման և թողարկողի գործունեության աշխարհագրական դիրքի:

Վարկային ռիսկ: Վարկային ռիսկը Ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործարքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտավորությունները Թողարկողի նկատմամբ: Ընկերությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը կառավարելու համար (ինչպես ճանաչված ֆինանսական ակտիվների, այնպես էլ չճանաչված պայմանագրային պարտավորությունների համար), ներառյալ ներդրումային պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակման վերաբերող ցուցանիշները և գործընկերների ընտրության քաղաքականությունը: Թողարկողը վերահսկում է կենտրոնացվածության ռիսկը ներդրումային

պորտֆելի կառուցվածքի դիվերսիֆիկացման միջոցով՝ ըստ թողարկողների, ֆինանսական գործիքների տեսակների, ոլորտների և աշխարհագրական բաշխման: Կիրառվում են նաև ներքին սահմանաչափեր՝ ուղղված մեկ թողարկողի կամ փոխկապակցված թողարկողների խմբի նկատմամբ առավելագույն ազդեցության սահմանափակմանը:

Գործառնական ռիսկ: Գործառնական ռիսկը ներքին գործընթացների, մարդկանց և համակարգերի ոչ համարժեքության կամ խափանումների, ինչպես նաև մարդկանց և արտաքին գործոնների անբարենպաստ ազդեցության արդյունքում կորուստների առաջացման հավանականությունն է: Թողարկողի գործառնական ռիսկերի կառավարումը և դրան վերաբերող գործընթացները կանոնակարգվում են ներքին իրավական ակտերով: Գործառնական ռիսկերը բավական տարաբնույթ են և կարող են պայմանավորված լինել ինչպես տեխնիկական միջոցների խափանմամբ, այնպես էլ մարդկային գործոններով: Տեխնիկական միջոցների և տեղեկատվական համակարգերի խափանման հետ կապված ռիսկերից Թողարկողի համար առավել մեծ նշանակություն ունեն տվյալների բազայի ամբողջական պահպանմանը վտանգող ռիսկերը: Այս առումով Թողարկողը իրականացնում է տվյալների բազայի պարբերաբար արխիվացում, որոնց կրկնօրինակները պահվում են ինչպես Թողարկողի սերվերների և համակարգիչների մեջ այնպես էլ արտաքին կրիչների վրա:

Մարդկային գործոններով պայմանավորված ռիսկերը նվազեցնելու նպատակով Թողարկողի մոտ ներդրված է ներքին հսկողության համակարգ, որի հիմնական տարրերն են գործառույթների և լիազորությունների տարանջատումը, չորս աչքի սկզբունքի կիրառումը, գործարքների նախնական և հետգործարքային ստուգումները, ղեկավարության կողմից իրականացվող վերահսկողությունն ու վերանայումը, ինչպես նաև ներքին և արտաքին աուդիտների իրականացումը:

Շուկայական ռիսկ: Շուկայական գործոնների ազդեցության ներքո Թողարկողի ներդրումների արժեքը կորցնելու ռիսկն է: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքի, գնային, արտարժույթային և կապիտալի գործիքների գնային ռիսկերը:

Տոկոսադրույքի ռիսկ: Ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքների հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Թողարկողը մշտապես ենթարկվում է շուկայական տոկոսադրույքների

տատանումների ազդեցությանը, որոնք կարող են ազդել ինչպես ֆինանսական ակտիվների և պարտավորությունների արժեքի, այնպես էլ ֆինանսական արդյունքների վրա: Տոկոսադրույքի ռիսկի կառավարման նպատակով Թողարկողը պարբերաբար իրականացնում է եկամտաբերության կորի փոփոխությունների, տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների ժամկետային անհամապատասխանության (gap analysis), ինչպես նաև շուկայական տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների ազդեցության վերլուծություններ և սթրես-թեստավորում:

Շուկայական տոկոսադրույքների աճը կարող է հանգեցնել Թողարկողի՝ «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող» ֆինանսական ակտիվների շուկայական արժեքի նվազման և վերագնահատման կորուստների ճանաչման, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ Թողարկողի շահութաբերության վրա: Շահույթի նվազումը, իր հերթին, կարող է հանգեցնել սեփական և նորմատիվային կապիտալի նվազման, ինչպես նաև բացասաբար ազդել կապիտալի համարժեքության ցուցանիշների վրա և որոշ հանգամանքներում առաջացնել սահմանված նորմատիվների խախտման ռիսկ:

Տոկոսադրույքի ռիսկի սահմանափակման նպատակով Թողարկողը կիրառում է պորտֆելի դիվերսիֆիկացման, հեջավորման, նորմատիվային կապիտալի համարժեքության շարունակական մոնիթորինգի և կառավարման, ինչպես նաև ակտիվների և պարտավորությունների կառուցվածքի օպտիմալացման միջոցառումներ:

31.12.2025թ.-ի դրությամբ, սթրես թեստերը արդյունքում շուկայական տոկոսադրույքների 0.5% և 1% անբարենպաստ աճի դեպքում Թողարկողի հնարավոր կորուստների առավելագույն չափը՝

Հազար ՀՀ դրամ

Սթրես թեստեր	0.5% աճ	1% աճ
Հնարավոր կորուստի չափը	1,742,107	3,405,069

Արտարժույթային ռիսկ: Արտարժույթային ռիսկը ֆինանսական կորուստների առաջացման հավանականությունն է, որը պայմանավորված է արտարժույթների փոխարժեքների անբարենպաստ փոփոխություններով: Արտարժույթային շուկայում փոխարժեքի տատանումը կարող է բացասական ազդել Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական

ցուցանիշների վրա: Արտարժույթային ռիսկի կառավարման նպատակով Թողարկողը սահմանել է բաց արտարժույթային դիրքերի ներքին սահմանաչափեր, պատասխանատվության և հաշվետվողականության հստակ շրջանակներ, ինչպես նաև իրականացնում է սահմանաչափերի պահպանման և օգտագործման ամենօրյա վերահսկողություն: Արտարժույթային ռիսկի մոնիթորինգն իրականացվում է շարունակական հիմունքներով, իսկ սահմանված սահմանաչափերի նկատմամբ վերահսկողությունը հանդիսանում է ռիսկերի կառավարման գործընթացի անբաժանելի մասը: Թողարկողը արտարժույթային ռիսկի կառավարման շրջանակում կիրառում է միջազգային լավագույն փորձին համապատասխան մեթոդաբանություններ և գործիքներ, ներառյալ բաց արտարժույթային դիրքերի մշտադիտարկումը, սթրես-թեստավորումը, սցենարային վերլուծությունները և ռիսկի քանակական գնահատման մեթոդները:

31.12.2025թ. դրությամբ Թողարկողի արտարժույթային ռիսկի առավելագույն հնարավոր կորուստը գնահատվել է VaR (Value at Risk) մեթոդաբանությամբ՝ 99% վստահության մակարդակով և նախորդ 250 առևտրային օրերի ընթացքում արտարժույթային փոխարժեքների պատմական տատանումների հիման վրա: Գնահատման արդյունքներով հնարավոր կորուստի չափը կազմել է հետևյալը.

Հազար ՀՀ դրամ

Սթրես թեստեր	Միջին ռիսկի գնահատում	Առավելագույն ռիսկի գնահատում
Հնարավոր կորուստի չափը	265,223	353,631

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը Թողարկողի կողմից ֆինանսական պարտավորությունները դրանց մարման ժամկետներին համապատասխան և առանց էական ֆինանսական կորուստների կատարելու անկարողության ռիսկն է:

Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և դրամական հոսքերի կառավարման արդյունավետությունը հանդիսանում է իրացվելիության ռիսկի կառավարման առանցքային բաղադրիչ: Ֆինանսական կազմակերպությունների գործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ ակտիվների և պարտավորությունների

Ժամկետների ամբողջական համապատասխանությունն գործնականում միշտ չէ, որ հնարավոր է, ուստի Թողարկողը մշտապես վերահսկում և գնահատում է հնարավոր ժամկետային անհամապատասխանությունները:

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով Թողարկողը մշակել և կիրառում է իրացվելիության կառավարման քաղաքականություն, սահմանում է ներքին սահմանաչափեր և իրականացնում դրանց պահպանման շարունակական վերահսկողություն: Ռիսկի կառավարման գործընթացը ներառում է ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների մոնիթորինգ և GAP վերլուծություն, դրամական հոսքերի կանխատեսում, բարձր իրացվելի ակտիվների բավարար մակարդակի պահպանում, ինչպես նաև սթրես-թեստերի և սցենարային վերլուծությունների իրականացում:

Իրացվելիության հնարավոր ճնշումների պայմաններում արագ արձագանքումն ապահովելու նպատակով Թողարկողն ունի իրացվելիության արտակարգ իրավիճակների հաղթահարման ծրագիր (Contingency Funding Plan), որը սահմանում է պատասխանատվության շրջանակները, գործողությունների հաջորդականությունը և ֆինանսավորման հնարավոր այլընտրանքային աղբյուրները:

Բարձր իրացվելի ակտիվների զգալի մասնաբաժինը ընդհանուր ակտիվների կազմում, ինչպես նաև սահմանված ներքին վերահսկողական մեխանիզմները հնարավորություն են տալիս Թողարկողին պահպանել իրացվելիության ռիսկը ընդունելի մակարդակում:

Թողարկողը պարբերաբար գնահատում է ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման աստիճանը և ֆինանսավորման խոշոր աղբյուրներից կախվածության մակարդակը:

31.12.2025թ. դրությամբ իրականացված սթրես-թեստերի արդյունքները վկայում են, որ նույնիսկ անբարենպաստ սցենարների պայմաններում Թողարկողը պահպանել է իր պարտավորությունները ժամանակին կատարելու բավարար կարողություն, իսկ գնահատված ցուցանիշները ունեցել են հետևյալ տեսքը.

Սթրես թեստեր	Իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների սահմանային հարաբերությունը	Նորմատիվի ներքին սահմանված նվազագույն արժեք	Սթրես թեստեր	Իրացվելի ակտիվների և ցայահանջ պարտավորությունների սահմանային հարաբերությունը	Նորմատիվի ներքին սահմանված նվազագույն արժեք
Պետական արժեթղթերի 10% արժեզրկում (FVPL)	25.55%	15%	15% ցայահանջ պարտավորությունների մարում	208%	50%
Պետական արժեթղթերի 20% արժեզրկում (FVPL)	24.45%	15%	25% ցայահանջ պարտավորությունների մարում	222%	50%

Համապատասխանության ռիսկ: Համապատասխանության ռիսկի կառավարման նպատակով Թողարկողի մոտ ներդրված է համապատասխանության կառավարման համապարփակ համակարգ, որը ներառում է հաստատված քաղաքականություններ, ընթացակարգեր և ներքին իրավական ակտեր՝ ուղղված ՀՀ օրենսդրության, Կենտրոնական բանկի նորմատիվ պահանջների, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման, միջազգային պատժամիջոցների և այլ կարգավորող պահանջների պահպանմանը:

Թողարկողի մոտ ներդրված է նաև պաշտպանողական երեք աստիճանի մեխանիզմ, որի շրջանակում առաջին աստիճանը կազմում են բիզնես և գործառնական ստորաբաժանումները, որոնք պատասխանատու են իրենց գործունեության շրջանակում ռիսկերի նույնականացման և կառավարման համար, երկրորդ աստիճանը՝ համապատասխանության և ռիսկերի կառավարման գործառույթները, որոնք իրականացնում են վերահսկողություն և մշտադիտարկում, իսկ երրորդ աստիճանը՝ ներքին աուդիտի գործառույթը, որն ապահովում է վերահսկողական համակարգերի անկախ գնահատումը:

Թողարկողն ունի համապատասխան գործառույթներ իրականացնող մասնագիտացված ստորաբաժանումներ և պատասխանատու աշխատակիցներ, որոնք իրականացնում են համապատասխանության ռիսկերի մշտադիտարկում, գնահատում և վերահսկողություն:

Աշխատակիցների համար պարբերաբար կազմակերպվում են մասնագիտական վերապատրաստումներ և ուսուցումներ, իսկ համապատասխանության, ռիսկերի կառավարման և փողերի լվացման կանխարգելման գործառույթներում ներգրավված մասնագետներն ունեն միջազգային մասնագիտական որակավորումներ (CAMS, ICA) և համապատասխան փորձ:

Համապատասխանության վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվում են նաև պարբերական ներքին ստուգումներ և ներքին իրավական ակտերի շարունակական վերանայում՝ հաշվի առնելով կարգավորող միջավայրի փոփոխությունները և միջազգային լավագույն փորձը:

Կիբեռանվտանգության ռիսկ: Կիբեռանվտանգության ռիսկը տեղեկատվական համակարգերի, տվյալների բազաների և էլեկտրոնային հաղորդակցման միջոցների նկատմամբ իրականացվող կիբեռհարձակումների, չարտոնված մուտքերի, տվյալների արտահոսքի կամ տեխնիկական խափանումների հետևանքով ֆինանսական կորուստների, գործառնական ընդհատումների և հեղինակության վնասի առաջացման հավանականությունն է:

Կիբեռանվտանգության ռիսկի կառավարման նպատակով Թողարկողի մոտ ներդրված են տեղեկատվական անվտանգության կառավարման համապարփակ քաղաքականություններ և ընթացակարգեր, ինչպես նաև տեխնիկական և կազմակերպչական վերահսկողական միջոցառումներ՝ ուղղված տեղեկատվական ակտիվների գաղտնիության, ամբողջականության և հասանելիության ապահովմանը:

Թողարկողը ներդրել և կիրառում է ISO/IEC 27001:2022 միջազգային ստանդարտին համապատասխան տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ (Information Security Management System – ISMS): Նշված ստանդարտը սահմանում է ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ տեղեկատվության պաշտպանության պահանջներ և նախատեսում է տեղեկատվական անվտանգության համակարգի ներդրում, պահպանություն և շարունակական բարելավում՝ ապահովելով տվյալների գաղտնիության, ամբողջականության և հասանելիության բարձր մակարդակ:

ISO/IEC 27001:2022 ստանդարտի թարմացված տարբերակը ներառում է բարելավումներ կիբեռռիսկերի կառավարման և վերահսկողության մեխանիզմներում՝ ուղղված աճող

կիրեռուսպառնալիքներին ավելի արդյունավետ արձագանքմանը և կառավարման համակարգերի ինտեգրման բարձրացմանը:

Թողարկողը շարունակաբար բարելավում է տեղեկատվական անվտանգության միջոցառումները՝ նպատակ ունենալով նվազեցնել կիրեռուսպառնալիքներից բխող ռիսկերը և ապահովել իր տեղեկատվական համակարգերի կայուն և անվտանգ գործունեությունը:

Այլ ռիսկեր: Այլ ռիսկերը ներառում են իրացվելիության, վարկային, գործառնական և շուկայական ռիսկերից բացի բոլոր այլ ռիսկերը, ինչպես օրինակ շրջակա միջավայրի և սոցիալական, ռազմավարական, հեղինակության և իրավական ռիսկերը: Թվարկված ռիսկերի կառավարման նպատակով Թողարկողի մոտ ներդրված են ներքին գործընթացների մշակված համակարգեր, որոնք անընդհատորեն վերանայվում և բարելավվում են՝ Թողարկողի աճին և բիզնեսի բարդությանը համընթաց:

Թողարկողը կարևորում է վերահսկող մարմինների կողմից սահմանված պահանջների լիարժեք պահպանումը և որդեգրում է խիստ մոտեցում կապիտալի համարժեքության նորմատիվների պահպանման, հաճախորդների միջոցների պաշտպանության և ընկերության համբավի պահպանման հարցերում:

3.3. Տեղեկություն Թողարկողի մասին

3.3.1 Թողարկողի պատմությունը և զարգացումը

3.3.1.1 Թողարկողի անվանումը և կազմակերպատիրավական ձևը

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

Հայերեն՝ «Կուբ Ինվեսթ» փակ բաժնետիրական ընկերություն

Ռուսերեն՝ «Куб Инвест» закрытое акционерное общество

Անգլերեն՝ «Cube Invest» Closed Joint Stock Company

Թողարկողի կարճ ֆիրմային անվանումն է՝

Հայերեն՝ «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ

Ռուսերեն՝ «Куб Инвест» ЗАО

Անգլերեն՝ «Cube Invest» CJSC

Թողարկողի գրանցման ապրանքային նշանն է՝



3.3.1.2 Թողարկողի պետական գրանցումը և գործունեության վայրը

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 10

Թողարկողի պետական գրանցման համարն է՝ 13

3.3.1.3 Ստեղծման տվյալներ և համառոտ պատմությունը

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ն ստեղծվել է 2017թ.-ի հունվարին ՀՀ օրենսդրության համաձայն: Թողարկողը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում 2017թ.-ի փոտրվարի 03-ին: Թողարկողի պետական գրանցման համարն է N 13: Թողարկողին տրամադրվել է ներդրումային ծառայությունների մատուցման թիվ 13 լիցենզիան:

3.3.1.4 Թողարկողի գտնվելու վայրը, կապի միջոցները

Թողարկողի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10

Կապի միջոցներ՝ Հեռ՝ +374 11 800810

Էլ.-փոստ՝ info@cubeinvest.am

Կայք՝ www.cubeinvest.am

3.3.1.5 Նշանակալի դեպքեր

Ստորև ներկայացված է Թողարկողի զարգացման համառոտ պատմական ակնարակը՝ ժամանագրական կարևոր նշումներով՝

- 2022 թվականի մայիսից Ընկերությունը հանդիսանում է Հայաստանի ֆոնդային բորսայի անդամ:
- 2022 թվականի մայիսից Ընկերությունը հանդիսանում է Հայաստանի դեպոզիտարիայի հաշվի օպերատոր և կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի (ԿՇՀՀ) անդամ:
- 2024 թվականից Ընկերությունը դարձել է Եվրոպայի ֆինանսական շուկաների ասոցիացիայի (AFME) անդամ:
- 2024 թվականի դեկտեմբերին Ընկերությունը ստացել է ISO 27001:2022 սերտիֆիկատը՝ միջազգային հեղինակավոր Quay Audit UK Limited ընկերության կողմից, որը սահմանում է տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգի (ISMS) պահանջները:

- 2025 թվականի մարտին Ընկերությունն արձանագրել է վարկանիշային աճ ֆինանսական գնահատման ոլորտում՝ ստանալով B- Stable Outlook վարկանիշ FitchRatings միջազգային վարկանշային գործակալությունից:
- 2026 թվականի մարտին Ընկերությունն արձանագրել է վարկանիշային աճ ֆինանսական գնահատման ոլորտում՝ ստանալով B- Positive Outlook վարկանիշ FitchRatings միջազգային վարկանշային գործակալությունից:

3.3.1.6 Թողարկողի հիմնական նորմատիվները

Ներդրումային գործունեության վերահսկման նպատակով՝ սահմանված են տնտեսական նորմատիվներ, որոնցով կարևորվում է նաև ներդրումային ընկերությունների իրացվելիությունը: Ստորև ներկայացված են հիմնական տնտեսական նորմատիվները

31.12.2025թ.-ի դրությամբ

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ սահմանած նորմատիվային թույլատրելի մեծությունը	Նորմատիվի փաստացի մեծությունը
Ընդհանուր կապիտալ նվազագույն չափ	300 մլն ՀՀ դրամ	18,706,587 հազար ՀՀ դրամ
Ն1 (ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջին սահմանային հարաբերակցություն)	Նվազագույնը 12.00%	14.01%

3.4 Բիզնեսի նկարագիրը

3.4.1 Հիմնական գործունեությունը

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ն ներդրումային ընկերություն է, որը ֆինանսական շուկայում առաջարկում է հետևյալ ծառայությունները՝ Բաժնետոմսերի և պարտատոմսերի տեղաբաշխման ծառայություններ, Բրոքերային ծառայություններ ներքին և գլոբալ արժեթղթերի շուկաներում, Շուկա ստեղծողի (Մարքեթ մեյքերի) ծառայություն, Արժեթղթերի ռեեստրի վարում, պահառուական ծառայություններ, Արտարժույթի առուվաճառքի ծառայություններ:

Թողարկողի գործունեությունը կարգավորում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Հաճախորդներին որակյալ ներդրումային ծառայությունների համալիր փաթեթ տրամադրելու նպատակով Թողարկողը սահմանել է հետևյալ առաքելությունը՝

Տեխնոլոգիաների ակտիվ կիրառմամբ մատուցել հարմարավետ, պարզ և շահավետ ներդրումային ծառայություններ:

3.4.1.1 Թողարկողի տեսլականը

Թողարկողի տեսլականն է՝

- Լինել նորարար և առաջադեմ ներդրումային ծառայություններ մատուցող ընկերություն,
- Լինել թիրախային շուկաներում առաջատարներից մեկը սպասարկման որակով և արդյունավետությամբ:
- Դառնալ Հայաստանի արժեթղթերի շուկան միջազգային շուկային ինտեգրելու առաջամարտիկներից մեկը

3.4.2 Հիմնական շուկաները

Թողարկողի գործունեության հիմնական շուկաներն են՝

- Ռեզիդենտ/ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձիք
- Ռեզիդենտ/ոչ ռեզիդենտ իրավաբանական անձիք

Նշված ուղղություններով Թողարկողի կողմից առաջարկվող հիմնական ծառայություններն են՝

- Բաժնետոմսերի և պարտատոմսերի տեղաբաշխման ծառայություններ,

Թողարկողը իրականացնում է արժեթղթերի թողարկման համար անհրաժեշտ խորհրդատվությունների տրամադրում և գործընթացների կազմակերպում և մասնագիտանում է երաշխավորված և չերաշխավորված հրապարակային տեղաբաշխումներ (IPO) իրականացնելու մեջ՝ ապահովելով հաճախորդների համար կապիտալի հասանելիություն:

- Բրոքերային ծառայություններ ներքին և գլոբալ արժեթղթերի շուկաներում,

Թողարկողը հնարավորություն է տալիս ինչպես անհատ այնպես էլ ինստիտուցիոնալ ներդրողներին հասանելիություն ունենալ Հայաստանի և աշխարհի շուրջ 30 ֆոնդային բորսաների ներդրումային գործիքների, որոնք հնարավորություն կտան պոտենցիալ ներդրողներին դիվերսիֆիկացնել իրենց ակտիվները և ստանալ եկամուտներ:

- Շուկա ստեղծողի (Մարքեթ մեյքերի) ծառայություն՝

Թողարկողը հանդիսանում է Հայաստանի ֆոնդային բորսայի անդամ և կարող է իրականացնում է թողարկված պարտատոմսերի երկրորդային շուկայում իրացվելիության ապահովում (շուկայի ստեղծում)՝ համաձայն Բորսային կանոնների:

- Արժեթղթերի ռեեստրի վարում, պահառուական ծառայություններ՝
Հանդիսանալով Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի հաշվի օպերատոր, ինչպես նաև լիցենզավորված պահառուական ծառայություններ մատուցող անձ՝ Թողարկողը մատուցում է արժեթղթերի և սեփականատերերի ռեեստրի վարման ծառայություններ:

- Արտարժույթի առավաճառքի ծառայություններ՝
Թողարկողը առաջարկում է անհատ և ինստիտուցիոնալ հաճախորդներին արտարժույթի սփոթ և ֆորվարդ առավաճառքի գործառնություններ ՀՀ շուկայում տարածված բոլոր արժույթային զույգերով:

Թողարկողը ակտիվների և պասիվների իրացվելիության կառավարման համար իրականացնում է նաև

- Ներդրումներ պարտատոմսերում
- Այլ կարճաժամկետ ներդրումներ (ռեպո/հակադարձ ռեպո գործարքներ)

Թողարկողը արտաքին և ներքին գործոնների անընդհատ վերլուծության և համադրման արդյունքում փորձում է բարելավել գործող ծառայությունները և առաջարկել նոր ծառայություններ:

Թողարկողի նոր առաջարկների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Թողարկողի պաշտոնական կայք էջում:

3.4.3 Մրցակցային դիրքը

Հաջողությամբ իրագործելով իր հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված նպատակները՝ 31.12.2025թ.-ի արդյունքներով Թողարկողը ամրապնդել է իր դիրքերը ՀՀ ներդրումային ընկերությունների առաջատար եռյակում՝ հաշվի առվելով ակտիվների և սեփական կապիտալի ծավալները:

2025թ տարեվերջի համեմատ Թողարկողի ակտիվները նվազել են 24,133,739 հազար ՀՀ դրամով՝ 31.03.2026թ.-ի դրությամբ կազմելով 66,090,075 հազար ՀՀ դրամ:

31.03.2026թ.-ի դրությամբ ընդհանուր պարտավորությունները կազմել են 45,800,670 հազար ՀՀ դրամ՝ նվազելով 25,786,452 հազար ՀՀ դրամով:

31.03.2026թ.-ի դրությամբ սեփական կապիտալը կազմել են 20,289,405 հազար ՀՀ դրամ՝ աճելով 1,652,713 հազար ՀՀ դրամով:

2025թ.-ի արդյունքներով Թողարկողի զուտ շահույթը կազմել է 8,516,816 հազար ՀՀ դրամ՝ աճելով 22,775 հազար ՀՀ դրամով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

2026թ.-ի առաջին եռամսյակի արդյունքներով Թողարկողի զուտ շահույթը կազմել է 1,652,713 հազար ՀՀ դրամ:

Թղարկողի հիմնական առավելությունները՝

- Նշանակալի կապիտալ, որը թույլ է տալիս դիմակայել ներքին և արտաքին ռիսկերին,
- Ռեսուրսների աղբյուրների դիվերսիֆիկացման բավարար մակարդակ,
- Բիզնեսի հիմնական ցուցանիշների դինամիկ աճ,
- Իրացվելիության բարձր մակարդակ:

Ընկերության հարաբերությունները գործընկերների հետ կառուցվում են կորպորատիվ էթիկայի կանոնների և օրինականության, բարեխղճության, փոխադարձ վստահության և հարգանքի, ստանձնած պարտավորությունների անվերապահ կատարման, արդար մրցակցության կանոնների պահպանման, շահերի բախումից խուսափելու սկզբունքների հիման վրա: Մասնավորապես.

- իր հետ հարաբերություններում ձգտում է նվազեցնել գործընկերոջ համար առաջացող ռիսկերը,

- պահպանում է ծառայողական տեղեկատվության գաղտնիությունը գործընկերների, գործարքների, հաշիվների և ներդրումների մասին, ինչպես նաև այլ տվյալների գաղտնիությունը, որոնք կարող են վնասել գործընկերների գործարար համբավը, նյութական և ոչ նյութական շահերը,

- չի դրսևորում թաքնված նախապատվություններ և առավելություններ գործընկերների նկատմամբ,

- ձգտում է բացառել շահերի բախումը:

Ընկերությունն իր աշխատողների հետ հարաբերությունները կառուցում է աշխատանքային էթիկայի կանոնների համաձայն, փոխադարձ հարգանքի, աշխատողների նկատմամբ որևէ խտրականության բացառման սկզբունքների հիման վրա: Ընկերությունը իր աշխատակիցներից

պահանջում է իրենց պարտականությունների ամբողջական ու բարեխիղճ կատարում և ընկերության, հաճախորդների և իրենց շահերի բախման բացառում:

3.5 Թողարկողի կառուցվածքը

Սույն Ծրագրային Ազդագիրը կազմելու պահին Թողարկողի բաժնետերերն են եղել՝

- Արմեն Տեր-Հակոբյանը
- Արմինե Նաջարյանը

Թողարկողի բաժնետերեր ունեն մասնակցություն նաև հետևյալ ընկերություններում՝

Արմեն Տեր-Հակոբյանը՝ «Ա3» ՍՊԸ (50%), «ԱՌ Փրոփերթս» ՍՊԸ (50%), Կուբ Կրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ (50%),

Արմինե Նաջարյանը՝ «Ա3» ՍՊԸ (50%), «ԱՌ Փրոփերթս» ՍՊԸ (50%), Կուբ Կրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ (50%), «ՖՄՆ» ՍՊԸ (50%), «Արմի Մետ» ՍՊԸ (100%):

3.6 Զարգացման վերջին միտումները

Նախորդ հաշվետու ժամանակաշրջանում Թողարկողը միտված է եղել մրցունակ տեղ գրավել ներդրումային ծառայությունների հիմնական շուկաներում՝ նպատակ ունենալով՝

- Տրամադրել ներդրումային ծառայությունների ամբողջական փաթեթ

Թողարկողը ակնկալում է, որ շուկայի վերլուծությունը և առկա ու հնարավոր ռիսկերի բացահայտումը, գնահատումն ու արդյունավետ կառավարումը թույլ կտան ավելացնել իրացվելիության մակարդակը: Բացի այդ Թողարկողը աշխատանքներ է իրականացնում նոր ծառայությունների մշակման և ներդրման ուղղությամբ: Մասնավորապես, շարունակելու է միջոցներ ձեռնարկել միջազգային համբավ ունեցող ֆինանսական կառույցների հետ համագործակցություն սկսելու ուղղությամբ, ներդրումներ իրականացնել Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ, նորարարական տեխնոլոգիաների ներդրմամբ նոր պրոդուկտների մշակումը և ներկայացումը շուկային:

3.6.1 Թողարկողի հիմնական միջոցները


Թողարկողն ունի էական մեծություն կազմող թվով մեկ հիմնական միջոց և ոչ նյութական ակտիվ. 1-ինն իրենից ներկայացնում է Թողարկողի կողմից վարձակալած տարածքը, 2-րդը ներկայացված է Թողարկողի ծրագրային ապահովումը, որոնց արժեքները հրապարակված են սույն Ծրագրային Ազդագրի Հավելված 6-ի Ֆինանսական հաշվետվությունում:

Վերոնշյալ հիմնական միջոցնի և ոչ նյութական ակտիվի օգտագործման նկատմամբ սահմանափակումներ առկա չեն: Չեն ակնկալվում այնպիսի փոփոխություններ որոնք կարող են սահմանափակել թողարկողի կողմից հիմնական միջոցների օգտագործումը:

3.7 Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

3.7.1 Կառավարման մարմինները և կառուցվածքը

Թողարկողը սահմանել է կորպորատիվ կառավարման հետևյալ կառուցվածքը՝



3.7.2 Կառավարման մարմինները իրավասությունները

3.7.2.1 Բաժնետերերի ընդհանուր ժողով

Բաժնետերերի ընդհանուր ժողով ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել ժողով՝ Տարեկան ժողով: Տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո 4 ամսվա ընթացքում: Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Ժողովի իրավասությանն են պատկանում՝

1. Կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,
2. Ընկերության վերակազմակերպումը,
3. Ընկերության լուծարումը,
4. Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,

5. Հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
6. Բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,
7. Տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
8. Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը,
9. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
10. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
11. Բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացումը (տարանջատումը) և մեծացումը (համախմբումը),
12. Խորհրդի անդամների նշանակումը, խորհրդի անդամների փոխհատուցման չափի և պայմանների որոշումը, խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
13. Խորհրդի գործունեության կանոնակարգի ընդունումը,
14. Ղեկավարների ու աշխատակիցների մասնագիտական որակավորման կարգի ընդունումը,
15. Դուստր և կախյալ ընկերություններում մասնակցությունը, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք է,
16. Այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք է,
17. Հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը,
18. Հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը,

19. Խոշոր գործարքների կատարման մասին որոշման ընդունումը Օրենքով սահմանված դեպքերում,

20. Օրենքով ժողովին վերապահված այլ հարցերի լուծումը:

Ժողովը իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Օրենքով ու Կանոնադրությամբ ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:

3.7.2.2 Խորհուրդ

Ընկերությունում ձևավորվում է Խորհուրդ, որի իրավասությանն է պատկանում Ընկերության գործունեության ընդհանուր կառավարման հետ կապված խնդիրների լուծումը, բացառությամբ այն խնդիրների, որոնք հանդիսանում են Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը:

Խորհուրդը բաղկացած է 3 (երեք) անդամից, որոնցից առնվազն մեկը պետք է հանդիսանա անկախ խորհրդի անդամ: Անկախ խորհրդի անդամը պետք է համապատասխանի «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված անկախ խորհրդի անդամի չափանիշներին:

Խորհրդի անդամների նշանակումը, պաշտոնավարման ժամկետը և լիազորությունների դադարեցումը, բացի օրենքի համաձայն դրա իրավունքն ունեցող բաժնետիրոջ կողմից որպես խորհրդի անդամ ներգրավվելու կամ խորհրդի անդամ նշանակելու և լիազորությունները դադարեցնելու դեպքերից, սահմանվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ:

Ընկերության Գլխավոր տնօրենը կամ Տնօրինության որևէ անդամ չի կարող լինել խորհրդի անդամ:

Ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերության խորհրդի անդամների համար կարող է սահմանվել վարձատրություն կամ փոխհատուցում նրանց այն ծախսերի դիմաց, որոնք կապված են Ընկերության խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Դրանց չափերը և վճարման կարգը սահմանվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ:

Ընկերության խորհրդի իրավասությանն են պատկանում.

1. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, գործարար ծրագրի հաստատումը,
2. Ընկերության գործունեության ընդհանուր քաղաքականությունների ընդունումը, ընդ որում՝ քաղաքականությունները կարող են ընդունվել ինչպես աշխատանքների ներքին կազմակերպման, այնպես էլ ընկերության գործունեության բոլոր ոլորտների և ուղղությունների վերաբերյալ,
3. Ընկերության գործունեության հետ կապված կարգերի, ընթացակարգերի և կանոնակարգերի ընդունումը,
4. Ընկերության բաժնետերերի տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,
5. Ժողովների օրակարգի հաստատումը,
6. Ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը օրենքի դրույթների համապատասխան,
7. այն հարցերի ներկայացումը ժողովի քննարկմանը, որոնց ներկայացումն օրենքով վերապահված է խորհրդին,
8. Ընկերության Գլխավոր տնօրենի և Տնօրինության անդամների նշանակումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
9. Ընկերության Գլխավոր տնօրենի և Տնօրինության անդամների աշխատանքի վարձատրության չափի, պայմանների և կարգի հաստատումը,
10. Տնօրինության գործունեության կանոնակարգի ընդունումը,
11. Ընկերության գույքի շուկայական արժեքի որոշումը,
12. Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
13. Ընկերության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշման ընդունումը, այն դեպքում, երբ գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու պահին կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից (քսանհինգ) 50 (հիսուն) տոկոսը,

14. Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում,
15. Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը, միջանկյալ շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշման ընդունումը,
16. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովի առաջարկությունների տրամադրումը,
17. Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը,
18. Ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքի և աշխատակիցների հաստիքացուցակի հաստատումը,
19. Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,
20. Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.
21. Խորհրդին կից հանձնաժողովների ձևավորումը, այդ թվում՝ աուդիտի,
22. Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարների և աշխատակիցների նշանակումը, վարձատրության որոշումը և լիազորությունների դադարեցումը.
23. Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության կանոնակարգի հաստատումը, ներառյալ՝ ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից տրամադրվող հերթական և արտահերթ հաշվետվությունների սահմանումը.
24. Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման հաշվետվությունների լսումը և դրանց հիման վրա Գլխավոր տնօրենին և Տնօրինությանը հանձնարարականների տալը.
25. Տնօրինության կողմից Խորհրդին ներկայացվող հաշվետվությունների ցանկի և պարբերականության սահմանումը,
26. Ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
27. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը, բացառությամբ ժողովի իրավասությանը պատկանող կանոնակարգող ներքին փաստաթղթերի,
28. Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ ընկերություններում մասնակցությունը, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք չէ,

29. Այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք չէ,
30. Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,
31. Ընկերության ղեկավար անձանց և աշխատակիցների գործունեությունը կարգավորող ներքին կանոնների և կանոնակարգերի (բացառությամբ Ժողովի իրավասությանը վերապահված կանոնակարգերի), առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնակարգերի հաստատումը,
32. Իրականացնում է Օրենսգրքով, Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

Խորհուրդն իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Օրենքով ու Կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:

Խորհուրդն իր որոշմամբ իրավասու է ստեղծել խորհրդին կից գործող մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ: Հանձնաժողովները նպատակ ունեն բարելավել խորհրդի գործունեությունը և առանցքային հարցերի վերաբերյալ տրամադրում են ավելի խորը փորձաքննություն: Հանձնաժողովները կարող են կազմված լինել խորհրդի անդամներից և այլ անձանցից, այդ թվում, չսահմանափակելով՝ Ընկերության Գլխավոր տնօրենից, Տնօրինության անդամներից, Ընկերության աշխատակիցներից, այլ փորձագետներից կամ մասնագետներից: Հանձնաժողովները ստեղծվելու են որոշակի ոլորտի հարցերի կարգավորման և լուծման, ինչպես նաև կորդինացման համար՝ խորհրդին խորհրդատվական և մասնագիտական կարծիք տրամադրելու նպատակով:

Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները, խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Ընկերության խորհրդի նախագահը՝

1. Կազմակերպում է խորհրդի աշխատանքները,
2. Գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանցում,
3. Կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,
4. Սահմանում և հաստատում է խորհրդի օրակարգը,

5. Խորհրդում խթանում է բազմազանության և ներառականության մշակույթը,
6. Խրախուսում է խորհրդի բոլոր անդամների ներգրավվածությունը խորհրդի նիստերին՝ հիմնվելով նրանց հմտությունների, փորձի և գիտելիքների վրա,
7. Գործադիր մարմնի ղեկավարի հետ զարգացնում և ամրապնդում է արդյունավետ աշխատանքային հարաբերություններ, հարգելով վերջինիս պատասխանատվության շրջանակները՝ տրամադրում խորհրդատվական աջակցություն,
8. Նախագահում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներում,
9. Կատարում է սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

Ընկերության Խորհրդի նիստերը գումարվում են Ընկերության Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, Խորհրդի անդամի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, արտաքին աուդիտի իրականացնող անձի, Գլխավոր տնօրենի, Տնօրինության պահանջով, նվազագույնը երեք ամիսը մեկ անգամ:

Խորհրդի նիստը իրավազոր է, եթե նիստին մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ Խորհրդի անդամն ունի մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն Ընկերության Խորհրդի մեկ անդամից Խորհրդի մյուս անդամին չի թույլատրվում:

Ընկերության Խորհրդի նիստերին որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Ընկերության Խորհրդի նիստերը գումարվում և անց են կացվում Ընկերության Խորհրդի կանոնակարգին համապատասխան, որը հաստատվում է Ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության Խորհրդի նիստերն արձանագրվում են նիստի ավարտից 5 օրյա ժամկետում:

Նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Խորհրդի անդամները պետք է իրենց լիազորությունները իրականացնեն անձամբ:

Խորհրդի անդամները պետք է գործեն լիարժեք տեղեկացված, բարեխղճորեն, պատշաճ ջանասիրությամբ և ողջամտորեն՝ ելնելով կազմակերպության ու մասնակիցների լավագույն շահերից և հաշվի առնելով կազմակերպության շահակիցների շահերը:

Ցանկացած պահի դրությամբ խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում Ընկերության Կանոնադրությամբ խորհրդին վերապահված բոլոր լիազորություններն իրականացնում է Ընդհանուր Ժողովը:

3.7.2.3 Տնօրինություն

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում են Ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ Գլխավոր տնօրենը և կոլեգիալ գործադիր մարմինը՝ Տնօրինությունը: Գլխավոր տնօրենը հանդիսանում է Տնօրինության անդամ և նախագահ:

Տնօրինությունը և Գլխավոր տնօրենը լուծում են Ընկերության ընթացիկ գործունեության բոլոր հարցերը, բացի Խորհրդի և Ժողովի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից:

Տնօրինությունը կազմավորվում է Գլխավոր տնօրենի և առնվազն 3 անդամի կազմով: Տնօրինության կազմը սահմանում է Գլխավոր տնօրենը: Գլխավոր տնօրենին նշանակում է Խորհուրդը: Տնօրինության մյուս անդամներին նշանակում է Խորհուրդը՝ Գլխավոր տնօրենի ներկայացմամբ:

Տնօրինության նիստերը հրավիրվում են Գլխավոր տնօրենի կամ Տնօրինության անդամներից առնվազն 2-ի նախաձեռնությամբ: Տնօրինության նիստերն իրավագոր են, եթե նիստին մասնակցում են Գլխավոր տնօրենը և անդամների առնվազն կեսը: Տնօրինության կողմից որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Գլխավոր տնօրենի ձայնը որոշիչ է: Տնօրինությունն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով , որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիս մեկ անգամ: Տնօրինության նիստերն արձանագրվում են: Տնօրինության գործունեությունը կանոնակարգող ներքին կարգը հաստատում է Խորհուրդը: Խորհուրդն իրավասու է ցանկացած պահի վաղաժամկետ դադարեցնել Գլխավոր տնօրենի և Տնօրինության անդամների լիազորությունները:

Գլխավոր տնօրենը և Տնօրինությունը պետք է գործ են բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Ընկերության: Նրանք պարտավոր են Ընկերության հիմնադիրների

(բաժնետերերի) պահանջով հասուցել իրենց կողմից Ընկերությանը պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Տնօրինությունը՝

1. Կազմակերպում է Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը, հաշվետու է նրանց,
2. Ընդունում է Ընկերության գույքի օտարման և ձեռք բերման, ինչպես նաև Ընկերության անունից վարկ կամ այլ պարտք ներգրավելու հետ կապված գործարքների կնքման վերաբերյալ որոշումներ, այն դեպքում, երբ գործարքի արժեքը գերազանցում է 50 միլիոն ՀՀ դրամը, բացառությամբ արժեթղթերի և այլ ֆինանսական գործիքների (այդ թվում՝ ռեպո գործարքներ, ածանցյալ ֆինանսական գործարքներ, արտարժույթի փոխանակում) գործարքների: Սույն դրույթը չի տարածվում այն գործարքների վրա, որոնց վերաբերյալ որոշումը օրենքով և Կանոնադրությամբ սահմանված չափանիշներով ենթակա է այլ մարմինների կողմից ընդունման որպես խոշոր, այլ և շահագրգռվածությամբ գործարք,
3. Նախնական հավանություն է տալիս Խորհրդի հաստատմանը ենթակա Ընկերության ներքին իրավական ակտերի նախագծերին, ֆինանսական և այլ հաշվետվություններին,
4. Հաստատում է Ընկերության առօրյա ղեկավարումը պահանջող և ընթացիկ գործունեությունը կարգավորող նկարագրական իրավական ակտերը,
5. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության ղեկավար անձանց և աշխատակիցների գործունեությունը կարգավորող ներքին կանոնները և կանոնակարգերը, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնակարգերը,
6. Հաստատում է Ընկերության կողմից կնքվող հաճախակի օգտագործվող պայմանագրերի օրինակելի ձևերը:

Գլխավոր տնօրենը՝

1. Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, հաշվի առնելով Ընկերության Կանոնադրությամբ սահմանված դրույթները,
2. Ընդունում է Ընկերության գույքի օտարման և ձեռք բերման , ինչպես նաև Ընկերության անունից վարկ կամ այլ պարտք ներգրավելու հետ կապված գործարքների կնքման վերաբերյալ որոշումներ, այն դեպքում, երբ գործարքի արժեքը չի գերազանցում 50 միլիոն ՀՀ դրամը, իսկ արժեթղթերի և այլ ֆինանսական գործիքների (այդ թվում՝ ռեպո գործարքներ, ածանցյալ

ֆինանսական գործարքներ, արտարժույթի փոխանակում) գործարքների դեպքում՝ առանց սահմանափակման: Սույն դրույթը չի տարածվում այն գործարքների վրա, որոնց վերաբերյալ որոշումը օրենքով և Կանոնադրությամբ սահմանված չափանիշներով ենթակա է այլ մարմինների կողմից ընդունման որպես խոշոր, այլ և շահագրգռվածությամբ գործարք,

3. Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
4. Գործում է առանց լիազորագրի,
5. Տալիս է լիազորագրեր,
6. Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
7. Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա բանկերում, ինչպես նաև այլ ֆինանսական կազմակերպություններում բացում է Ընկերության հաշիվներ,
8. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
9. Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին, բացառությամբ ընդհանուր ժողովի կողմից նշանակվող անձանցից,
10. Աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
11. Իր բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում Տնօրինության անդամներից մեկին նշանակում է իր ժամանակավոր պաշտոնակատար,
12. Իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության հետ կապված այլ՝ Տնօրինությանը չվերապահված լիազորություններ,
13. Իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:
Ժողովի որոշմամբ Ընկերության գործադիր մարմնի (ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ) լիազորությունները պայմանագրով կարող են տրվել այլ առևտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի):

3.7.3 Թողարկողի կառավարման մարմինների անդամները

Թողարկողի խորհուրդ

Անուն Ազգանուն	Բնակության վայրը	Զբաղեցրած պաշտոն	Թողարկողի կազմից դուրս գործունեությունը	Փորձառությունը
Արսեն Կատվայան	ք. Երևան	Խորհրդի նախագահ	«ԿՈՒԲ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Խորհրդի անդամ	28 տարի և ավել
Հայկ Սկրուչյան	ք. Երևան	Խորհրդի անդամ	«ԿՈՒԲ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գործադիր տնօրեն	30 տարի և ավել
Ռոբերտ Պետրոսյան	ք. Երևան	Խորհրդի անդամ	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի «Կառավարման և տեխնոլոգիայի» ֆակուլտետի գիտխորհրդի անդամ, «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոնի ասիստենտ	31 տարի և ավել

Ղեկավարներ

Անուն Ազգանուն	Բնակության վայրը	Զբաղեցրած պաշտոն	Թողարկողի կազմից դուրս գործունեությունը	Փորձառությունը
Միքայել Մարգարյան	ք. Երևան	Գլխավոր տնօրեն, Տնօրինության նախագահ	«ԿՈՒԲ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Խորհրդի անդամ	14 տարի և ավել
Արմեն Տեր-Հակոբյան	ք. Երևան	Գանձապետ, Տնօրինության անդամ	«ԿՈՒԲ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Խորհրդի նախագահ	27 տարի և ավել
Կարինե Քոչարյան	ք. Երևան	Արմինիստրատիվ տնօրեն, Տնօրինության անդամ	-	33 տարի և ավել
Շուշան Հարությունյան	ք. Երևան	Գործառնական վարչության պետ, Տնօրինության անդամ	-	27 տարի և ավել
«ՍթեփԱփ»ՍՊԸ՝ Արմեն Ազիզյանի	ք. Երևան	Գլխավոր հաշվապահ	-	12 տարի և ավել

3.7.4 Շահերի բախում

Թողարկողի և Թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց միջև շահերի բախում առկա չէ:

3.7.4 Կառավարման մարմինների գործունեությունը

Թողարկողը հետևում է իր կազմակերպատիրական կառուցվածքին համապատասխանող կորպորատիվ կառավարման սկզբունքներին, մասնավորապես՝ ապահովում է արդյունավետ կորպորատիվ կառավարման միջավայր, իր մասնակիցների իրավունքների իրականացումը և հավասար վերաբերմունք վերջինիս նկատմամբ:

Թողարկողի կորպորատիվ կառավարման ուղեցույցն է հանդիսանում ՀՀ Էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ Կառավարման Կանոնագիրքը, և Թողարկողը հետևում է Կանոնագրքի սկզբունքներին՝ պահպանելով օրենսդրությամբ սահմանված նվազագույն պահանջները:

3.8 Հսկող անձինք

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով Թողարկողի հսկող անձինք են՝

- Արմեն Տեր-Հակոբյանը, ով հանդիսանում է Թողարկողի 50% բաժնետոմսերի սեփականատեր
- Արմինե Նաջարյանը, ով հանդիսանում է Թողարկողի 50% բաժնետոմսերի սեփականատեր

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով Թողարկողի անուղղակի հսկող անձինք են՝

- Արսեն Կատվայանը, ով հանդիսանում է Թողարկողի Խորհրդի նախագահը:

3.9 Ակտիվներ և պարտավորություններ, Ֆինանսական վիճակ

3.9.1 Պատմական ֆինանսական և միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

Թողարկողի 2023և 2024 թ.-ների աուդիտ անցած և 2025թ-ի աուդիտ չանցած տարեկան հաշվետվությունները ներկայացված են սույն Ծրագրային Ազդագրի Հավելված 6-ում, ինչպես նաև հրապարակված են Թողարկողի ինտերնետային կայքում հետևյալ հղմամբ՝

<https://cubeinvest.am/reports> :

3.9.2 Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություններ

Թողարկողի ֆինանսական վիճակի վրա ազդող էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

3.9.3 Դատական, արբիտրաժային և վարչական վարույթներ

Ծրագրային ազդագրի գրանցման նախորդ 12 ամիսների ընթացքում Թողարկողը ներգրավված չի եղել դատական, արբիտրաժային և/կամ վարչական իրավական վարույթների մեջ, որոնք կարող են էական ազդել Թողարկողի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա և/կամ կարող են ունենալ կամ վերջորս ունեցել են էական ազդեցություն:

3.9.4 Էական պայմանագրերը

Ծրագրային Ազդագրի ներկայացման նախորդ մեկ տարվա ընթացքում Թողարկողի կողմից բնականորեն գործունեության շրջանակներից դուրս էական պայմանագրեր չեն կնքվել:

3.10 Մասնագիտական կարծիք

Բացի ֆինանսական աուդիտի ենթարկված և Ծրագրային Ազդագրում ներառված Թողարկողի ֆինանսական հաշվետվություններից, Ազդագրի որևէ մասում չի օգտագործվել հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտացված կարծիք:

3.11 Այլ տեղեկատվություն

Թողարկողի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.cubeinvest.am հասցեով:

ՆԵՐԴՐՈՂԸ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՁԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ:

ԲԱԺԻՆ 4. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (իրավաբանական անձանց համար)

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ թողարկված դրամային (դելարային) արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (իրավաբանական անձանց համար)

Հայտ-հանձնարարականի ներկայացման ամսաթիվը և ժամանակը _____
(օր, ամիս, ժամ, րոպե)

Իրավաբանական անձի անվանումը _____
(Ֆիրմային անվանումը, կազմակերպատիրավական ձև)

Պետոճգիստրի գրանցման տվյալները _____
(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գրանցման վայրի հասցեն _____

ՀՎՀՀ _____

Ռեզիդենտությունը _____

Պարտատոմսերի ձեռքբերման սույն հայտ-հանձնարարականով ցանկություն ենք հայտնում ձեռք բերել «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսեր հետևյալ/ներքոնշյալ պայմաններով՝

Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ _____
քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը _____
գինը թվերով

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը _____
Ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ՀՀ դրամով (ԱՄՆ դոլարով) բանկային հաշվի համարը _____
Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի
անունը _____

Արժեթղթերի հաշվի համարը _____

Սույն հայտ-հանձնարարականով, հավաստում ենք, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ ծանոթացել ենք պարտատոմսերի թողարկման որոշման և Ազդագրի, համաձայն ենք դրանցում նշված պայմաններին և պատրաստակամ ենք ստանձնել «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ թողարկված պարտատոմսերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա մեր և «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ թողարկված պարտատոմսերի՝ մեր կողմից ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Լրացվում է Տեղաբաշխողի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ _____

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր
քանակ _____

քանակը թվերով (տառերով)

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____

(իրավաբանական անձի
ներկայացուցչի կամ լիազորված
անձի անուն, ազգանուն)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները այդ նպատակով բացված հատուկ հաշվեհամարին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են Կուբ Ինվեսթ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար)

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ թողարկված դրամային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի օրինակելի ձև

(ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար)

Հայտ-հանձնարարականի ներկայացման ամսաթիվը և ժամանակը _____
(օր, ամիս, ժամ, րոպե)

Հայտ-հանձնարարական ներկայացնողի անվանումը _____
(անուն, ազգանուն)

Անձը հաստատող փաստաթղթի տվյալները _____
(փաստաթղթի համար)

Անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Գրանցման վայրի հասցեն _____

Ռեզիդենտությունը _____

Պարտատոմսերի ձեռքբերման սույն հայտ-հանձնարարականով ցանկություն ենք հայտնում ձեռք բերել «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսեր հետևյալ/ներքոնշյալ պայմաններով՝

Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ _____
հատ քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը _____
գինը թվերով

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը _____
Ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ԱՄՆ դոլարով բանկային հաշվի համարը _____

Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը _____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի _____
անունը
Արժեթղթերի հաշվի համարը _____

Սույն հայտ-հանձնարարականով, ըստ էության, հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ ծանոթացել եմ պարտատոմսերի թողարկման որոշմանը և Ազդագրին, համաձայն եմ դրանցում նշված պայմաններին և պատրաստական եմ ստանձնել «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ թողարկված պարտատոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերը:

Հաստատում եմ, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Տեղյակ եմ, որ արժեթղթերում կատարվող ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով:

Հաստատում եմ, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա իմ և «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ թողարկված պարտատոմսերի՝ իմ կողմից ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Լրացվում է Տեղաբաշխողի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ _____
Թողարկված պարտատոմսերի ընդհանուր _____
քանակ _____ քանակը թվերով (տառերով)

Ստորագրություն _____
Անուն Ազգանուն _____
(ստորագրող անձի անուն, _____
ազգանուն)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները այդ նպատակով բացված հատուկ հաշվեհամարին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո/Սեփական կապիտալի միջին մեծություն)*100

Ակտիվների շահութաբերություն (ROA) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո/Ընդհանուր ակտիվների միջին մեծություն)*100

Զուտ շահույթի մարժա (NPM)= Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո/Գործառնական եկամուտ

Ակտիվների օգտագործման գործակից (AU) = Գործառնական եկամուտ/Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) = Ընդհանուր ակտիվների միջին մեծություն/Սեփական կապիտալի միջին մեծություն

Զուտ տեկոսային մարժա (NIM)= Զուտ տոկոսային եկամուտ/Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն


Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն = Տոկոսային եկամուտներ/Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր = Տոկոսային ծախսեր/ Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո/Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սպրեդ = (Տոկոսային եկամուտներ/Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն) - (Տոկոսային ծախսեր/Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)

ՀԱՎԵԼՎԱԾ 4: Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը



ՀԱՎԵԼՎԱԾ 5: Թողարկման վերջնական պայմաններ

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել Ծրագրային Ազդագիրը (գրանցված է-- - ----20--թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ազդագիրը, դրա լրացումները գտնվում են «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ում ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10 հասցեում:

<p>Ընդհանուր տեղեկություններ <i>(Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»:</i> Եթե միևնույն սերիայի ներքո փարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթերն են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար փարբերվող պայմանները ներկայացվում են փարանջափված:)</p>		
1	Թողարկողը (թողարկողի անվանումը)	«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ
2	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր
3	Սերիան (տվյալ Ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	
4	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	Ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
5	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Ամենայն մանրամասնությամբ ներկայացված է Ազդագրի 2.3.6 կետում
6	Թողարկման արժույթը	ՀՀ դրամ
7	Առաջարկի գինը	հաշվարկվելու է հետևյալ կերպ՝ $DP = CP + FV * \frac{C_t}{f} * \frac{A}{E}$

		$CP = \frac{FV * (C_t/f) * (1 - (1 + y/f)^{-N})}{(y/f)}$ $* \left(1 + \frac{y}{f}\right)^{1-\tau} + \frac{FV}{(1 + y/f)^N}$ $* \left(1 + \frac{y}{f}\right)^{1-\tau} - FV * \frac{C_t}{f} * \frac{A}{E}$ $\tau = \frac{DSC}{E}$ $C_t = ReferenceRate_t + Spread$ <p>Որտեղ՝</p> <p>FV-պարտատոմսի նվանական արժեքը,</p> <p>DP-պարտատոմսի ամբողջ գինը(ներառված կուտակված տոկոսագումարը),</p> <p>CP- պարտատոմսի մաքուր գինը (առանց կուտակված տոկոսագումարը),</p> <p>C_t-արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը(%),</p> <p>y- տարեկան եկամտաբերությունը(%),</p> <p>f-արժեկտրոնի վճարման պարբերականությունը (1-տարեկան, 2- կիսամյակային, 4- եռամսյակային, 12- ամսական)</p> <p>N-մինչև մարման ժամկետը մնացած արժեկտրոնների քանակը,</p> <p>E-տվյալ փուլի փաստացի տևողությունը օրերով,</p> <p>A-նախորդ արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրը, փաստացի օրերի թիվը, իսկ առաջին արժեկտրոնի վճարման</p>
--	--	--

		<p>դեպում՝ թողարկման օրից մինչև գործարքի կատարման օրը փաստացի օրերի թիվը,</p> <p>DSC - գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարման օրը,</p> <p>ReferenceRate-ուղենիշային տոկոսադրույք (%),</p> <p>Spread- սահմանված տոկոսադրույք (%),</p> <p>Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսի լրիվ գինը յուրաքանչյուր օրվա համար հրապարակվում է Թողարկողի կայքում:</p>
8	Անվանական արժեքը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
9	Քանակը	Համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի, այսինքն Թողարկման ծավալի հարաբերությունը անվանական արժեքին:
10	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
11	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
12	Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
13	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		

14	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	Ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
15	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	Ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
16	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
17	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Act/Act
18	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	Ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
19	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	Ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
20	Զրոյական արժեկտրոնով (գեղջատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21	Մարման ժամկետը	Ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
22	Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100,000 (մեկ հարյուր հազար) << դրամ
23	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	«ոչ կիրառելի»

24	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
	Ժամկետ(ներ)ը	Ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	«ոչ կիրառելի»
	Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	«ոչ կիրառելի»
	Այլ տեղեկություններ	
25	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փոփ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10
27	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն Ազդագրում)	Ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Այլ տեղեկություններ		
28	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրի թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռ չեն թույլատրված կարգավորվող շուկայում առևտրի
29	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:
30	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն

31	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
----	--	---

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար : Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են Ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Արսեն Կատվայան անուն ազգանուն	Խորհրդի նախագահ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Հայկ Մկրտչյան անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Ռոբերտ Պետրոսյան անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Միքայել Մարգարյան անուն ազգանուն	Գլխավոր տնօրեն - Տնօրինության նախագահ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արմեն Տեր- Հակոբյան անուն ազգանուն	Գանձապետ - Տնօրինության անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Կարինե Քոչարյան անուն ազգանուն	Ադմինիստրատիվ տնօրեն - Տնօրինության անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Շուշան Հարությունյան անուն ազգանուն	Գործառնական վարչության պետ - Տնօրինության անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արմեն Ազիզյան	Գլխավոր հաշվապահ		

անուն ազգանուն	պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Ստորագրությունները հավաստում եմ՝			
Միքայել Մարգարյան	Գլխավոր տնօրեն - Տնօրինության նախագահ		
անուն ազգանուն	պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ

ՀԱՎԵԼՎԱԾ 6: Ֆինանսական հաշվետվություններ

«ԿՈՒԲ ԻՆՎԵՍՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ
ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ

Երևան-2026

Հաշվետվություն ֆինանսական արդյունքի մասին

ԱՆՎԱՆՈՒՄ		Հազար ՀՀ դրամ			
		01.01.26- 31.03.26	01.01.26- 31.03.26	01.01.25- 31.03.25	01.01.25- 31.03.25
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	4	1,357,752	1,357,752	1,297,356	1,297,356
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	4	(731,705)	(731,705)	(766,868)	(766,868)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		626,047	626,047	530,488	530,488
Կումիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	5	585,529	585,529	428,834	428,834
Կումիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	5	(261,540)	(261,540)	(280,003)	(280,003)
Մտացված զուտ կումիսիոն և այլ վճարներ		323,989	323,989	148,831	148,831
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	6	1,336,462	1,336,462	1,606,833	1,606,833
Այլ գործառնական եկամուտներ	7	2,488	2,488	95	95
Գործառնական եկամուտներ		2,288,986	2,288,986	2,286,247	2,286,247
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստնորի պահուստներից		(9,455)	(9,455)	(7,472)	(7,472)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(348,219)	(348,219)	(525,980)	(525,980)
Այլ գործառնական ծախսեր	9	(12,499)	(12,499)	(14,485)	(14,483)
Շահույթը (վնասը) մինչև հարկումը		1,918,813	1,918,813	1,738,310	1,738,312
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	10	(266,100)	(266,100)	(314,833)	(314,833)
Ժամանակաշրջանի շահույթ (վնաս)		1,652,713	1,652,713	1,423,477	1,423,479
Այդ թվում՝		-	-	-	-
Մայր կազմակերպության բաժնեմաս		-	-	-	-
Զվերահսկվող բաժնեմաս		-	-	-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-	-	-
Համապարփակ ֆինանսական արդյունք		1,652,713	1,652,713	1,423,477	1,423,479
Այդ թվում՝		-	-	-	-
Մայր կազմակերպության բաժնեմաս		-	-	-	-
Զվերահսկվող բաժնեմաս		-	-	-	-
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	11	20	20	19	19
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուրսացված շահույթ	11	20	20	19	19

Միքայել Մարգարյան
Տնօրինության նախագահ - Գլխավոր տնօրեն

Արմեն Ազիզյան
«ՍթեփԱֆ» ՍՊԸ ներկայացուցիչ



«ԿՈՒԲ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվություններ

Հաշվետվություն ֆինանսական դրության մասին			
Հազար ՀՀ դրամ			
ԱՆՎԱՆՈՒՄ		առ 31.03.2026	առ 31.12.2025
Ակտիվներ			
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	12	10,040,234	12,236,596
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	13	10,092,094	4,039,289
Պահանջներ այլ անձանց նկատմամբ	14	2,900,661	2,038,907
«Իրական արժեքով` շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող» ֆինանսական ակտիվներ	15	42,448,592	71,677,152
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումներ	16	-	-
Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում	17	-	-
Հիմնական միջոցներ	18	233,779	211,603
Հետաձգված հարկային ակտիվներ	10	-	-
Այլ ակտիվներ	19	374,715	20,267
Ընդամենը` ակտիվներ		66,090,075	90,223,814
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	20	22,100,314	58,056,063
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	21	22,431,661	12,451,611
Պարտավորություններ այլ անձանց նկատմամբ	22	126,437	180,071
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	284,175	673,233
Պահուստներ	23	130,767	101,061
Այլ պարտավորություններ	24	727,316	125,083
Ընդամենը` պարտավորություններ		45,800,670	71,587,122
Սեփական կապիտալ	33		
Կանոնադրական կապիտալ		8,400,000	840,000
Էմիսիոն եկամուտ		-	-
Գլխավոր պահուստ		114,000	114,000
Զբաղիված շահույթ (վնաս)		11,775,405	17,682,692
Սեփական կապիտալի այլ տարրեր		-	-
Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ			
Փոքրամասնության բաժնեմաս			
Ընդամենը` սեփական կապիտալ		20,289,405	18,636,692
Ընդամենը` պարտավորություններ և սեփական կապիտալ		66,090,075	90,223,814

Միքայել Մարգարյան
Տնօրինությունից կապիտալի - Գլխավոր տնօրեն



Արմեն Ազիզյան
«ՍթեյվԱփ» ՍՊԸ ներկայացուցիչ

Հաշվետվություն սեփական կապիտալում փոփոխությունների մասին
Հազար ՀՀ դրամ

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Զբաղիված շահույթ/վնաս	Ընդամենը կապիտալ
Նախորդ համադրելի միջանկյալ հաշվետու ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)				
Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2025թ.	760,000	96,479	10,764,026	11,620,505
Բաժնետերերի հետ գործարքներ բաժնետոմսերի գծով, այդ թվում՝	-	-	-	-
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	-	-	-	-
Համապարփակ եկամուտ	-	-	1,423,479	1,423,479
Շահութաբաժիններ	-	-	-	-
Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	-
Մասհանումներ գլխավոր պահուստին	-	-	-	-
Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 31 մարտի 2025թ.	760,000	96,479	12,187,505	13,043,984
Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)				
Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2026թ.	840,000	114,000	17,682,692	18,636,692
Բաժնետերերի հետ գործարքներ բաժնետոմսերի գծով, այդ թվում՝	7,560,000	-	(7,560,000)	-
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	7,560,000	-	(7,560,000)	-
Համապարփակ եկամուտ	-	-	1,652,713	1,652,713
Շահութաբաժիններ	-	-	-	-
Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	-
Մասհանումներ գլխավոր պահուստին	-	-	-	-
Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 31 մարտի 2026թ.	8,400,000	114,000	11,775,405	20,289,405

Միքայել Մարգարյան
Տնօրինության նախագահ, Գլխավոր տնօրեն

Արմեն Ազիզյան
«ՄթեփԱփ» ՍՊԸ ներկայացուցիչ



(Handwritten signature in blue ink)

(Handwritten signature in blue ink)

«ԿՈՒԲ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվություններ

Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին

Հազար ՀՀ դրամ

ԱՆՎԱՆՈՒՄ	01.01.26- 31.03.26	01.01.25- 31.03.25
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
<i>Դրամական միջոցների գուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը</i>		
Ստացված տոկոսներ	459,591	353,809
Վճարված տոկոսներ	(776,928)	(708,747)
Ստացված կոմիսիոն գումարներ	588,833	439,763
Վճարված կոմիսիոն գումարներ	(77,584)	(150,941)
Արժեթղթերի առք ու վաճառքի գործառնություններից գուտ հոսքեր	33,565,460	(1,758,698)
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից գուտ հոսքեր	294,776	343,441
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(255,856)	(365,425)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(228,890)	(156,888)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	33,569,402	(2,003,686)
Փոխատվությունների նվազում (ավելացում)	-	-
Ջուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը	33,569,402	(2,003,686)
Վճարված շահութահարկ	(340,066)	(207,070)
Ջուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	33,229,336	(2,210,756)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Անորտիզացված արժեքով չափվող ներդրումների նվազում (ավելացում)	18,051	377,704
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում / կապիտալացում	(3,159)	(1,802)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	-	-
Ջուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից	14,892	375,902
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Վճարված շահութաբաժիններ	-	-
Ստացված վարկերի և փոխառությունների ավելացում (նվազում)	(35,229,811)	2,829,459
Մասնակիցների ներդրումները կանոնադրական կապիտալում	-	-
Վարձակալության գծով պարտավորության հիմնական մասի վճարում	(8,036)	(10,296)
Ջուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից	(35,237,847)	2,819,163
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(192,013)	(5,119)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ/(նվազում)	(1,993,619)	984,309
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	11,095,234	3,087,690
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	8,909,602	4,066,880

Միքայել Մարգարյան
Տնօրինության նախագահ - Գլխավոր տնօրեն
14 ապրիլի 2026

Արմեն Ազիզյան
«Սթեփ Ափ» ՍՊԸ ներկայացուցիչ



(Handwritten signature)

(Handwritten signature)

1. Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ-ն ստեղծվել է 2017 թվականին: 2017թ. փետրվարի 3-ին Ընկերությունը գրանցվել է ՀՀ ԿԲ-ում որպես ներդրումային ընկերություն և ստացել է իր անունից և իր հաշվին արժեթղթերով գործարքների կատարման թիվ 0013 լինցենզիան: 2022թ.-ին լիցենզիան վերաձևակերպվել է, համաձայն որի Ընկերությունը իրականացնում է նաև ներդրումային ծառայությունների մատուցում: «Կուր Ինվեսթ» ՓԲԸ-ի ղեկավար մարմիններն են բաժնետերերի ընդհանուր ժողովը և գործադիր տնօրենը: Ընկերության ղեկավարության վարձատրության չափը որոշվում է կառավարման համապատասխան մարմնի որոշմամբ: Ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեությունը ենթարկվում է արտաքին աուդիտի:

Կարգավորման միջավայրը

Կարգավորող մարմինները բազմաթիվ ձևերով վերահսկում են Ընկերության գործունեությունը, և կարող են իրականացնել կանոնավոր ստուգումներ՝ կիրառելի օրենսդրության, կանոնակարգերի և կանոնների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով: Այս օրենսդրությունը, կանոնակարգերը և կանոնները կարգավորում են գործունեության տարբեր ասպարեզները, ներառյալ՝ վաճառքի և մարքեթինգային գործունեությունը, թրեյդինգային գործառնությունները, հաճախորդների ակտիվների գծով կիրառվող մոտեցումը, շարունակական մասնագիտական վերապատրաստումը, փողերի լվացման կանխարգելման գործունեությունը, հաճախորդի ճանաչման քաղաքականությունը, հաշվետվությունների և հաշվառման վարումը, ինչպես նաև տնօրենների, ղեկավար և աշխատակիցների վարվելակարգի կանոնները:

Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունը իրականացնում է ՀՀ-ում, հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, կարող է լրացուցիչ բարդություններ ստեղծել Հայաստանում գործող ընկերությունների համար:

Ընկերության ակտիվները հիմնված են ՀՀ-ում: Զարգացող երկրների ֆինանսական շուկաները, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, ավելի շատ են ենթարկվում զանազան ռիսկերի, քան ավելի զարգացած երկրների շուկաները: Ինչպես դիտվել է նախկինում, փաստացի կամ թվայնալ ֆինանսական խնդիրները կամ զարգացող տնտեսությամբ երկրներում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի ներդրումային միջավայրի և նրա տնտեսության ընդհանուր վիճակի վրա: Ընկերության ակտիվների վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ ընդհանուր տնտեսական վիճակը, արժեթղթերի շուկայում, կանոնադրական դաշտում և աշխարհաքաղաքական այլ փոփոխությունները, որոնք բուլդոն էլ դեր ունեն ակտիվների գնահատման, թրեյդինգային գործունեության, տոկոսադրույքների, ներդրողների ընդհանուր տրամադրվածության նկատմամբ, և դուրս են Ընկերության վերահսկողությունից:

Կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են ընթացիկ գործառնական և բիզնես միջավայրի ազդեցությունը Ընկերության գործունեության և ֆինանսական արդյունքների վրա: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատումներից:

Ֆինանսական կազմակերպությունները, որպես կանոն, պետք է ունենան փողերի լվացման կանխարգելման քաղաքականություններ, իրականացնեն աշխատակիցների հատուկ վերապատրաստման դասընթացներ, նշանակեն փողերի լվացման և կանխարգելման համար պատասխանատու աշխատակցի: Ավելին, տվյալների գաղտնիության և պաշտպանության ոլորտում

կանոնակարգային գործառնությունները ողջ աշխարհում շարունակաբար զարգանում են և պայմանավորված են հիմնականում տեխնոլոգիաների զարգացմամբ, և որպես արդյունք՝ տեղեկատվության արագ տարածման հնարավորություններով: Ընկերության հանդեպ կիրառելիության շրջանակներում պետք է ապահովվի համապատասխանություն այդ կանոնակարգային պահանջների հետ:

Ղեկավարության կողմից սահմանվել են քաղաքականություններ և ընթացակարգեր՝ այդ կանոնակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

Ընկերության բաժնետերերն են հանդիսանում Արմեն Տեր-Հակոբյանը և Արմինե Նաջարյանը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրված են 2026թ. ապրիլի 14-ին:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ) պահանջներին համապատասխան:

2.2 Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար Ընկերության կողմից ընդունված չափման հիմունք է հանդիսանում սկզբնական արժեքը, որը սովորաբար համակցվում է այլ չափման հիմունքների հետ: Այլ չափման հիմունքներ կիրառելիս Ընկերությունը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած դեպքերի և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

2.5 Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՄ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

2.6 Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ա) Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես զուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող զուտ օգուտի կամ վնասի տարր:

բ) Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմաց գրավադրված փոխառությունը: Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, այլևս վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը: Երբ միննույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, եթե դասակարգված են որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՄ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- Ամորտիզացված արժեքով հաշվառվող
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը որոշվում է հիմնվելով երկու ստորև բերվածների վրա՝

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդել
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի բնութագրեր

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

ՖՀՄՄ 9 շրջանակներում բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները պետք է հետագայում չափվեն ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով, հիմք ընդունելով կազմակերպության ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը և ֆինանսական ակտիվների դրամական հոսքերի բնութագրերը:

Մասնավորապես՝

- Բիզնես մոդելում առկա պարտքային գործիքները, որոնց նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ , հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

- Բիզնես մոդելում առկա պարտքային գործիքները, որոնց նպատակն է ոչ միայն հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, այլև վաճառել պարտքային գործիքները և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, հետագայում չափվում են իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով;

- Բոլոր այլ պարտքային գործիքները (պարտքային գործիքներ իրական արժեքի հիմունքով կառավարվող կամ վաճառքի համար պահվող) և բաժնային գործիքներում ներդրումները հետագայում չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարտքային գործիքներ՝ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող

Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվի դասակարգումը և չափումը՝ հիմք ընդունելով ակտիվի՝ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հատկանիշները և ակտիվի կառավարման մասով Ընկերության բիզնես մոդելը;

Ամորտիզացված արժեքով դասակարգվող ակտիվների պայմանագրային պայմանները պետք է առաջացնեն դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (ՄՄԳՏՎ):

ՄՄԳՏՎ թեստի նպատակներով, մայր գումար է հանդիսանում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման ժամանակ: Մայր գումարը կարող է փոփոխվել ֆինանսական ակտիվի գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում (եթե առկա են մայր գումարի մարումներ): Տոկոսն իրենից ներկայացնում է հատուցումներ ժամանակի մեջ դրամի արժեքի մասով, որոշակի ժամանակահատվածի ընթացքում չմարված մայր գումարի գծով վարկային ռիսկի և այլ հիմնական վարկային ռիսկերի և ծախսերի, ինչպես նաև շահույթի սահմանաչափի մասով: ՄՄԳՏՎ գնահատումը իրականացվում է այն արժույթով, որով արտահայտվում է ֆինանսական ակտիվը:

Պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, համապատասխանում են հիմնական պարտքային համաձայնությանը: Պայմանագրային պայմանները, որոնք ներկայացնում են պայմանագրով նախատեսված այն դրամական հոսքերի ռիսկերի կամ անկայունության ենթարկվածությունը, որոնք չեն վերաբերվում հիմնական պարտքային համաձայնությանը, ինչպիսիք են բաժնետոմսերի կամ ապրանքների գների փոփոխության ռիսկերի ենթարկվածությունը, չեն առաջացնում պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ: Ստեղծված կամ ձեռք բերված ֆինանսական ակտիվը կարող է հանդիսանալ հիմնական պարտքային համաձայնագիր, անկախ այն բանից, որ այն հանդիսանում է վարկ իր իրավական ձևով:

Ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով բիզնես մոդելի գնահատումն իրականացվում է ՖՀՄՍ 9 սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվի դասակարգումը որոշելու նպատակով: Բիզնես մոդելը կիրառվում է հետադարձ հիմունքներով բոլոր այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք առկա են եղել ՖՀՄՍ 9 սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ: Ընկերությունը որոշում է բիզնես մոդելների մակարդակ, որն արտացոլում է ֆինանսական ակտիվների խմբերի համատեղ կառավարման ձևը հատուկ բիզնես նպատակների իրականացման համար:

Ընկերության բիզնես մոդելը կախված չէ առանձին գործիքի մասով ղեկավարության մտադրություններից, հետևաբար, բիզնես մոդելի գնահատումը իրականացվում է՝ հիմք ընդունելով

ավելի բարձր մակարդակի համախմբման, այլ ոչ անհատապես դիտարկման սկզբունքը: Ընկերությունն ունի մեկ բիզնես մոդել ֆինանսական գործիքների կառավարման մասով, որն արտացոլում է Ընկերության՝ իր ֆինանսական ակտիվների կառավարման մեթոդները դրամական հոսքեր ստեղծելու նպատակով: Ընկերության բիզնես մոդելները որոշում են, արդյոք դրամական միջոցները առաջանում են պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հավաքագրումից, ֆինանսական ակտիվների վաճառքից կամ այս երկու բաղադրիչների կիրառումից:

Բիզնես մոդելի գնահատման ընթացքում Ընկերությունը հաշվի է առնում հասանելի համապատասխան ողջ տեղեկատվությունը: Այնուամենայնիվ, այս գնահատումը չի իրականացվում հիմք ընդունելով այն սցենարները, որոնք Ընկերությունը չի կարող կանխատեսել, այսպես կոչված «վատագույն իրավիճակ» կամ «սթրեսային իրավիճակ» սցենարները: Ընկերությունը հաշվի է առնում հետևյալ հասանելի ողջ տեղեկատվությունը՝

- Ինչպես է գնահատվում և ներկայացվում կազմակերպության առանցքային ղեկավար անձնակազմին բիզնես մոդելի և այդ բիզնես մոդելում առկա ֆինանսական ակտիվների գործունեության արդյունքները,
- Այն ռիսկերը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում առկա ֆինանսական ակտիվների) գործունեության արդյունքների վրա, և մասնավորապես, այդ ռիսկերի կառավարման մոդելները, և
- Ինչպես են բիզնես կառավարիչները վարձատրություն ստանում (արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ակտիվների իրական արժեքի, թե հավաքագրված պայմանագրային դրամական հոսքերի վրա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը որոշում է, արդյոք նոր ճանաչված ֆինանսական ակտիվները հանդիսանում են արդեն առկա բիզնես մոդելի մաս կամ արդյոք արտացոլում են նոր բիզնես մոդելի սկիզբը: Ընկերությունը վերագնահատում է իր բիզնես մոդելները յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում, որոշելու համար, արդյոք բիզնես մոդելները փոփոխություններ են կրել նախորդ ժամանակաշրջանից ի վեր: Ընթացիկ ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը բիզնես մոդելներում փոփոխություններ չի հայտնաբերել:

Այն դեպքում, երբ արտաքին գործիքը, որը չափվում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, ապաճանաչվում է, ապա կուտակային օգուտը/վնասը, նախկինում ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում: Եվ, հակառակը, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային ներդրումային գործիքների կուտակային օգուտը/վնասը, նախկինում ճանաչված համապարփակ ֆինանսական արդյունքում, հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում, այլ տեղաշարժվում է սեփական կապիտալում:

Պարտքային գործիքները, որոնք հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, ենթակա են արժեզրկման:

Վերադասակարգում

Այն դեպքում, երբ բիզնես մոդելը, որի շրջանակներում Ընկերությունը պահում է ֆինանսական ակտիվներ, փոփոխվում է, ապա այդ փոփոխված ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են: Նոր կատեգորիային վերաբերող դասակարգման և չափման պահանջները կիրառվում են հետանկարային հիմունքներով առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրվանից, բիզնես մոդելի փոփոխությունից հետո, ինչը հանգեցրել է Ընկերության ֆինանսական ակտիվների վերադասակարգմանը:

Արժեզրկում

Ակնկալվող վարկային կորուստները (ԱՊԿ) պետք է չափվեն կորուստների գծով պահուստի հաշվառման միջոցով՝ ստորև նշվածների համարժեք գումարի չափով՝

- Ակնկալվող պարտքային կորուստները 12 ամիսների ընթացքում. ակնկալվող կորուստներ վարկի գործողության ողջ ընթացքից ակնկալվող, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի պարտազանցման դեպքերի, և որոնք կարող են տեղի ունենալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 12 ամիսների ընթացքում (ինչպես նշված է փուլ 1-ում), կամ

- Ամբողջական ակնկալվող պարտքային կորուստներ. Ակնկալվող կորուստներ վարկի գործողության ողջ ընթացքում, այսինքն՝ կորուստներ, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի գործողության ընթացքում հնարավոր պարտազանցման դեպքերի (ինչպես նշված է փուլ 2-ում և 3-ում):

Ամբողջական ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի հաշվառում է պահանջվում, եթե այդ ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը զգալիորեն ավելացել է սկզբնական ճանաչումից հետո: Բոլոր այլ ֆինանսական գործիքների համար ԱԿ-ները չափվում են 12-ամսյա ԱԿ-ի չափով:

Ակնկալվող վարկային կորուստները՝ ԱՊԿ-ները վարկային կորուստների ներկա արժեքի՝ հավանականության վրա հիմնված հաշվարկներ են: Դրանք չափվում են Ընկերության պայմանագրային հիմունքներով վճարման ենթակա դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության ներկա արժեքի հիման վրա, որն Ընկերությունն ակնկալում է ստանալ տարբեր տնտեսական սցենարների համեմատության արդյունքում՝ զեղչված ակտիվի արդյունավետ տոկոսադրույքի չափով: Միևնույն տնտեսական ռիսկի հատկանիշներ ունեցող պորտֆելների դեպքում Ընկերությունը ԱՊԿ-ն կչափի հավաքական հիմունքով: Կորուստների գծով պահուստների գնահատումը կհիմնվի ակտիվների ակնկալվող դրամական հոսքերի ներկա արժեքի վրա՝ կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտազանցման սահմանումը

ԱՊԿ-ի սահմանման համար կարևոր է սահմանել պարտազանցումը: Վերջինիս սահմանումը օգտագործվում է ԱՊԿ-ի չափը և կորուստների գծով պահուստները 12-ամսյա կամ ամբողջական ԱՊԿ-ի վրա հիմնված լինելը որոշելու համար, քանի որ դեֆոլտը՝ դեֆոլտի հնարավորության (ԴՀ) բաղադրիչ է, որն ազդում է ԱՊԿ-ի գնահատման, ինչպես նաև վարկային ռիսկի զգալի աճի հայտնաբերման վրա:

Ընկերությունը ստորև նշված հանգամանքների դեպքում արձանագրում է պարտազանցում.

- Երբ փոխառուն ունի ավելի քան 90 օր ժամկետանց ցանկացած էական պարտավորություն Ընկերությանը, կամ
- Հավանական է, որ փոխառուն ամբողջությամբ չի վճարի իր պարտավորությունները

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարտագանցման սահմանումը համապատասխանեցվում է տարբեր տեսակի ակտիվների տարբեր առանձնահատկություններն արտացոլելու նպատակով:

Փոխառուի՝ իր պարտքային պարտավորությունների չկատարման հավանականության գնահատման նպատակով Ընկերությունը հաշվի է առնում միայն քանակական տեղեկատվությունը: Քանակական տեղեկատվությունը ներառում է նույն փոխառուի այլ պարտավորությունների չկատարման կամ վճարի ուշացման մասին տվյալներ, որոնք այս վերլուծության կարևոր մասն են հանդիսանում:

Ընկերությունը վերահսկում է արժեզրկման պահանջներին ենթակա բոլոր ֆինանսական ակտիվները, դրանց սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի հնարավոր աճը գնահատելու նպատակով: Պարտքային ռիսկի նշանակալի աճի դեպքում Ընկերությունը կշափի կորուստների գծով պահուստները՝ հիմնվելով պարտքի գործողության ողջ ընթացքի համար հաշվարկվող ԱՊԿ-ի վրա, այլ ոչ 12-ամսյա ԱՊԿ-ի վրա:

Սկզբնական ճանաչումից ի վեր ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճի գնահատման նպատակով Ընկերությունը համեմատում է հետևյալը՝ ֆինանսական գործիքի դեֆոլտի ռիսկը հաշվետու ամսաթվի դրությամբ՝ հիմնված գործիքի գծով մարման մնացորդային պարտավորության վրա, և ֆինանսական գործիքի տեղի ունեցած դեֆոլտի ռիսկը, որն ակնկալվում էր մնացորդային պարտավորության մարման գծով՝ գործիքի սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ: Այս գնահատումը կատարելիս Ընկերությունը հաշվի կառնի միայն քանակական տեղեկությունները:

Ֆինանսական ակտիվների վերափոխումը և ապաճանաչումը

Ֆինանսական ակտիվների վերափոխումները տեղի են ունենում այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը կառավարող պայմանագրային պայմանները վերանայվում են կամ այլ կերպ փոփոխվում են ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման և մարման ժամկետի միջև: Փոփոխությունը ազդեցություն է ունենում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի գումարի և/կամ ժամկետների վրա անմիջապես կամ ապագայում:

Ֆինանսական ակտիվի փոփոխման դեպքում Ընկերությունը գնահատում է, արդյոք այս փոփոխության արդյունքում առաջանում է ապաճանաչում: Ընկերության քաղաքականության համաձայն, փոփոխությունների արդյունքում առաջանում է ապաճանաչում, երբ այդ փոփոխությունը հանգեցնում է էապես տարբերվող այլ պայմանագրային պայմանների առաջացմանը: Որոշելու համար, արդյոք փոփոխված պայմանները էապես տարբերվում են սկզբնական պայմանագրային պայմաններից, Ընկերությունը հաշվի է առնում հետևյալը՝

- Որակական գործոններ, ինչպիսիք են այն պայմանագրային դրամական հոսքերը, որոնք փոփոխությունից հետո չեն հանդիսանում միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, փոխարժեքի կամ պայմանագրային կողմի փոփոխությունը, տոկոսադրույքների, ժամկետայնության, պայմանագրային դրույթների փոփոխությունը:

Եթե այս փոփոխությունները չեն պարզաբանում էական փոփոխությունները, ապա՝

- Իրականացվում է քանակական գնահատում՝ համեմատելով սկզբնական պայմաններով մնացյալ պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեքը և վերանայված պայմաններով պայմանագրային դրամական հոսքերը: Այդ գումարները զեղջվում են սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Եթե ներկա արժեքի տարբերությունը 10 տոկոսից ավել է, ապա Ընկերությունը որոշում է, որ առկա է պայմանագրի նշանակալի տարբերություն, ինչը հանգեցնում է ապաճանաչման:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ԱՊԿ գծով պահուստները չափվում են ապաճանաչման օրվա դրությամբ՝ ակտիվի գուտ հաշվեկշռային արժեքը այդ օրվա դրությամբ որոշելու նպատակով: Վերանայված հաշվեկշռային արժեքի և նոր պայմաններով նոր ֆինանսական ակտիվի իրական արժեքի միջև տարբերությունը առաջացնում է ապաճանաչման մասով օգուտ կամ վնաս: Նոր ֆինանսական ակտիվը կունենա 12-ամսյա ԱՊԿ-ի հիմունքներով չափվող կորուստների գծով պահուստ, բացառությամբ այն դեպքերի, երբ նոր վարկը կհամարվի արժեզրկված առաջացման պահին: Մա կիրառվում է միայն այն դեպքում, երբ նոր վարկի իրական արժեքը ճանաչվում է իր վերանայված անվանական արժեքի նշանակալի զեղջով, քանի որ դեռ առկա է դեֆոլտի ռիսկը, ինչը

փոփոխությունների արդյունքում չի նվազել: Ընկերությունը վերահսկում է փոփոխված ֆինանսական ակտիվների վարկային ռիսկը՝ գնահատելով որակական և քանակական տեղեկատվությունը (օր.՝ արդյոք փոխառուն ունի ժամկետանց օրեր նոր պայմանների պարագայում):

Երբ ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները փոփոխվում են, ինչը ապաճանաչման չի հանգեցնում, Ընկերությունը որոշում է, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, համեմատելով՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ և սկզբնական պայմանագրային պայմաններով գնահատված ամբողջական
- Փոփոխված պայմանագրային պայմաններով, հաշվետու ամսաթվի դրությամբ ամբողջական ԴՀ-ն:

Ինչ վերաբերում է Ընկերության՝ պարտքային պայմանների վերանայման քաղաքականության շրջանակներում փոփոխված ֆինանսական ակտիվներին, երբ այդ փոփոխության արդյունքում ապաճանաչում չի առաջացել, ապա ԴՀ-ի գնահատումն արտացոլում է Ընկերության կարողությունը հավաքել փոփոխված պայմաններով դրամական միջոցները՝ հիմք ընդունելով Ընկերության նախկին փորձը համաներման նմանատիպ գործընթացների պարագայում, ինչպես նաև տարբեր վարքագծային ցուցանիշներ, որոնք են փոխառուի պարտաճանաչ վճարման կարողությունը փոփոխված պայմանագրային պայմանների շրջանակներում: Եթե վարկային ռիսկը շարունակում է մնալ ավելի բարձր, քան ակնկալվում էր սկզբնական ճանաչման ժամանակ, ապա կորուստների գծով պահուստը կրկին չափվելու է ամբողջական ԱՊԿ-ին համարժեք գումարով: Վերանայված պայմաններով ակտիվների կորուստների գծով պահուստը հիմնականում կչափվի՝ հիմք ընդունելով 12-ամսյա ԱՊԿ, երբ առկա է փոխառուի վճարունակության բարելավման վկայություն, ինչը հանգեցնում է նախկինում վարկային ռիսկի նշանակալի աճի նվազեցմանը:

Այն դեպքում, երբ փոփոխությունների արդյունքում ապաճանաչում չի առաջանում, Ընկերությունը հաշվարկում է այդ փոփոխությունների օգուտը/կորուստը՝ համեմատելով համախառն հաշվեկշռային արժեքը փոփոխությունից առաջ և հետո (բացառությամբ ԱՊԿ գծով պահուստի): Այնուհետև Ընկերությունը գնահատում է ԱՊԿ-ն փոփոխված ակտիվի մասով, երբ փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացած ակնկալվող դրամական հոսքերը ընդգրկվում են սկզբնական ակտիվից ակնկալվող դրամական միջոցների նվազեցման հաշվարկում:

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (ներառյալ էապես տարբեր պայմանագրային պայմանների փոփոխման արդյունքում առաջացած սպառումը) կամ երբ ֆինանսական ակտիվի և վերջինիս սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները փոխանցվում են երրորդ կողմի: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ստացված հատույցի դիմաց գրավադրված փոխառությունը:

Ֆինանսական ակտիվն ամբողջությամբ ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի և ստացված և ստացման ենթակա հատուցումների և կուտակային օգուտի/վնասի գումարի տարբերությունը, որը ճանաչվել էր այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվել սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ բաժնային ներդրումային գործիքների, որոնք դասակարգվել են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, երբ կուտակային օգուտը/վնասը, նախկինում ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվը մասնակի ապաճանաչելիս (օրինակ՝ երբ Ընկերությունը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու օպցիոնը), ապա Ընկերությունը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչվել, և այլևս չճանաչվող մասի միջև՝ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Սա չի կիրառվում բաժնային ներդրումային գործիքների մասով, որոնք դասակարգվել են որպես այլ համապարփակ եկամուտի միջոցով իրական արժեքով չափվող, քանի որ կուտակված օգուտը/վնասը, նախկինում ճանաչված այլ համապարփակ եկամուտում, հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դուրսգրում

Պարտքային գործիքները դուրս են գրվում, երբ Ընկերությունը չունի իրատեսական ակնկալիքներ ֆինանսական ակտիվի վերականգնման մասով (ամբողջական կամ մասնակի): Այս դեպքում Ընկերությունը որոշում է, որ փոխառուն չունի համապատասխան ակտիվներ կամ եկամտի բավարար աղբյուրներ դուրս գրման ենթակա գումարների մարման նպատակով: Դուրսգրումը ներառում է ֆինանսական ակտիվների ապաճանաչում: Ընկերությունը կարող է կիրառել հարկադիր գործողություններ դուրս գրված ֆինանսական ակտիվների մասով: Ընկերության հարկադիր գործունեության արդյունքում հավաքագրված գումարները կառաջացնեն արժեզրկման գծով օգուտ:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ՝

- Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազեցում;

- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների արժեզրկումից կորուստները չեն հաշվանցվում ֆինանսական ակտիվների համապատասխան հաշվեկշռային արժեքների հետ, փոխարենը դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում: Քանի որ այս ակտիվների հաշվեկշռային արժեքներն իրենց իրական արժեքներն են՝ արժեզրկումից առաջացող փոփոխություններն արդեն իսկ ներառված են այդ արժեքների մեջ: Այնուամենայնիվ, կորուստների գծով պահուստները ներառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքների «Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատումներ» հոդվածում:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են կամ որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» կամ «այլ ֆինանսական պարտավորություններ»:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է առևտրական նպատակով կամ դասակարգվում է որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրական նպատակով պահվող, եթե՝

- Այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- Սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ

- Այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը նախատեսված չէ կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք: Ֆինանսական պարտավորությունը, բացի առևտրական նպատակով պահվող ֆինանսական պարտավորություններից կամ պայմանական հատուցումից, որը կարող է վճարվել ձեռք բերողի կողմից որպես բիզնեսի միավորման մաս, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե՝

- Նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ

- Ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ

- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՖՀՄՄ 9 ստանդարտը թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունները սահմանվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են շահույթում կամ վնասում ճանաչվող վերաչափման արդյունքում այն դեպքում, երբ նրանք չեն հանդիսանում հեջային գործիքների մաս: Շահույթում կամ վնասում ճանաչված գուտ օգուտը կամ վնասը ներառում է ցանկացած տոկոս, որը վճարվել է ֆինանսական պարտավորության գծով և ներառում է «իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներից գուտ եկամուտ» տողում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում:

Այնուամենայնիվ, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների մասով, երբ ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունը, որը վերագրելի է այդ պարտավորության վարկային ռիսկի փոփոխությանը, ճանաչվում է այլ համապարփակ եկամուտում, եթե այլ համապարփակ եկամտում ճանաչված պարտավորության վարկային ռիսկի փոփոխության ազդեցության ճանաչումը չի առաջացնում կամ մեծացնում հաշվառման անհամապատասխանությունը շահույթում կամ վնասում: Պարտավորության իրական արժեքի փոփոխության մասով մնացած գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ եկամտում ճանաչված ֆինանսական պարտավորության վարկային ռիսկերին վերագրելի իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, այլ փոխանցվում են չբաշխված շահույթ ֆինանսական պարտավորությունը ապաճանաչելիս:

Այն դեպքում, երբ Ընկերությունը որոշում է, արդյոք այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված պարտավորության վարկային ռիսկերի փոփոխությունների ճանաչումը շահույթում կամ վնասում հաշվառման անհամապատասխանություն է առաջացրել կամ մեծացրել, գնահատում է, արդյոք պարտավորության պարտքային ռիսկերի փոփոխության ազդեցությունը հաշվանցելու է շահույթում կամ վնասում՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող այլ ֆինանսական գործիքի իրական արժեքի փոփոխությամբ պայմանավորված: Այս որոշումը իրականացվում է սկզբնական ճանաչման ժամանակ:

Այլ ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորությունները (այդ թվում՝ վարկերը և փոխառությունները) սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի և տոկոսային ծախսի տեղաբաշխման հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ավելի մանրամասն ներկայացված է «Տոկոսային եկամուտներ և տոկոսային ծախսեր» բաժնում:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Նմանապես, Ընկերությունը հաշվի է առնում գոյություն ունեցող պարտավորության պայմանների կամ դրա մի մասի նշանակալի փոփոխությունը որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում:

Ենթադրվում է, որ պայմանագրային պայմանները զգալիորեն տարբերվում են այն դեպքում, երբ նոր պայմաններով դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը (ներառյալ վճարված գումարները, հանած յուրաքանչյուր վճար, ստացված և զեղչված՝ օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը) առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տոկոսային եկամուտներ և տոկոսային ծախսեր

Ֆինանսական գործիքների մասով տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են «զուտ տոկոսային եկամուտ» որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս» շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն գեղչում է ֆինանսական գործիքների ապագա գնահատված դրամական հոսքերը ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների զուտ հաշվեկշռային արժեքին: Ապագա դրամական հոսքերը գնահատվում են՝ հիմք ընդունելով գործիքի բոլոր պայմանագրային պայմանները:

Վճարներ և կոմիսիոն ծախսեր

Վճարները և կոմիսիոն ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունների կատարմանը համապատասխան:

գ) Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են երկարաժամկետ վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի առանձին մասերի փոխարինման ծախսումները ճանաչվում են այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում, եթե հավանական է, որ այդ մասի մեջ մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Հիմնական միջոցների ընթացիկ սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման ժամանակ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը հաշվարկվում է մաշվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը: Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի համար գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում, քանի որ դա առավելագույնս է արտացոլում ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպասման ակնկալվող եղանակը: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայությունները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են

Համակարգչային տեխնիկա	- 3-5 տարի
Տնտեսական և գրասենյակային գույք	- 8 տարի
Այլ հիմնական միջոցներ	- 8 տարի

դ) Ոչ նյութական ակտիվներ

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները: Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ դրանք ավելացնում են այն կոնկրետ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները, որին դրանք վերաբերում են:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բոլոր մնացած հետագա ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարման ժամանակ: Ամորտիզացիան հաշվարկվում է ամորտիզացվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային

հիմունքով՝ ոչ նյութական ակտիվների գնահատված ամորտիզացիոն ժամկետների ընթացքում:

ե) Վարձակալություն

Ընկերությունը որպես վարձակալ վարձակալության պայմանագրի սկզբնական ճանաչման պահին ճանաչում է ակտիվի օգտագործման իրավունք և վարձակալական պարտավորություն, բացառությամբ ցածրարժեք և կարճաժամկետ վարձակալությունների՝ ՖՀՄՍ 16-ով նախատեսված բացառությունների:

Սկզբնական ճանաչումը

Սկզբնական ճանաչման ամսաթվին Ընկերությունը չափում է ակտիվի օգտագործման իրավունքը սկզբնական արժեքով, որը ներառում է հետևյալ տարրերը.

- վարձակալական պարտավորության սկզբնական ճանաչման արժեքը,
- ճանաչման ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձակալական վճարները, հանած վարձակալության գծով ստացված խրախուսող պայմանների ազդեցությունը,
- կրած սկզբնական ուղղակի ծախսումները,
- վարձակալած ակտիվի ազատման, վերականգման կամ ապամոնտաժման ծախսերի գնահատականը:

Սկզբնական ճանաչման ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալական պարտավորությունը՝ որպես այդ ամսաթվի դրությամբ վճարման ենթակա վարձակալական վճարների ներկա արժեք: Վարձակալական վճարները զեղչվում են վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, եթե այն հնարավոր է որոշել Ընկերությունը զեղչման համար օգտագործում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո վարձակալը չափում է ակտիվի օգտագործման իրավունքը սկզբնական արժեքով՝

- հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը
- ճշգրտված վարձակալական պարտավորության վերաչափումով:

Ակտիվի օգտագործման իրավունքի մաշվածության հաշվարկի համար հիմք է հանդիսանում հիմնական միջոցների մաշվածության Ընկերությունը քաղաքականությունը: Սկզբնական ճանաչումից հետո Ընկերությունը վերաչափում է վարձակալական պարտավորությունը՝

- մեծացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալական պարտավորության նկատմամբ հաշվեզրվող տոկոսը
- փոքրացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վճարած վարձակալական
- վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալության պայմանագրի վերաչափումները կամ փոփոխությունները

զ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են պահանջները բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

ե) Մեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով: Շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ը) Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուղվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի բիզնեսի միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Ընկերությունը ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է գուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

թ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

ժ) Աշխատակիցների հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվառման ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, Ընկերությունը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ ստանդարտներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, ՀՀՄՍ 2 «Պաշարներ» և ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտները):

Ընկերությունը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ. և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

ի) Հասույթ գնորդների հետ պայմանագրերից

Այս ստանդարտը առաջին անգամ քննարկման է դրվել 2008թ.-ին: Վերջնական տարբերակը թողարկվել է 2014թ. մայիսին: ՖՀՄՍ 15. «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» ստանդարտի էական սկզբունքն այն է, որ Ընկերությունը պետք է հասույթը ճանաչի այն գումարով, որով որ Ընկերությունը պատկերացնում կամ ակնկալում է, որ հաճախորդներին, ըստ պայմանագրի, տրված ապրանքների կամ մատուցված ծառայությունների գումարները կստացվեն կամ կհավաքվեն Ընկերության կողմից:

Ստանդարտը տալիս է պարզ, սկզբունքների վրա հիմնված հինգ քայլ պարունակող մոդել, որը կիրառվելու է հաճախորդների հետ բոլոր պայմանագրերի հաշվառման նպատակով:

Ստանդարտի հիմնական սկզբունքը ներկայացված է հինգ քայլ ներառող մոդելում՝

Քայլ 1. նույնացնել գնորդի հետ պայմանագիրը,

Քայլ 2. նույնացնել կատարման ենթակա պարտավորությունները,

Քայլ 3. նույնացնել գործարքի գինը,

Քայլ 4. բաշխել գործարքի գինը կատարման ենթակա պարտավորություններին,

Քայլ 5. ճանաչել հասույթը, երբ ընկերությունը կատարում է կատարողական

լ) Պայմանականություններ

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ գույակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև միջազգային տնտեսական ճգնաժամը:

Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ:

Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Ընկերության վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն:

Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել: Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

Ծանոթագրություն 3. Ֆինանսական ռիսկի ուսումնասիրություն

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ֆինանսական ռիսկերին Կազմակերպության ենթարկվածության վերաբերյալ:

Պարտքային ռիսկ – ակնկալվող պարտքային կորստների գումարները

Արժեզրկման գնահատման համար օգտագործվող էլակետային տվյալներ, ենթադրություններ և մեթոդ

Տես հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ Ծանոթագրություն 2.6 (բ):

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Որոշելու համար, թե արդյոք ֆինանսական գործիքի գծով պարտագանցման ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, Կազմակերպությունը դիտարկում է ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Կազմակերպության անցյալ ժամանակաշրջանների փորձի, վարկային որակի փորձագետների գնահատման և ապագայամետ տեղեկատվության վրա հիմնված վերլուծությունը:

Կազմակերպությունն օգտագործում է երեք չափանիշ, որոշելու համար, թե արդյոք տեղի է ունցել պարտքային ռիսկի նշանակալի աճ.

- քանակական թեստ՝ հիմք ընդունելով պարտագանցման հավանականության փոփոխությունը, որը գնահատվել է էլնելով «S&P» and «Moody's» վարկանիշային գործակալությունների վարկանիշների միգրացիայի մատրիցներից,
- որակական ցուցանիշներ և
- ժամկետանցության 30-օրյա սահմանափակիչ տրված փոխառությունների համար և 5-օրյա սահմանափակիչ այլ ֆինանսական գործիքների, այդ թվում՝ դրամական միջոցների և դրանց համարժեքների համար:

Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակներ

Կազմակերպությունը պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական ակտիվին տալիս է պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ տարբեր տվյալների հիման վրա, որոնք օգտագործվում են պարտազանցման ռիսկը կանխատեսելու համար, և կիրառելով պարտքային ռիսկի վերաբերյալ փորձագետների դատողությունները: Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակները սահմանվում են որակական և քանակական գործոնների հիման վրա, որոնք վկայում են պարտազանցման ռիսկի մասին և համընկնում են «S&P» and «Moody's» վարկանիշային գործակալությունների կողմից հրապարակված վարկանշավորման մակարդակներին: Այս գործոնները տարբեր են՝ կախված պարտքային ռիսկին ենթարկվող գործիքի բնույթից և փոխառուի տեսակից:

Պարտքային ռիսկին ենթարկվող յուրաքանչյուր գործիք ստանում է պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ սկզբնական ճանաչման պահին՝ փոխառուի վերաբերյալ առկա տեղեկատվության հիման վրա: Պարտքային ռիսկին ենթարկվող գործիքները կանոնավոր կերպով հսկվում են, որի արդյունքում գործիքի պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակը կարող է փոփոխվել:

Հսկողության համար որպես կանոն օգտագործվում է հետևյալ տեղեկատվությունը.

- Հաճախորդի փաստաթղթերի, օրինակ՝ առդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների, կառավարչական հաշվետվությունների, բյուջեների և կանխատեսումների պարբերական ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը: Ցուցանիշները, որոնց հատուկ ուշադրություն է դարձվում, ներառում են՝ համախառն շահույթը, ֆինանսական լծակավորման ցուցանիշը, պարտքի սպասարկման գործակիցը, համապատասխանությունը կովենանտներին, կառավարման որակը, վերադաս դեկավար անձնակազմի փոփոխությունները,

- Վարկանիշային գործակալությունների, մամուլի հոդվածների տվյալները, արտաքին վարկանիշների փոփոխությունների մասին տեղեկատվությունը,

- Վարկային պայմանագրի պայմանների վերանայման դիմումը և դիմումի բավարարումը,

- Փոխառուի քաղաքական, օրենսդրական և տեխնոլոգիական միջավայրի կամ նրա գործունեության փաստացի և ակնկալվող նշանակալի փոփոխությունները:

Պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքի ստեղծում Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ օգտագործվում են որպես հիմնական ելակետային տվյալներ պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների գծով պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքը ստեղծելիս:

Կազմակերպությունը հավաքում է պարտքային ռիսկին ենթարկվող իր ֆինանսական գործիքների կատարողականի և պարտազանցման վերաբերյալ տեղեկատվություն, որը վերլուծվում է ըստ ծառայության և փոխառուի տեսակի, ինչպես նաև ըստ պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակի:

Կազմակերպությունը սահմանում է պարտազանցման հավանականության նվազագույն չափը, որը հավասար է այն երկրի վարկանշավորման մակարդակին, որտեղ իր գործունեությունն է իրականացնում փոխառուն: Պետական պարտատոմսերի գծով պարտազանցման հավանականության չափը համապատասխանում է երկրի վարկանշավորման մակարդակին:

Պարտքային ռիսկի նշանակալի աճի որոշում

Ցուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր:

Պարտքային ռիսկի աճի նշանակալի լինելը որոշելիս դիտարկվում են ֆինանսական գործիքի և փոխառուի բնութագրերը և աշխարհագրական տարածաշրջանը:

Որպես ընդհանուր ցուցանիշ համարվում է, որ տեղի է ունեցել պարտքային ռիսկին ենթարկվող գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, եթե Կազմակերպության մոդելավորման քանակական և որակական մեթոդների հիման վրա որոշվում է հետևյալը.

- Փոխառուի պարտքային ռիսկի մակարդակը վատթարացել է 2 նիշով սկզբնական ճանաչումից ի վեր:
- Փոխառուն ունի ավելի քան 30 օր ժամկետանց պարտավորություն փոխառությունների գծով և 5-օրյա ժամկետանց պարտավորություն այլ ֆինանսական գործիքների, այդ թվում՝ դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով:
- Փոխառության պայմանների վերանայում փոխառուի անվճարունակության պատճառով, որը չի հանգեցնում պարտազանցման:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

• Ղեկավարության հայեցողությունը, որը հիմնված է ստանդարտ մշտադիտարկման գործընթացի ընթացքում և այլ աղբյուրներից հաճախորդի վերաբերյալ ստացված որակական տեղեկատվության վրա (մասնավորապես, ընդգրկվածություն հատուկ հսկողության ներքո գտնվող ցանկում, ֆինանսական գործունեության հետ կապված անբարենպաստ մակրոտնտեսական գործոններ և այլն):

Կազմակերպությունը պարտքային ռիսկի նշանակալի աճի մասին վկայող սահմանափակիչ է համարում ակտիվի ավելի քան 30 օր ժամկետանցությունը փոխառությունների դեպքում և 5 օր ժամկետանցությունը այլ ֆինանսական գործիքների, այդ թվում՝ դրամական միջոցների և դրանց համարժեքների դեպքում: Ժամկետանց օրերի քանակը որոշվում է հաշվելով օրերն այն առաջին օրվանից, երբ վճարումն ամբողջությամբ չի ստացվել: Վճարում կատարելու ամսաթվերը որոշվում են առանց հաշվի առնելու արտոնյալ ժամանակահատվածը, որը կարող է տրամադրվել փոխառուին:

Եթե գոյություն ունի վկայություն, որ այլևս չկա պարտքային ռիսկի նշանակալի աճ ի համեմատություն սկզբնական

ճանաչման, գործիքի գծով կորստի պահուստը կրկին չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների չափով:

Կազմակերպությունը վերահսկում է պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար կիրառվող չափանիշների արդյունավետությունը կանոնավոր ստուգումների միջոցով՝ հավաստիանալու համար, որ.

• չափանիշները հնարավորություն են տալիս որոշելու պարտքային ռիսկի նշանակալի աճը նախքան պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքի գծով պարտազանցումը,

• չափանիշները չեն համապատասխանում ժամանակի այն պահին, երբ ակտիվը դառնում են ավելի քան 30 օր ժամկետանց,

• պարտքային ռիսկի նշանակալի աճ և պարտազանցում հայտնաբերելու միջև միջին ժամկետը ողջամիտ է համարվում,

• պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքները որպես կանոն ուղղակիորեն չեն փոխանցվում այն պորտֆելից, որի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորստներին չափով, պարտքային առումով արժեզրկված ֆինանսական գործիքների պորտֆել և

• չի դիտվում կորստի պահուստի չհիմնավորված փոփոխականություն, երբ պորտֆելից, որի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորստներին չափով (1-ին փուլ), գործիքը փոխանցվում է պորտֆել, որի գծով պահուստը չափվում է ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում (2-րդ փուլ):

Պարտազանցման սահմանում

Կազմակերպությունը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե՝

• հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի Կազմակերպության նկատմամբ ստանձնած իր վարկային պարտավորությունները, եթե Կազմակերպությունը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (առկայության դեպքում),

• Կազմակերպության նկատմամբ փոխառուի նշանակալի վարկային պարտավորություններից որևէ մեկն ավելի քան 90 օր ժամկետանց է, կամ

• հավանական է դառնում, որ ակտիվի պայմանները կվերանայվեն փոխառուի սնանկության արդյունքում՝ վարկային պարտավորությունները կատարելու փոխառուի անկարողության պատճառով:

Փոխառուի հետ կապված պարտազանցման տեղի ունենալը գնահատելիս՝ Կազմակերպությունը դիտարկում է հետևյալը՝

• որակական ցուցանիշները, օրինակ՝ կովենանտների խախտումը,

• քանակական ցուցանիշները, օրինակ՝ նույն թողարկողի կողմից Կազմակերպության նկատմամբ այլ պարտավորության ժամկետանց կարգավիճակը և չկատարումը և

• Կազմակերպության ներսում մշակված և արտաքին աղբյուրներից ստացված տվյալները:

Ելակետային տվյալները, որոնք օգտագործվում են ֆինանսական գործիքի գծով պարտազանցման տեղի ունենալը գնահատելու համար, և դրանց նշանակալիությունը կարող են փոփոխվել ժամանակի ընթացքում՝ հանգամանքների փոփոխություններն արտացոլելու համար:

Ապագայամետ տեղեկատվության ներառում

Ղեկավարության գնահատմամբ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու ազդեցությունն էական չէ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փոփոխված ֆինանսական ակտիվներ

Վարկի պայմանագրային պայմանները կարող են փոփոխվել մի շարք պատճառներից ելնելով, ներառյալ շուկայական պայմանների փոփոխությունը, հաճախորդների պահպանումը և այլ գործոնները, որոնք կապված չեն հաճախորդի վճարունակության ներկայիս կամ հնարավոր վատթարացման հետ: Գոյություն ունեցող վարկը, որի պայմանները փոփոխվել են, կարող է ապաճանաչվել, և վերաբանակցված վարկը կարող է ճանաչվել որպես նոր վարկ իրական արժեքով՝ Ծանոթագրություն 2.6 (բ)-ում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, և փոփոխությունը չի հանգեցնում ապաճանաչման, որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ, համեմատվում են՝

- պարտազանցման հավանականությունը ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում հաշվետու ամսաթվի դրությամբ՝ ելնելով փոփոխված պայմաններից,
- պարտազանցման հավանականությունը ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում, որը

գնահատվում է սկզբնական ճանաչման պահին առկա տվյալների և սկզբնական պայմանագրային պայմանների հիման վրա: Եթե փոփոխությունը հանգեցնում է ապաճանաչման, ճանաչվում է նոր վարկ և դասվում 1-ին փուլին (ենթադրելով, որ այն պարտքային առումով արժեզրկված չէ այդ պահին):

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս որպես առանցքային ելակետային տվյալներ հանդես են գալիս հետևյալ փոփոխականների ժամկետային կառուցվածքները.

- պարտազանցման հավանականությունը,
- կորուստը պարտազանցման դեպքում,
- պարտքի գումարը պարտազանցման պահին:

1-ին փուլի գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են բազմապատկելով 12-ամսյա պարտազանցման հավանականությունը պարտազանցման դեպքում առաջացող կորստի գումարով և պարտքի գումարով պարտազանցման պահին:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են բազմապատկելով ամբողջ ժամկետի համար պարտազանցման հավանականությունը պարտազանցման դեպքում առաջացող կորստի գումարով և պարտքի գումարով պարտազանցման պահին:

Պարտազանցման հավանականության գնահատման մեթոդաբանությունը ներկայացված է վերը՝ «Պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքի ստեղծում» բաժնում:

Կազմակերպությունը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը գնահատում է հիմք ընդունելով «S&P» and «Moody's» վարկանիշային գործակալությունների կողմից հրապարակված տեղեկատվությունը:

Պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է պարտքի ակնկալվող գումարը պարտազանցման դեպքում:

Կազմակերպությունը պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկում է հիմք ընդունելով պայմանագրային կողմի պարտքի ընթացիկ գումարը և պայմանագրով թույլատրվող և մաշվածության արդյունքում այդ գումարի հնարավոր փոփոխությունները: Ֆինանսական ակտիվի համար պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է վերջինիս համախառն հաշվեկշռային արժեքը պարտազանցման պահին: Ֆինանսական երաշխավորությունների համար պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է ֆինանսական երաշխավորության կատարման պահին վճարման ենթակա գումարը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես նշված է վերը և պայմանով, որ 1-ին փուլի ֆինանսական ակտիվների համար առավելագույնս կօգտագործվի պարտազանցման հավանականության 12-ամսյա ցուցանիշը, Կազմակերպությունն ակնկալվող պարտքային կորուստները չսպիտակ է հաշվի առնելով պարտազանցման ռիսկն այն առավելագույն պայմանագրային ժամանակահատվածում (ներառյալ փոխառուի երկարաձգման բոլոր հնարավորությունները), որի ընթացքում այն ենթարկվում է պարտքային ռիսկին, եթե նույնիսկ Կազմակերպությունը դիտարկում է ավելի երկար ժամանակահատված պարտքային ռիսկի կառավարման նպատակների համար:

Առավելագույն պայմանագրային ժամանակահատվածը տևում է մինչև այն ամսաթիվը, երբ Կազմակերպությունն իրավունք ունի պահանջել փոխատվության մարումը կամ դադարեցնել երաշխավորությունը:

Այն պորտֆելների համար, որոնց վերաբերյալ Կազմակերպությունն ունի անցյալ ժամանակաշրջանների սահմանափակ տվյալներ, ներքին աղբյուրներից հասանելի տեղեկատվությունը լրացնելու համար օգտագործվում է արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվությունը:

Ծանոթագրություն 4. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	01.01.26-31.03.26	01.01.26-31.03.26	01.01.25-31.03.25	01.01.25-31.03.25
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	192,326	192,326	53,261	53,261
Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	1,067,374	1,067,374	1,224,892	1,224,892
Տոկոսային եկամուտներ հակադարձ ռեպո գործարքներից	-	-	13,674	13,674
Տոկոսային եկամուտներ փոխառություններից	82,448	82,448	-	-
Տոկոսային եկամուտներ ածանցյալ գործիքներից	15,604	15,604	5,529	5,529
Ընդամենը	1,357,752	1,357,752	1,297,356	1,297,356

Տոկոսային և նմանատիպ ծախսեր	01.01.26-31.03.26	01.01.26-31.03.26	01.01.25-31.03.25	01.01.25-31.03.25
Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց	(28,849)	(28,849)	(13,493)	(13,493)
Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով	(692,343)	(692,343)	(750,465)	(750,465)
Վարձակալության գծով պարտավորությունների տոկոսային ծախսեր	(1,207)	(1,207)	(2,365)	(2,365)
Տոկոսային ծախսեր ածանցյալ գործիքներից	(9,306)	(9,306)	(545)	(545)
Ընդամենը	(731,705)	(731,705)	(766,868)	(766,868)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	626,047	626,047	530,488	530,488

Ծանոթագրություն 5. Կումիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Կումիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	01.01.26-31.03.26	01.01.26-31.03.26	01.01.25-31.03.25	01.01.25-31.03.25
Արժեթղթերով գործարքների միջնորդավճարներից	171,033	171,033	225,058	225,058
Խոլորիչներով և ստանդարտիզացված առաջադրություններով գծով	-	-	39,430	39,430
Պահառության գործունեությունից	352,978	352,978	164,346	164,346
Հավատարմագրային կառավարումից	17,418	17,418	1,933	1,933
Շուկա ստեղծողի ծառայություններից	6,822	6,822	4,015	4,015
Տեղաբաշխումից եկամուտներ	37,278	37,278	-	-
Ընդամենը	585,529	585,529	428,834	428,834

Կումիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	01.01.26-31.03.26	01.01.26-31.03.26	01.01.25-31.03.25	01.01.25-31.03.25
Միջնորդավճարների գծով ծախս	(261,540)	(261,540)	(280,003)	(280,003)
Ընդամենը	(261,540)	(261,540)	(280,003)	(280,003)
Զուտ կումիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	323,989	323,989	148,831	148,831

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանոթագրություն 6. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող» ներդրումներից զուտ եկամուտներ	01.01.26-31.03.26	01.01.26-31.03.26	01.01.25-31.03.25	01.01.25-31.03.25
Իրական արժեքի փոփոխություններից զուտ եկամուտ	802,245	802,245	702,563	702,563
Առք ու վաճառքից զուտ եկամուտ	110,770	110,770	555,366	555,366
«Ամորտիզացված արժեքով» հաշվառվող ներդրումներից զուտ եկամուտներ				
Առք ու վաճառքից զուտ եկամուտ	-	-	-	-
Արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտներ				
Վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	128,671	128,671	5,463	5,463
Առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	294,776	294,776	343,441	343,441
Ընդամենը	1,336,462	1,336,462	1,606,833	1,606,833

Ծանոթագրություն 7. Այլ գործառնական եկամուտ

Այլ գործառնական եկամուտ	01.01.26-31.03.26	01.01.26-31.03.26	01.01.25-31.03.25	01.01.25-31.03.25
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	-	-	-	-
Այլ եկամուտներ	2,488	2,488	95	95
Ընդամենը	2,488	2,488	95	95

Ծանոթագրություն 8. Ընդհանուր վարչական ծախսեր

Ընդհանուր վարչական ծախսեր	01.01.26-31.03.26	01.01.26-31.03.26	01.01.25-31.03.25	01.01.25-31.03.25
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	(235,844)	(235,844)	(447,428)	(447,428)
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(19,560)	(19,560)	(14,550)	(14,550)
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	(16,143)	(16,143)	(12,889)	(12,889)
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	(3,101)	(3,101)	(6,147)	(6,147)
Հիմնական միջոցներ տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(724)	(724)	(4,824)	(4,824)
Կազմակերպության շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալություն	(7,172)	(7,172)	(2,700)	(2,700)
Գովազդ և ներկայացուցչական ծախսեր	(17,478)	(17,478)	(16,655)	(16,655)
Գործուղման և ուսուցման գծով ծախսեր	(5,157)	(5,157)	(3,693)	(3,693)
Զփոխհատուցվող հարկեր և տուրքեր	(5,142)	(5,142)	(4,747)	(4,747)
Անդամավճարներ	(6,786)	(6,786)	(4,312)	(4,312)
Այլ վարչական ծախսեր	(31,112)	(31,112)	(8,035)	(8,035)
Ընդամենը	(348,219)	(348,219)	(525,980)	(525,980)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանոթագրություն 9. Այլ գործառնական ծախսեր

Այլ գործառնական ծախսեր	01.01.26- 31.03.26	01.01.26- 31.03.26	01.01.25- 31.03.25	01.01.25- 31.03.25
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	(12,499)	(12,499)	(13,976)	(13,976)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	-	-	-	-
Այլ ծախսեր	-	-	(509)	(507)
Ընդամենը	(12,499)	(12,499)	(14,485)	(14,483)

Ծանոթագրություն 10. Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

Շահութահարկի գծով ծախս	01.01.26- 31.03.26	01.01.26- 31.03.26	01.01.25- 31.03.25	01.01.25- 31.03.25
Ընթացիկ հարկի գծով ծախս (փոխհատուցում)	(655,158)	(655,158)	(239,831)	(239,831)
Հետաձգված հարկի գծով ծախս (փոխհատուցում)	389,058	389,058	(75,002)	(75,002)
Ընդամենը	(266,100)	(266,100)	(314,833)	(314,833)

Շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	01.01.26- 31.03.26	Արդյունավետ դրույքաչափ %	01.01.25- 31.03.25	Արդյունավետ դրույքաչափ %
Շահույթը (վնասը) մինչև հարկումը	1,918,813		1,738,312	
Շահութահարկ դրույքաչափով	(345,386)	(18.00)	(312,896)	(18.00)
Չհարկվող եկամուտներ / (ծախսեր)	79,286	4.13	(1,937)	(0.11)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(266,100)	(13.87)	(314,833)	(18.11)

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը.

	Մնացորդն առ 31.12.2025 դրությամբ	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդն առ 31.03.2026 դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝	31,886	-	5,601	37,487
Հիմնական միջոցների գծով	-	-	-	-
Վարձակալական պարտավորությունների գծով	7,088	-	(1,447)	5,641
ՖՀՄՍ 9 համաձայն ճանաչված ակտիվների պահուստի գծով	6,607	-	1,701	8,308
ԻԱ/ՇՎ հաշվառվող ֆին. ակտիվների վերաչափման գծով	-	-	-	-
Արձակուրդային պահուստների գծով	18,191	-	5,347	23,538
Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝	(705,119)	-	383,457	(321,662)
Հիմնական միջոցների գծով	(311)	-	-	(311)
ԻԱ/ՇՎ հաշվառվող ֆին. ակտիվների վերաչափման գծով	(696,331)	-	381,624	(314,707)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների գծով	(8,477)	-	1,833	(6,644)
Չուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	(673,233)	-	389,058	(284,175)
Հարկային վնասի գծով	-	-	-	-
Ընդամենը Չուտ հետաձգված հարկային ակտիվի/(պարտավորության) շարժը	(673,233)	-	389,058	(284,175)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանոթագրություն 11. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

Սույն ծանոթագրությունում բացահայտված է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի հաշվարկման (հաշվարկման բանաձևերում որպես համարիչ և հայտարար օգտագործվող գումարների) վերաբերյալ տեղեկատվությունը:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	01.01.26-31.03.26	01.01.26-31.03.26	01.01.25-31.03.25	01.01.25-31.03.25
Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթ (վնաս) հարկումից հետո	1,652,713	1,652,713	1,423,477	1,423,479
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթ (վնաս)	1,652,713	1,652,713	1,423,477	1,423,479
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	84,000	84,000	76,000	76,000
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)	19.68	19.68	18.73	18.73
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուսրացված շահույթ (վնաս)	19.68	19.68	18.73	18.73

Ծանոթագրություն 12. Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	առ 31.03.2026	առ 31.12.2025
Ընթացիկ հաշիվներ		
ՀՀ բանկերում և ֆինանսական կազմակերպություններում	6,764,727	9,796,700
Օտարերկրյա բանկերում և ֆինանսական կազմակերպություններում	2,144,875	1,298,534
Հնարավոր կորուստների պահուստ	(17,819)	(22,190)
Ընդամենը	8,891,783	11,073,044
Ավանդներ, տրամադրված փոխառություններ և այլ պահանջներ		
Ավանդներ	1,109,205	1,127,256
Ռեպո (հետգնման համաձայնագիր)	-	-
Հաշվեգրված տոկոսներ	41,548	38,628
Հնարավոր կորուստների պահուստ	(2,302)	(2,332)
Ընդամենը	1,148,451	1,163,552
Զուտ պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,040,234	12,236,596

Սույն հաշվետվություններում ներկայացված դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով օգտագործման որևէ սահմանափակում առկա չէ:

Ծանոթագրություն 13. Պահանջներ հաճախորդների նկատմամբ

Պահանջներ հաճախորդների նկատմամբ	առ 31.03.2026	առ 31.12.2025
Արժեթղթերի պահառության գծով ստացվելիք գումարներ	42,704	57,729
Բրոքերային գործարքների գծով ստացվելիք գումարներ	2,557	2,487
Արժեթղթերի վաճառքների գծով ստացվելիք գումարներ	6,063,425	3,863,315
Արտարժույթի փոխարկումների գծով ստացվելիք գումարներ	4,003,633	121,509
Խորհրդատվական ծառայությունների գծով ստացվելիք գումարներ	-	-
Այլ	-	2,344
Հնարավոր կորուստների պահուստ	(20,225)	(8,095)
Ընդամենը գուտ պահանջներ	10,092,094	4,039,289

Հաշվետու և նախորդ հաշվետու ժամանակաշրջանների վերջում Ընկերությունը ժամկետանց և խնդրահարույց տրամադրած փոխառություններ չի ունեցել:

Ընկերությունը չունի նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացված ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում ստացված և տեղաբաշխված միջոցներ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաճախորդների նկատմամբ պահանջների աշխարհագրական վերլուծություն

Հաճախորդների նկատմամբ պահանջների վերլուծությունն ըստ ռեզիդենտության	առ 31.03.2026	%	առ 31.12.2025	%
Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներ	3,735,877	-	430,871	-
Այլ երկրների ռեզիդենտներ	6,356,217		3,608,418	
Ընդամենը	10,092,094	-	4,039,289	-

Ծանոթագրություն 14. Պահանջներ այլ անձանց նկատմամբ

	առ 31.03.2026	առ 31.12.2025
Տրամադրված փոխառություններ կապակցված կողմերին	-	-
Տրամադրված փոխառություններ երրորդ կողմերին	2,906,474	2,042,993
Հնարավոր կորուստների պահուստ	(5,813)	(4,086)
Ընդամենը	2,900,661	2,038,907

Ծանոթագրություն 15. «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող» ֆինանսական ակտիվներ

Պետական արժեթղթեր	առ 31.03.2026	առ 31.12.2025
ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝		
Գանձապետական պարտատոմսեր	27,434,433	51,944,871
Ընդամենը պետական արժեթղթեր	27,434,433	51,944,871
Ոչ պետական արժեթղթեր, այդ թվում՝		
ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ		
Պարտքային գործիքներ	14,356,790	19,465,862
Բաժնային արժեթղթեր	657,369	266,419
Ընդամենը Ոչ պետական արժեթղթեր	15,014,159	19,732,281

Ծանոթագրություն 16. Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Պետական արժեթղթեր	առ 31.03.2026	առ 31.12.2025
Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսեր	-	-
Հաշվեգրված տոկոսներ	-	-
Հնարավոր կորուստների պահուստ	-	-
Ընդամենը պետական արժեթղթեր	-	-
Ոչ պետական արժեթղթեր, այդ թվում՝		
Հայաստանի Հանրապետության ոչ պետական պարտատոմսեր	-	-
Ընդամենը ոչ պետական արժեթղթեր	-	-

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանոթագրություն 17. Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում

Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ այլ անձանց կանոնադրական կապիտալում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ չունի:

Ծանոթագրություն 18. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցներ

Հոդվածի անվանումը	Համակ. և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Տնտեսական գույք	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
<u>Սկզբնական արժեք</u>						
Մնացորդը առ 01.01.2025	31,921	-	10,074	119,776	1,908	163,679
Ավելացում	2,264	22,079	4,308	-	1,213	29,864
Օտարում	(2,091)	-	(428)	(20,527)	-	(23,046)
Մնացորդը առ 31.12.2025	32,094	22,079	13,954	99,249	3,121	170,497
Ավելացում	2,356	-	501	-	-	2,857
Օտարում	-	-	-	-	-	-
Մնացորդը առ 31.03.2026	34,450	22,079	14,455	99,249	3,121	173,354
<u>Կուտակված մաշվածություն</u>						
Մնացորդը առ 01.01.2025	16,866	-	2,269	28,651	127	47,913
Ավելացում	4,883	230	1,685	44,032	399	51,229
Օտարում	(2,091)	-	(428)	(20,527)	-	(23,046)
Մնացորդը առ 31.12.2025	19,658	230	3,526	52,156	526	76,096
Ավելացում	1,015	690	514	10,179	101	12,499
Օտարում	-	-	-	-	-	-
Մնացորդը առ 31.03.2026	20,673	920	4,040	62,335	627	88,595
<u>Զուտ հաշվեկշռային արժեք</u>						
առ 31.03.2026	13,777	21,159	10,415	36,914	2,494	84,759
առ 31.12.2025	12,436	21,849	10,428	47,093	2,595	94,401

Ոչ նյութական ակտիվներ

Հոդվածի անվանումը	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
<u>Սկզբնական արժեք</u>		
Մնացորդը առ 01.01.2025	50,235	50,235
Ավելացում	66,967	66,967
Մնացորդը առ 31.12.2025	117,202	117,202
Ավելացում	31,818	31,818
Մնացորդը առ 31.03.2026	149,020	149,020
<u>Կուտակված ամորտիզացիա</u>		
Մնացորդը առ 01.01.2025	-	-
Ավելացում	-	-
Մնացորդը առ 31.12.2025	-	-
Ավելացում	-	-
Մնացորդը առ 31.03.2026	-	-
<u>Զուտ հաշվեկշռային արժեք</u>		
առ 31.03.2026	149,020	149,020
առ 31.12.2025	117,202	117,202

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանոթագրություն 19. Այլ ակտիվներ

	սառ 31.03.2026	սառ 31.12.2025
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ		
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	1,943	-
Կանխավճարներ մատակարարներին	17,653	12,209
Կանխավճարներ շահութահարկի գծով	348,897	286
Ընդամենը	368,493	12,495
Այլ ակտիվներ		
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	6,222	7,675
Այլ ակտիվներ	-	97
Ընդամենը	374,715	20,267

Ծանոթագրություն 20. Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	սառ 31.03.2026	սառ 31.12.2025
ՀՀ բանկեր		
Վարկեր	925,660	974,220
Հաշվեգրված տոկոսներ	5,325	4,233
Ընդամենը	930,985	978,453
Ռեպո գործարքներ	21,080,936	56,935,606
Հաշվեգրված տոկոսներ	88,393	142,004
	21,169,329	57,077,610
Ընդամենը	22,100,314	58,056,063

Ծանոթագրություն 21. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

	սառ 31.03.2026	սառ 31.12.2025
Արժեթղթերի գնումների գծով վճարվելիք գումարներ	13,889,594	9,301,038
Արտարժույթի փոխարկումների գծով վճարվելիք գումարներ	8,542,067	3,150,573
Այլ	-	-
Ընդամենը	22,431,661	12,451,611

Ծանոթագրություն 22. Պարտավորություններ այլ անձանց նկատմամբ

	սառ 31.03.2026	սառ 31.12.2025
Ստացված փոխառություններ կապակցված կողմերից	39,602	40,043
Հաշվեգրված տոկոսներ	49	37
	39,651	40,080
Ստացված փոխառություններ երրորդ կողմերից	86,728	89,579
Հաշվեգրված տոկոսներ	58	43
	86,786	89,622
Ռեպո գործարքներ այլ անձանց հետ	-	50,000
Հաշվեգրված տոկոսներ	-	369
	-	50,369
Ընդամենը	126,437	180,071

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանոթագրություն 23. Պահուստներ

Պահուստներ	սառ 31.03.2026	սառ 31.12.2025
Սկզբնական մնացորդ	101,061	202,585
Պահուստին կատարված մասհանումներ	34,231	138,223
Պահուստի օգտագործում	(4,525)	(239,747)
Պահուստին կատարված գուտ մասհանումներ	29,706	(101,524)
Վերջնական մնացորդ	130,767	101,061
Արձակուրդայինի գծով	130,767	101,061

Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում և ներկայացվածից բացի պահուստավորում պահանջող այլ իրավական կամ կառուցողական պարտականություններ չունի: Ընկերության հանդեպ որևէ իրավական հայց հարուցված չկա: Ընկերությունն ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները, և իր հարկային պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

Ծանոթագրություն 24. Այլ պարտավորություններ

Այլ պարտավորություններ	սառ 31.03.2026	սառ 31.12.2025
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով`		
Շահութահարկի գծով	656,787	5,165
Ավելացված արժեքի հարկի գծով	256	181
Եկամտային հարկի գծով	12,771	55,418
Դրոշմանիշային վճարների գծով	342	512
Պարտադիր բժշկական ապահովագրություն գծով	-	402
Պարտադիր կենսաթոշակային վճարների գծով	4,017	2,729
Պարտավորություններ աշխատակիցների նկատմամբ աշխատավարձի գծով	-	1,393
Կրեդիտորական պարտքեր մատակարարների նկատմամբ	21,800	19,904
Պարտավորություններ հիմնադիրների նկատմամբ	-	-
Պարտավորություններ վարձակալության գծով	31,343	39,379
Ընդամենը	727,316	125,083

Ծանոթագրություն 25. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 8,400,000 հազ. ՀՀ դրամ է, որը բաղկացած է 84,000 հատ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմսերից, որի անվանական արժեքը կազմում է 100 հազ. ՀՀ դրամ: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված են: Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության կողմից շահութաբաժիններ չեն հայտարարվել և վճարվել: Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ներդրումային ընկերության նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկությունները տես ստորև.

Նշանակալից մասնակցի անունը, ազգանունը	Մասնակցության գումարը	Մասնակցության չափը %
Արմեն Տեր-Հակոբյան	4,200,000	50.00
Արմինե Նաջարյան	4,200,000	50.00

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանոթագրություն 26. Սեփական կապիտալի այլ տարրեր

Ընկերությունը սեփական կապիտալի այլ չբացահայտված տարրեր չունի:

Ծանոթագրություն 27. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են նրա՝ գլխավոր տնօրենը, բաժնետերերը, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք: Ընկերության կապակցված կողմերի հետ գործարքներն իրականացվել են շուկայում գործող պայմաններին և տոկոսադրույքներին համապատասխան: Հաշվետու և համադրելի եռամսյակներում Ընկերությունը կապակցված կողմերի հետ իրականացրել է հետևյալ գործարքները.

	31/03/2026			
	Հաշվետու		Համադրելի	
	Գործարքի գումար	Զմարված մնացորդ	Գործարքի գումար	Զմարված մնացորդ
Կապակցված կողմերի հետ գործարքներ, այդ թվում՝				
Աշխատանքի վարձատրություն	21,677	39,651	28,402	41,165
Սրանսպորտային միջոցի վարձակալություն	17,725	-	24,410	-
Տրանսպորտային միջոցի վարձակալություն	2,700	-	2,700	-
Փոխառության ներգրավվում	1,252	39,651	1,292	41,165
Փոխառության տրամադրում	-	-	-	-

Ծանոթագրություն 28. Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ

28.1 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի (ակտիվների) կողմը չի կատարի իր պարտականությունը, և այդ պատճառով Ընկերությունը կկրի ֆինանսական կորուստներ: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը: Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները: Առևտրային դեբիտորական պարտքերի համար Ընկերությունը գրավ չի վերցնում:

Աշխարհագրական կենտրոնացումներ

2026 թվականի մարտի 31-ի դրությամբ

Հոդվածի անվանումը	ՀՀ	Այլ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ			
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,915,480	2,144,875	10,060,355
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	3,756,101	6,356,217	10,112,318
Պահանջներ այլ անձանց նկատմամբ	-	-	-
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող» ֆինանսական	32,316,292	10,132,300	42,448,592
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	-	-	-
Այլ ակտիվներ	372,771	-	372,771
Ընդամենը ակտիվներ	44,360,644	18,633,392	62,994,036

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22,100,314	-	22,100,314
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	5,167,274	17,230,800	22,398,074
Պարտավորություններ այլ անձանց նկատմամբ	126,437	-	126,437
Այլ պարտավորություններ	724,336	2,980	727,316
Ընդամենը պարտավորություններ	28,118,361	17,233,780	45,352,141
Զուտ դիրք	16,242,283	1,399,612	17,641,895

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հոդվածի անվանումը	ՀՀ	Այլ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ			
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,962,584	1,298,534.00	12,261,118
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	417,318	3,627,722	4,045,040
Պահանջներ այլ անձանց նկատմամբ	-	-	-
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող» ֆինանսական	55,376,274	16,300,877	71,677,151
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	-	-	-
Այլ ակտիվներ	20,271	-	20,271
Ընդամենը ակտիվներ	66,776,447	21,227,133	88,003,580
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	58,056,063	-	58,056,063
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	1,599,220	10,091,305	11,690,525
Պարտավորություններ այլ անձանց նկատմամբ	129,702	-	129,702
Այլ պարտավորություններ	122,070	3,013	125,083
Ընդամենը պարտավորություններ	59,907,055	10,094,318	70,001,373
Զուտ դիրք	6,869,392	11,132,815	18,002,207

28.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկի վերլուծություն

Շուկայական ռիսկը հավանականությունն է, որ շուկայական տատանումների հետևանքով, մասնավորապես, առևտրական նպատակով պահվող ֆինանսական գործիքների ապագա իրական արժեքների փոփոխությամբ Ընկերությունը կկրի վնասներ: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով եկամտաբերության օպտիմալացումը:

28.3 Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Ընկերության գուտ ենթարկվածությունը արտարժույթային ռիսկին ներկայացված է ստորև բերված աղյուսակներում:

2026 թվականի մարտի 31-ի դրությամբ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ	II խմբի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,023,758	5,917,823	1,118,774	10,060,355
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	523,015	6,265,206	3,324,097	10,112,318
Պահանջներ այլ անձանց նկատմամբ	-	-	-	-
ԻԱՇՎ հաշվառվող ֆինանսական ակտիվներ	27,878,258	9,408,530	5,161,804	42,448,592
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական	-	-	-	-
Այլ ակտիվներ	372,771	-	-	372,771
Ընդամենը ակտիվներ	31,797,802	21,591,559	9,604,675	62,994,036
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	18,819,865	2,349,464	930,985	22,100,314
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	280,235	17,974,478	4,143,361	22,398,074
Պարտավորություններ այլ անձանց նկատմամբ	-	126,437	-	126,437
Այլ պարտավորություններ	724,336	-	2,980	727,316
Ընդամենը պարտավորություններ	19,824,436	20,450,379	5,077,326	45,352,141
Զուտ դիրք	11,973,366	1,141,180	4,527,349	17,641,895

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ	II խմբի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,714,489	3,962,985	583,644	12,261,118
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	1,264,335	1,241,587	1,539,118	4,045,040
Պահանջներ այլ անձանց նկատմամբ	-	-	-	-
ԻԱՇՎ հաշվառվող ֆինանսական ակտիվներ	45,927,435	21,385,348	4,364,368	71,677,151
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական	-	-	-	-
Այլ ակտիվներ	20,271	-	-	20,271
Ընդամենը ակտիվներ	54,926,530	26,589,920	6,487,130	88,003,580
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	45,645,606	11,432,004	978,453	58,056,063
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	1,183,391	9,504,917	1,002,217	11,690,525
Պարտավորություններ այլ անձանց նկատմամբ	-	129,702	-	129,702
Այլ պարտավորություններ	122,070	-	3,013	125,083
Ընդամենը պարտավորություններ	46,951,067	21,066,623	1,983,683	70,001,373
Զուտ դիրք	7,975,463	5,523,297	4,503,447	18,002,207

Հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ արտարժույթային ածանցյալ գործիքներ առկա չեն:

28.4.Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Ընկերությանը բնորոշ է ֆինանսական գործիքների պորտֆելի իրական արժեքի կամ եկամտի/ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկը շուկայական տոկոսադրույքների տատանման արդյունքում: Ընկերության տոկոսակիր ֆինանսական գործիքների գծով Ընկերության քաղաքականությունն է՝ գործարքներ կատարել այնպիսի մարման ժամկետ ունեցող ֆինանսական գործիքներով, որոնք լավագույնս համապատասխանում են ֆինանսական պարտավորությունների մարման ակնկալվող ժամկետներին: Այնուամենայնիվ, տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը կարող է բարձր լինել՝ շուկայում գերիշխող տոկոսադրույքների տատանումների արդյունքում:

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2026 թվականի մարտի 31-ի դրությամբ

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1 տարուց ավելի	
	դրամով	արտար- ժույթով	դրամով	արտար- ժույթով	դրամով	արտար- ժույթով	դրամով	արտար- ժույթով	դրամով	արտար- ժույթով
Տեղաբաշխված միջոցներ										
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝										
Ավանդներ	-	-	1,109,205	-	-	-	-	-	-	-
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	-	-	-	-	-	-	-	-	-	-
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող» ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	-	-	-	42,448,592	-
Անորոշիվացված արժեքով չափվող արժեթղթեր	-	-	-	-	-	-	-	-	-	-
Տեղաբաշխված այլ միջոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	-	-	1,109,205	-	-	-	-	-	42,448,592	-
Պարտավորություններ										
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝										
ռեպո համաձայնագրեր	21,169,329	-	-	-	-	-	-	-	-	-
Վարկեր	-	-	-	-	-	-	-	-	930,985	-
Վարձակալական պարտավորություններ	-	-	-	-	-	-	-	-	31,343	-
Փոխառություններ	-	126,437	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	21,169,329	126,437	-	-	-	-	-	-	962,328	-
Զուտ դիրք	(21,169,329)	-	1,109,205	-	-	-	-	-	41,486,264	-

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1 տարուց ավելի	
	դրամով	արտար- ժույթով	դրամով	արտար- ժույթով	դրամով	արտար- ժույթով	դրամով	արտար- ժույթով	դրամով	արտար- ժույթով
Տեղաբաշխված միջոցներ										
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝										
Ավանդներ	-	-	1,127,256	-	-	-	-	-	-	-
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	-	-	-	-	-	-	-	-	-	-
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող» ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	-	-	-	71,677,152	-
Ամորտիզացված արժեքով չափվող արժեթղթեր	-	-	-	-	-	-	-	-	-	-
Տեղաբաշխված այլ միջոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	-	-	1,127,256	-	-	-	-	-	71,677,152	-
Պարտավորություններ										
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝										
ռեպո համաձայնագրեր	57,077,610	-	-	-	-	-	-	-	-	-
Վարկեր	-	-	-	-	-	-	-	-	978,453	-
Վարձակալական պարտավորություններ	-	-	-	-	-	-	-	-	39,379	-
Փոխառություններ	-	180,071	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	57,077,610	180,071	-	-	-	-	-	-	1,017,832	-
Զուտ դիրք	(57,077,610)	-	1,127,256	-	-	-	-	-	72,694,984	-

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար գործող միջին տոկոսադրույքներ.

Հոդվածի անվանումը	Հաշվեու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ		Նախորդ հաշվեու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ	
	ՀՀ դրամ	Արտարժույթ	ՀՀ դրամ	Արտարժույթ
	%	%	%	%
Ակտիվներ				
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվ	-	-	-	-
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7.21	4.69	7.70	5.00

28.5 Գնային ռիսկ

Գնային ռիսկը այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների արդյունքում, անկախ այն բանից, թե այդ փոփոխությունները պայմանավորված են առանձին ֆինանսական գործիքին կամ դրա թողարկողին հատուկ գործոններով, թե շուկայում շրջանառվող բոլոր նմանատիպ ֆինանսական գործիքների վրա ազդող գործոններով: Արդյունքում, գնային ռիսկը ֆինանսական գործիքի շուկայական գնի փոփոխության հետևանքով կորուստ կրելու հավանականությունն է:

28.6 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պայմանավորված է այնպիսի դրսևորմամբ, որ Ընկերությունը կարող է հանդիպել դժվարությունների ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները մարելու համար միջոցներ հայթայթելիս:

Այն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում, որը բնական է ֆինանսական հաստատությունների համար, ինչն էլ պայմանավորված է իրականացվող գործարքների տարբերություններով և դրանց հետ կապված անորոշությամբ: Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2026 թվականի մարտի 31-ի դրությամբ

<i>ԱԿՏԻՎՆԵՐ</i>	<i>Մարմանը մնացել է</i>					<i>Անժամկետ</i>	<i>Ընդամենը</i>
	<i>մինչև 1 ամիս</i>	<i>1-3 ամիս</i>	<i>3-6 ամիս</i>	<i>6-12 ամիս</i>	<i>1 տարուց ավելի</i>		
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝							
Ընթացիկ հաշիվներ	8,909,602	-	-	-	-	-	8,909,602
Ավանդներ	1,109,205						1,109,205
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	10,092,094	-	-	-	-	-	10,092,094
Արժեթղթեր, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-
Իրական արժեքով շահույթի վաստակներ և անարժեք գործարքներ	-	-	-	-	42,448,592	-	42,448,592
Ամորտիզացված արժեքով չափվող	-	-	-	-	-	-	-
Այլ պահանջներ	-	-	-	2,900,661	-	-	2,900,661
Ընդամենը	20,110,901	-	-	2,900,661	42,448,592	-	65,460,154
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	<i>Մարմանը մնացել է</i>					<i>Անժամկետ</i>	<i>Ընդամենը</i>
	<i>մինչև 1 ամիս</i>	<i>1-3 ամիս</i>	<i>3-6 ամիս</i>	<i>6-12 ամիս</i>	<i>1 տարուց ավելի</i>		
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝							-
Ռեպո համաձայնագրեր	21,169,329	-	-	-	-	-	21,169,329
Այլ պարտավորություններ	22,558,098	-	-	-	962,328	-	23,520,426
Ընդամենը	43,727,427	-	-	-	962,328	-	44,689,755

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախորդ ժամանակաշրջանի կապիտալի համարժեքություն

Ամիսը	Հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծություն	Ընդամենը կապիտալ	Նորմատիվային սեփական կապիտալի հաշվարկի համար անհրաժեշտ հիմնական	Նորմատիվային հաշվարկին մասնակցող Հիմնական կապիտալ	ՀՀ ԿԲ կորպից սահմանված նորմատիվային կապիտալի նվազագույն մեծություն
Հունվար	11,996,808	11,996,808	-	11,996,808	300,000
Փետրվար	12,776,834	12,776,834	-	12,776,834	300,000
Մարտ	13,408,638	13,408,638	-	13,408,638	300,000

Ծանոթագրություն 30. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ նրանց շուկայական գնանշման վրա, առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե շուկայական գնանշումը հասանելի չէ, գործիքի իրական արժեքը չափվում է կիրառելով գնորոշման մոդելներ կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկան:

Երբ կիրառվում է զեղչված դրամական հոսքերի տեխնիկան, գնահատված ապագա դրամական հոսքերը հիմնված են դեկավարության լավագույն գնահատականների հիման վրա և զեղչման դրույքը նմանատիպ պայմաններով գործիքի տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Երբ գնորոշման մոդելներն են կիրառվում, ներմուծվող փոփոխականները հիմնված են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական համապատասխան փոփոխականների վրա:

Ծանոթագրություն 31. Ընդունված գրավ

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գրավով ապահովված ակտիվներ չի ունեցել:

Ծանոթագրություն 32. Պարտավորությունների չկատարում/խախտում

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների խախտում չի եղել:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԿՈՒԲ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ ղեկավարության հայտարարությունը

Ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված եռամսյակի գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և Ընկերության բաժնետիրական կապիտալի փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Ընկերության ֆինանսական վիճակի և կատարողականի վրա որոշակի գործարքների, այլ իրադարձությունների և պայմանների ունեցած ազդեցության մասին,
- Ընկերության գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Ընկերության գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Ընկերության ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման վարումը կազմակերպելու համար,
- Ընկերության ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար,
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

Միքայել Մարգարյան
Տնօրինության նախագահ - Գլխավոր տնօրեն

Արմեն Ազիզյան
«ՍթեփԱֆ» ՍՊԸ ներկայացուցիչ



[Handwritten signature in blue ink]

14 ապրիլի 2026

[Handwritten signature in blue ink]

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԿՈՒԲ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ ղեկավարության հայտարարությունը

Սույնով հայտարարում ենք, որ պատասխանատվություն ենք կրում.

- I. Ընկերության ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, այն է՝
 - ա. հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
 - բ. հիմնավորված գնահատումներ, հաշվարկներ կատարելու համար,
 - գ. ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,
 - դ. հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
 - ե. ֆինանսական հաշվետվությունները ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,

II. Ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման վերաբերյալ,

III. Ընկերության ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր իրավատվությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Հավաստիացնում ենք, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

Միքայել Մարգարյան
Տնօրինության նախագահ - Գլխավոր տնօրեն

Արմեն Ազիզյան
«ՍթեփԱփ» ՍՊԸ ներկայացուցիչ



14 ապրիլի 2026

**Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն**

**«Կուրբ Ինվեսթ» փակ բաժնետիրական
ընկերություն**

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Կուբ Ինվեսթ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կուբ Ինվեսթ» փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտի անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնադրքի» (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀՀՄՄԽ կանոնագիրք), որոնք կիրառելի են հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՄԽ կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է

խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերության լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար


Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմի են օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն ղեկավարի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեկավարը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերության դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեկավարի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն



Յարիս Ուլունց
Առաջադրանքի ղեկավար

28 ապրիլի, 2026թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսարժույթի մեթոդով	5	446,726	292,118
Տոկոսային ծախս	5	(3,385,125)	(1,912,945)
Զուտ տոկոսային ծախս		(2,938,399)	(1,620,827)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	6	1,539,814	3,147,396
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	6	(1,139,321)	(1,517,979)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ		400,493	1,629,417
Զուտ առևտրային եկամուտ	7	14,323,056	16,603,587
Զուտ օգուտ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վերադասակարգումից	14	-	347,305
Արտարժույթի վերագնահատումից զուտ օգուտ		584,847	1,237,727
Պարտքային կորուստների գծով (ծախս) ծախսի հակադարձում	8	(23,253)	19,371
Զուտ գործառնական եկամուտ		12,346,744	18,216,580
Անձնակազմի գծով ծախսեր	9	(1,533,724)	(7,566,284)
Այլ ծախսեր	10	(460,892)	(358,237)
Շահույթ մինչև հարկումը		10,352,128	10,292,059
Շահութահարկի գծով ծախս	11	(1,835,312)	(1,798,018)
Տարվա շահույթ		8,516,816	8,494,041
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		8,516,816	8,494,041

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 65-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	12,235,595	5,618,180
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13	3,357,132	998,240
Ներդրումներ արժեթղթերում	14	12,086,170	17,102,685
Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	14	59,590,981	42,410,537
Տրամադրված փոխառություններ	15	2,038,906	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	211,605	166,001
Կանխավճարներ շահութահարկի գծով		286	-
Հետաձգված հարկային ակտիվ	11	-	4,427
Այլ ակտիվներ	17	703,139	107,115
Ընդամենը՝ ակտիվներ		90,223,814	66,407,185
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Ներգրված վարկեր և փոխառություններ	18	58,236,134	39,428,401
Պարտավորություններ բրոքերային ծառայությունների գծով	19	12,451,561	13,831,228
Շահութահարկի գծով ընթացիկ պարտավորություն		-	1,121,841
Հետաձգված հարկային պարտավորություն	11	673,233	-
Այլ պարտավորություններ	20	226,194	385,839
Ընդամենը՝ պարտավորություններ		71,587,122	54,767,309

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Մանրթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	21	840,000	760,000
Գլխավոր պահուստ		114,000	96,479
Չբաշխված շահույթ		17,682,692	10,783,397
Ընդամենը՝ սեփական կապիտալ		18,636,692	11,639,876
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ			
		90,223,814	66,407,185

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. ապրիլի 28-ին:

Միքայել Մարգարյան

Գլխավոր տնօրեն / Տնօրինության նախագահ

Արմեն Ազիզյան

Գլխավոր հաշվապահ



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 65-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	760,000	96,479	10,783,397	11,639,876
Տարվա շահույթ	-	-	8,516,816	8,516,816
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	8,516,816	8,516,816
Բաժնետիրական կապիտալի ավելացում	80,000	-	-	80,000
Հատկացում պահուստին	-	17,521	(17,521)	-
Շահաբաժիններ բաժնետերերին (Ծանոթագրություն 21)	-	-	(1,600,000)	(1,600,000)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	80,000	17,521	(1,617,521)	(1,520,000)
Հաշվեկշիռը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	840,000	114,000	17,682,692	18,636,692
Հաշվեկշիռը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	640,000	71,479	4,714,356	5,425,835
Տարվա շահույթ	-	-	8,494,041	8,494,041
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	8,494,041	8,494,041
Բաժնետիրական կապիտալի ավելացում	120,000	-	-	120,000
Հատկացում պահուստին	-	25,000	(25,000)	-
Շահաբաժիններ բաժնետերերին (Ծանոթագրություն 21)	-	-	(2,400,000)	(2,400,000)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	120,000	25,000	(2,425,000)	(2,280,000)
Հաշվեկշիռը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	760,000	96,479	10,783,397	11,639,876

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 65-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2025թ.	2024թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսներ	216,276	208,953
Վճարված տոկոսներ	(3,303,381)	(1,865,040)
Ստացված կոմիսիոն և այլ վճարներ	1,539,814	3,147,396
Վճարված կոմիսիոն և այլ վճարներ	(1,139,321)	(1,517,979)
Զուտ առևտրային օգուտ	8,823,852	15,865,893
Զուտ օգուտ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վերադասակարգումից	-	347,305
Անձնակազմի գծով ծախսեր	(1,633,091)	(7,566,284)
Այլ ծախսեր	(409,664)	(128,334)
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	4,094,485	8,491,910
(Ավելացում) նվազում գործառնական ակտիվներում		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(2,039,777)	4,859,360
Տրամադրված փոխառություններ	(3,111,280)	(2,532,000)
Տրամադրված փոխառությունների վճարումներ	569,029	90,000
Ներդրումներ արժեթղթերում	(6,404,545)	(40,023,633)
Այլ ակտիվներ	(572,432)	(339,263)
(Ավելացում) նվազում գործառնական պարտավորություններում		
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	17,881,055	30,206,666
Պարտավորություններ բրոքերային ծառայությունների գծով	(2,111,914)	7,135,320
Այլ պարտավորություններ	(92,800)	(344,797)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից ստացված մինչև շահութահարկը	8,211,821	7,543,563
Վճարված շահութահարկ	(2,279,779)	(1,656,563)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	5,932,042	5,887,000

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2025թ.	2024թ.
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(96,832)	(62,766)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(96,832)	(62,766)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	80,000	120,000
Ներգրված վարկեր և փոխառություններ	830,522	158,051
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(52,601)	(26,888)
Շահաբաժինների վճարում (Մանրթագրություն 21)	(80,000)	(1,416,335)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	777,921	(1,165,172)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	6,613,131	4,659,062
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	5,618,180	777,907
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	17,546	192,472
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքներ վրա	(13,262)	(11,261)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (Մանրթագրություն 12)	12,235,595	5,618,180

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 65-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Կուր Ինվեսթ» փակ բաժնետիրական ընկերության

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված
հազար հայկական (<<) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ն գործունեություն է իրականացնում արժեթղթերի և արտարժույթի շուկաներում, մասնավորապես՝

- հանդիսանում է արժեթղթերի բրոքեր և դիլեր,
- մատուցում է ռեստավարման և պահպանության ծառայություններ,
- տրամադրում է խորհրդատվություն արժեթղթերի շուկայի վերաբերյալ,
- իրականացնում է արտարժույթի անկանխիկ առուվաճառքի գործառնություններ:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՄ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն և գործում է Հայաստանի Հանրապետության («ՀՀ») օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 2017 թվականի փետրվարի 3-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի («ՀՀ ԿԲ») կողմից թիվ 33 Ա որոշմամբ և տրվել է ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա:

Ընկերությունը 28.06.2024թ.-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 107 Ա որոշմամբ գրանցել է «Շանհայ Դրագոն» ոչ հրապարակային միջակայքային պայմանագրային ներդրումային ֆոնդ, սակայն 2024թ. գործունեություն չի իրականացրել:

2025թ. մարտի 25-ին Fitch Ratings միջազգային վարկանշային գործակալությունը Ընկերությանը տվել է «B-» երկարաժամկետ թողարկողի դեֆոլտի վարկանիշը (Long-term Issuer Default Rating (IDR)):

Ընկերության գլխավոր գրասենյակը գտնվում է քաղաք Երևանում: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փողոց 1:

Ընկերության աշխատակիցների թվաքանակը 2025թ. կազմել է 42 մարդ (2024թ.՝ 37 մարդ):

Համապատասխանություն և անընդհատություն

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հրապարակված ՖՀՄՄ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Ընկերության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը շարունակում է բախվել մի շարք ներքին և արտաքին մարտահրավերների՝ պայմանավորված աշխարհաքաղաքական լարվածությամբ, տարածաշրջանային անվտանգության խնդիրներով և գլոբալ տնտեսության փոփոխվող ռիսկերով: Այնուամենայնիվ, հայկական բիզնեսը աստիճանաբար հարմարվում է նոր պայմաններին՝ դիվերսիֆիկացնելով մատակարարման շղթաները, ընդլայնելով արտահանման շուկաները և կիրառելով առավել ճկուն գործառնական մոդելներ: Ներդրումային միջավայրի բարելավմանն, ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանն ու մասնավոր հատվածի զարգացմանն ուղղված պետական բարեփոխումները ստեղծում են երկարաժամկետ տնտեսական կայունության հիմքեր:

2025թ. Հայաստանի տնտեսության ոլորտային պատկերը հակասական է. մի կողմից շարունակվում է առևտրի, ծառայությունների և շինարարության կայուն աճը, մյուս կողմից դիտվում է արդյունաբերության նկատելի անկում: Աճող ոլորտները մեծապես շահում են ներմուծման ընդլայնումից, սպառողական ակտիվությունից, ինչպես նաև զբոսաշրջության վերականգնումից, որն ավելացնում է ծառայությունների պահանջարկը: Շինարարության աճը պայմանավորված է ինչպես մասնավոր ներդրումներով, այնպես էլ բնակարանաշինության շարունակական բարձր պահանջարկով, ինչը դարձնում է այն տնտեսության ամենակտիվ ճյուղերից մեկը: Ընդհանուր առմամբ, տնտեսության շարժիչ ուժը շարունակում են մնալ սպառման վրա հիմնված ոլորտները:

2025թ. Հայաստանի ֆինանսական ոլորտը, ընդհանուր առմամբ, մնում է կայուն՝ բանկային համակարգի բավարար կապիտալացվածությամբ, իրացվելիության համապատասխան մակարդակներով և ՀՀ Կենտրոնական բանկի շարունակական վերահսկողությամբ պայմանավորված: Չնայած արտաքին ռիսկերի աճին և գլոբալ ֆինանսական անորոշություններին՝ ֆինանսական հաստատությունները շարունակում են առանցքային դեր խաղալ տնտեսական ակտիվության աջակցման գործում՝ իրականացնելով վարկավորման, վճարահաշվարկային ծառայությունների և ռիսկերի կառավարման արդյունավետ գործառնություններ:

2025թ. պետական բյուջեի համաձայն՝ Հայաստանի տնտեսական աճը նախատեսված է 5.1%, իսկ 2026թ.՝ 5.4%:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

2.1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ձևը

Ընկերությունը ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ըստ իրացվելիության՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվության համապատասխան հողվածային տողի ակտիվների/պարտավորությունների մեծ մասը ստանալու/մարելու Ընկերության մտադրության և ակնկալվող կարողության վրա: Հաշվետու ամսաթվից (ընթացիկ) հետո 12 ամսվա և հաշվետու ամսաթվից (ոչ ընթացիկ) հետո ավելի քան 12 ամիսների ընթացքում ակտիվների/պարտավորությունների ստացման կամ մարման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 26-ում:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄՀ) և ՖՀՄՄ մեկնաբանությունների կոմիտեի կողմից:

ՀՀՄՄ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ» ստանդարտի փոփոխությունը՝ կապված «Փոխանակելիության բացակայության» հետ առաջին անգամ կիրառվել է 2025թ., որը սահմանում է պահանջներ՝ գնահատելու, թե երբ է արժույթը փոխարկելի այլ արժույթի նկատմամբ, և երբ՝ ոչ: Ստանդարտի այս փոփոխության ընդունումը ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄՀ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

• **ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»**

2024թ. ապրիլին ՀՀՄՍ-ն հրապարակել է ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում» ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտը: Չնայած ՖՀՄՍ 18-ը ներառում է ՀՀՄՍ 1-ի բազմաթիվ պահանջներ, այն ներկայացնում է նոր պահանջներ՝ ֆինանսական հաշվետվությունների կառուցվածքը բարելավելու և ներդրողներին ավելի մանրամասն ու օգտակար տեղեկատվություն տրամադրելու նպատակով, ներառյալ՝

- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում երկու նոր ենթագումարի սահմանում՝ գործառնական շահույթ և շահույթ կամ վնաս մինչև ֆինանսավորումը և հարկերը
- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտների և ծախսերի դասակարգում հետևյալ հինգ կատեգորիաներից մեկում՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, հարկեր և ընդհատված գործառնություններ
- ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափանիշների բացահայտման նոր պահանջ
- ֆինանսական հաշվետվություններում և կից ծանոթագրություններում ներկայացվող տեղեկատվության միավորման և տարանջատման սկզբունքների բարելավում

Նախկինում ՀՀՄՍ 1-ում ներառված որոշ բացահայտման պահանջներ տեղափոխվել են ՀՀՄՍ 8՝ առանց էական փոփոխությունների: Սա հատկապես վերաբերում է հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատման անորոշության աղբյուրների բացահայտումներին: Այս փոփոխությունների արդյունքում ՀՀՄՍ 8-ը կվերանվանվի «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ»:

Ի հավելում, ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտում կատարվել են սահմանափակ փոփոխություններ, որոնք ներառում են անուղակի մեթոդով պատրաստված հաշվետվության գործառնական գործունեությունից դրամական հոսքերի որոշման մեկնարկային կետի փոփոխությունը «շահույթ կամ վնասից» «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից և տոկոսներից դրամական հոսքերի դասակարգման ընտրանքի վերացումը: Բացի այդ, կան հետևողական փոփոխություններ մի շարք այլ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներում:

ՖՀՄՍ 18-ը ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: ՖՀՄՍ 18-ը կկիրառվի հետընթաց՝ կիրառելով հատուկ անցումային դրույթներ:

Ընկերությունը ներկայում գնահատում է ՀՀՄՍ 18-ի ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

Ղեկավարության գնահատմամբ չի ակնկալվում, որ այլ նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները, որոնք չեն կիրառվել ընթացիկ տարում, էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- «Բնությունից կախված էլեկտրաէներգիային հղումով պայմանագրեր» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարեփոխումներ - Հատոր 11 (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)

- ՖՀՄՍ 19 «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվեպահության բացահայտումներ» (ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար):

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով: Ֆինանսական գործիքները ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով, ինչպես նաև իրական արժեքով:

4.2 Կլիմային առնչվող հարցեր

Ընկերությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ծախսերի հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

4.3 Արտարժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (<< դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: << դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և

պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում է ուղղակիորեն շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշիռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված դրամային արժեթղթերի (որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով ներդրումային արժեթղթեր դասակարգվող) իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի անորոշիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հողվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հողվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հողվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսեր, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հողվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ բաժնային գործիքներ դասակարգված բաժնետոմսերինը, որոնց համար ընտրությունը կատարվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում իրական արժեքի հետագա փոփոխությունները ներկայացնելու տարբերակը, ընդգրկվում են կապիտալում՝ իրական արժեքի փոփոխությունների պահուստում:

Յուրաքանչյուր արտարժույթային գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
<< դրամ/1 ԱՄՆ դոլար	381.36	396.56
<< դրամ/1 Եվրո	449.01	413.89
<< դրամ/1 Ռուբ	4.87	3.71

4.4 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության անորոշիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Ընկերությունը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս Ծանոթագրություն 4.6 (զ) -ում:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ ներդրումների կառավարման վճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները, ճանանչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Ընկերության ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Ընկերությունը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից և արտարժույթային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը, երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է, ինչպես նաև ածանցյալ գործիքներից զուտ օգուտը կամ վնասը:

4.5 Շահութահարկ

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուղվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում Ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.6 Ֆինանսական գործիքներ

ա) Ծանաչում և սկզբնական չափում

Ընկերությունը սկզբնապես ճանաչում է տրամադրված և ներգրավված փոխառությունները դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Ընկերության՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափում է իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

բ) Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրային նպատակներով չափվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և

ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է՝

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Ընկերության ղեկավարությանը,
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Ընկերությունը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Ընկերությունը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ Ընկերությունը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամկետ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Ընկերության պահանջը (օրինակ՝ առանց ռեզերսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածություններ) և
- հատկանիշներ, որոնք փոխում են փողի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Ընկերությունը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

գ) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տե՛ս նաև Ծանոթագրություն 4.6(դ) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ վնասի տարբերությունը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Ընկերության կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ընկերությունը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կա՛մ բոլոր, կա՛մ գրեթե բոլոր ռիսկերն ու հատուցները, կա՛մ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոփով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Ընկերությունը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատուցները:

Գործարքներում, որոնցում Ընկերությունը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատուցները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Ընկերությունը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան սպասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

դ) Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Ընկերությունը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տե՛ս Ծանոթագրություն 4.6 (գ), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տե՛ս Ծանոթագրություն 4.6(գ), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

ե) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն զտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Ընկերությունը առևտրային գործունեության ընթացքում:

զ) Արժեզրկում

Ընկերությունը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Ընկերությունը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Ընկերությունը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ պարտազանցման ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնք գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Ընկերությունը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած պարտազանցման ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է Ծանոթագրություն 27.1.2-ում:

Վերոնշյալի հիման վրա՝ Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ ֆինանսական ակտիվները ճանաչվում են առաջին անգամ, Ընկերությունը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված ֆինանսական ակտիվները նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և ֆինանսական ակտիվը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ ֆինանսական ակտիվը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Ընկերությունը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված ֆինանսական ակտիվները նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և ֆինանսական ակտիվը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – արժեզրկված ֆինանսական ակտիվներ: Ընկերությունը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների խումբ - գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվներն սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները պարտազանցում տեղի ունենալու հավանականության, պարտազանցման պահին պարտքի գումարի, պարտազանցման դեպքում կորստի գումարի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Պարտազանցում տեղի ունենալու հավանականություն (PD): Այն որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD): Այն ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարտքի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները

պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD): Այն արտահայտում է կորստի գնահատված գումարն, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Պարտազանցում տեղի ունենալու հավանականությունը պարտազանցման պահին պարտքի գումարը, պարտազանցման դեպքում կորստի գումարը մանրամասն բացահայտվում են Ծանոթագրություն 27.1.2-ում:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տե՛ս՝ Ծանոթագրություն 4.6(գ), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ գեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ամրոտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են պարտքային առումով արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Ընկերության կողմից վարկի կամ փոխառության պայմանների այնպիսի վերանայումը, որը Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսննկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Ֆինանսական ակտիվը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում,

Դուրսգրում

Փոխառությունները և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Ընկերությունը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Ընկերության պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

4.6.1 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են << առևտրային բանկերում հաշիվներից, այդ թվում, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռքբերման օրից 90 օր է, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակամիջոցում հեշտությամբ և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի և հաշիվներից քլիրինգային համակարգերում:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6.2 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ավանդային հաշիվներ: Բանկերում ներդրված ժամկետային ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Ընկերության ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.6.3 Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Տրամադրված փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է փոխառության իրական արժեքից, օրինակ երբ փոխառությունը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և փոխառության իրական արժեքների

տարբերությունը փոխառության սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև փոխառությունները և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Տրված փոխառությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.6.4 Ներդրումներ արժեթղթերում

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արժեթղթերում ներդրումները ներառում են,

- պարտքային և բաժնային արժեթղթեր, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կամ նախորդվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իսկ իրական արժեքի փոփոխությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում,
- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով: դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.6.5 Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ: Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեզրկվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես ֆինանսական պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.7 Վարձակալություն

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում Ընկերությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Ընկերությանը,
- Ընկերությունն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Ընկերությունն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Ընկերությունն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Ընկերությունը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կախիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք գեղջելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզումներ:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Ընկերությունը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

4.8 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույթաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույթ (%)
Համակարգիչներ և կապի միջոցներ	3-5	33.3-20
Տրանսպորտային միջոցներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	3-8	33.3-12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Ընկերություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.9 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները անորոշ են: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.10 Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը գեղջվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով գեղջման մինչև հարկումը դրույթը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը

որոշված կլինել (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

4.11 Ներգրված միջոցներ

Ներգրված միջոցները, որոնք ներառում են բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից, ֆիզիկական անձանցից ստացված գումարներ, հաճախորդների բրոքերային հաշիվները սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսեր: Սկզբնական ճանաչումից հետո ներգրված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.12 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Գլխավոր պահուստ

Գլխավոր պահուստը ստեղծված է համաձայն << օրենսդրության պահանջների՝ ընդհանուր պարտքային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Ընկերության կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս, քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

Զբաղիված շահույթ

Զբաղիված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

4.13 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրույթամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են:
Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն
ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող
են ազդեցություն ունենալ:

4.13.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման
ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցություն ունեն ֆինանսական
հաշվետվությունների վրա:

Ֆինանսական ակտիվների դասակարգում

Ընկերությունը գնահատում է այն բիզնես մոդելը, որի շրջանակում ակտիվները պահվում են, ինչպես նաև
գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր
գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են:

Ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկմանը վերաբորող չափանիշների սահմանում

Ընկերությունը սահմանում է չափանիշներ որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի
պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող
պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու
մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների
ընտրությունն և հաստատումը:

4.13.2 Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների
իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման մոդելներ: Սա
ներառում է գնահատումների և ենթադրությունների մշակում համապատասխան նրան, թե շուկայի
մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան
հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ
դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված
իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ
կարող է ձեռք բերվել անհատական գործարքների դեպքում (տե՛ս Ծանոթագրություն 24):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը նմանատիպ ակտիվների
օգտագործման փորձի հիման վրա դատողության արդյունք է: Ապագա տնտեսական օգուտները
մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց:
Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ
տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում
Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի
գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող
օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և
շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող մաշվածությունը:

Վարձակալության երկարաձգման օպցիոններ

Երբ Ընկերությունն ունի վարձակալության երկարաձգման օպցիոն, ղեկավարությունը օգտագործում է իր
դատողությունը՝ որոշելու այդ հնարավորության ողջամտորեն կիրառումը: Ղեկավարությունը հաշվի է
առնում բոլոր փաստերն ու հանգամանքները՝ ներառյալ իրենց նախկին փորձը և ակտիվը փոխելու
դեպքում առաջացած ցանկացած ծախս, եթե երկարաձգման օպցիոնը չի կիրառվում վարձակալության
ժամկետը որոշելու համար:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տե՛ս Ծանոթագրություն 23):

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը, ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տե՛ս Ծանոթագրություն 27):

Հարկային օրենսդրություն

<< հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տե՛ս Ծանոթագրություն 22:

5 Տոկոսային եկամուտ և ծախս

	2025թ.	2024թ.
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	364,549	102,888
Տրված փոխառություններ	52,553	-
Հակադարձ հետգնման պայմանագրեր	29,624	189,230
Ընդամենը տոկոսային եկամուտ	446,726	292,118
Ներգրված վարկեր և փոխառություններ	89,699	42,909
Հետգնման պայմանագրեր	3,287,610	1,867,068
Վարձակալության գծով պարտավորություններ	7,816	2,968
Ընդամենը տոկոսային ծախս	3,385,125	1,912,945
Ընդամենը զուտ տոկոսային ծախս	(2,938,399)	(1,620,827)

6 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ և ծախս

	2025թ.	2024թ.
Բրոքերային ծառայություններից միջնորդավճարներ	743,386	2,464,859
Պահառության գործունեությունից	738,722	667,673
Արժեթղթերի տեղաբաշխում և գնանշում	36,130	-
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	21,576	14,864
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	1,539,814	3,147,396
Բրոքերային ծառայություններից միջնորդավճարներ	841,511	1,355,436
Պահառության գործունեությունից	67,541	95,046
Բանկային ծախսեր	190,466	63,738
Այլ ծախսեր	39,803	3,759
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	1,139,321	1,517,979

7 Չուտ առևտրային եկամուտ

	2025թ.	2024թ.
Չուտ եկամուտ արժեթղթերի առք ու վաճառքից և վերագնահատումից	12,257,178	14,967,154
Չուտ օգուտ արտարժույթի առք ու վաճառքի գործարքներից	2,062,871	1,627,058
Չուտ օգուտ ածանցյալ գործիքներից	3,007	9,375
Ընդամենը զուտ առևտրային օգուտ	14,323,056	16,603,587

8 Պարտքային կորուստների գծով ծախս (ծախսի հակադարձում)

	Ծանոթ.	2025թ.		2024թ.	
		Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	13,262	13,262	11,261	11,261
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13	4,536	4,536	(2,114)	(2,114)
Ներդրումներ արժեթղթերում	0	-	-	(23,847)	(23,847)
Տրամադրված փոխառություններ	15	4,086	4,086	(4,671)	(4,671)
Այլ ֆինանսական ակտիվներ	17	1,369	1,369	-	-
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս (ծախսի հակադարձում)		23,253	23,253	(19,371)	(19,371)

9 Անձնակազմի գծով ծախսեր

	2025թ.	2024թ.
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	1,533,724	7,566,284

Աշխատակիցների հատուցումները ներառում են 915,154 հազար ՀՀ դրամ (2024թ.՝ 6,512,064 հազար ՀՀ դրամ) գումարով պարգևավճարներ, որոնց մեծ մասը վճարվել են աշխատակիցներին՝ շուկայի ընդլայնման գործունեության և նոր բիզնես սեգմենտների զարգացման համար:

10 Այլ ծախսեր

	2025թ.	2024թ.
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	90,863	71,770
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	60,049	51,159
Ներկայացուցչական և գովազդի ծախսեր	68,993	44,123
Կարճաժամկետ և փոքրաթիվ ակտիվների վարձակալության ծախսեր	16,047	26,370
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	27,304	25,454
Մաշվածություն և ամորտիզացիա	51,228	24,951
Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	17,423	20,965
Գրասենյակային ծախսեր	20,936	19,528
Գործուղման ծախսեր	28,137	18,576
Վարկանշավորման գծով ծախս	13,409	14,904
Անդամակցության վճարներ	20,549	13,604
Բարեգործական նվիրատվություններ	9,424	10,000
Ապահովագրության ծախսեր	5,307	3,215
Անվտանգության գծով ծախսեր	1,296	1,296
Այլ ծախսեր	29,927	12,322
Ընդամենը այլ ծախսեր	460,892	358,237

11 Շահութահարկի գծով ծախս

	2025թ.	2024թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	1,157,652	1,743,052
Հետաձգված հարկ	677,660	54,966
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	1,835,312	1,798,018

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2024թ.՝ 18%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՄ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	2025թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	10,352,128		10,292,059	
Շահութահարկ	1,863,383	18	1,852,571	18
Չնվազեցվող ծախսեր	77,201	1	168,238	2
Արտարժույթի դրական փոխարժեքային տարբերություն	(105,272)	(1)	(222,791)	(2)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	1,835,312	18	1,798,018	18

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ՝

	2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Չուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	2025թ. Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,027	2,388	4,415	4,415	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	395	816	1,211	1,211	-
Ներդրումներ արժեթղթերում	(32,762)	(663,568)	(696,330)	-	(696,330)
Տրամադրված փոխառություններ	-	735	735	735	-
Այլ ֆինանսական ակտիվներ	-	246	246	246	-
Հիմնական միջոցներ	(445)	133	(312)	-	(312)
Պահուստներ	36,465	(18,274)	18,191	18,191	-
Վարձակալության գծով պարտավորություններ	(1,253)	(136)	(1,389)	-	(1,389)
Հետաձգված հարկային ակտիվ (պարտավորություն)	4,427	(677,660)	(673,233)	24,798	(698,031)

	Շահույթում		2024թ.		
	2023թ.	կամ վնասում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	2,027	2,027	2,027	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	395	395	395	-
Ներդրումներ արժեթղթերում	18,215	(50,977)	(32,762)	-	(32,762)
Հիմնական միջոցներ	(4,315)	3,870	(445)	-	(445)
Պահուստներ	43,607	(7,142)	36,465	36,465	-
Վարձակալության գծով պարտավորություններ	1,886	(3,139)	(1,253)	-	(1,253)
Հետաձգված հարկային ակտիվ (պարտավորություն)	59,393	(54,966)	4,427	38,887	(34,460)

12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Հաշիվներ բանկերում	10,188,251	2,423,710
Մինչև 90 օր տևողությամբ ավանդային հաշիվներ բանկերում	1,164,884	2,541,752
Ընթացիկ հաշիվներ քլիրինգային համակարգերում	906,983	663,979
	12,260,118	5,629,441
Պարտքային կորուստների գծով պահուստ	(24,523)	(11,261)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12,235,595	5,618,180

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության մեկ բանկում բացված բանկային հաշիվները, որոնց մնացորդը կազմում է 231,936 հազ. << դրամ (2024թ.՝ 398,000 հազ. << դրամ) և հետագայում այդ հաշիվներին մուտքագրվող բոլոր դրամական միջոցները գրավադրված են Ընկերության կնքված գլխավոր վարկային պայմանագրի դիմաց (Ծանոթագրություն 18):

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության մինչև 90 օր տևողությամբ ավանդային հաշիվները բանկերում գրավադրված են բանկից ստացված վարկերի դիմաց, գրավի գումարը կազմում է 1,082,617 հազար << դրամ (2024 թ.՝ առկա չէ) (Ծանոթագրություն 18):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

	2025թ.		2024թ.	
	Փոյ 1	Ընդամենը	Փոյ 1	Ընդամենը
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	11,261	11,261	-	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	13,262	13,262	11,261	11,261
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	24,523	24,523	11,261	11,261

13 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ավանդ բանկում	1,000	1,000
Ստացվելիք գումարներ պահառության գործունեությունից	49,192	41,417
Արժեթղթերով գործարքների գծով դեբիտորական պարտքեր	3,312,057	957,976
Այլ	1,611	39
	3,363,860	1,000,432
Պարտքային կորուստների գծով պահուստ	(6,728)	(2,192)
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,357,132	998,240

Ավանդը բանկում ունի 90 օրից ավել մարման ժամկետ, և ըստ պայմանագրի սահմանված է, որ ավանդի գումարի վրա թույլատրվում է կատարել անսահմանափակ քանակությամբ մուտքագրումներ և ելքագրումներ ավանդից 1,000 հազ. << դրամ չնվազող մնացորդ պահպանելով:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

	2025թ.		2024թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	2,192	2,192	4,306	4,306
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	4,536	4,536	(2,114)	(2,114)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,728	6,728	2,192	2,192

Տեղեկատվությունը կապակցված կողմերի հետ գործարքների վերաբերյալ բացահայտված է Ծանոթագրություն 23-ում:

14 Ներդրումներ արժեթղթերում

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

	2025թ.		2024թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	-	-	23,847	23,847
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	-	-	(23,847)	(23,847)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	-

Ընկերությունը փոխել է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը և 2024թ. հունվարի 1-ի դրությամբ 8,763,915 հազար << դրամ հաշվեկշռային արժեքով արժեթղթերը վերադասակարգել է ամորտիզացված արժեքով չափվող կատեգորիայից դեպի իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով (FVTPL) կատեգորիա՝ ՖՀՄՍ 9-ի դրույթների համաձայն: Վերադասակարգման

արդյունքում ամորտիզացված արժեքի և իրական արժեքի տարբերությունից առաջացած օգուտը 347,305 հազար << դրամ գումարով անմիջապես ճանանչվել է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Ընկերությունը չի վերանայել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի տվյալները, իսկ վերադասակարգումը իրականացվել է հեռանկարային հիմունքով, համաձայն ՖՀՄՍ 9-ի:

Շահույթի և վնասի միջոցով իրական արժեքով չափվող արժեթղթեր

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթեր		
<< պետական պարտատոմսեր	999,606	4,912,788
<< կորպորատիվ պարտատոմսեր	3,173,782	5,118,303
Օտարերկրյա պետական պարտատոմսեր	-	4,814,030
Օտարերկրյա կորպորատիվ պարտատոմսեր	7,646,363	2,251,026
Օտարերկրյա կորպորատիվ բաժնետոմսեր	25,884	6,538
<< ֆոնդի փայ	240,535	-
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	12,086,170	17,102,685
Հետգնման պայմանագրերով գրավադրված շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթեր		
<< պետական պարտատոմսեր	50,945,265	42,178,146
<< կորպորատիվ պարտատոմսեր	-	232,391
Օտարերկրյա պետական պարտատոմսեր	6,069,423	-
Օտարերկրյա կորպորատիվ պարտատոմսեր	2,576,293	-
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	59,590,981	42,410,537

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթերին ըստ եկամտաբերության և մարմանը մնացած ժամկետների.

	31 դեկտեմբերի 2025թ.		31 դեկտեմբերի 2024թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
<< պետական պարտատոմսեր	5.57-9.0	2029-2054	3.6-12.5	2026-2050
<< կորպորատիվ պարտատոմսեր	5.3-13.5	2026-2030	4.75-11.5	2025-2030
Օտարերկրյա պետական պարտատոմսեր	3.53-3.56	2026	0	2025
Օտարերկրյա կորպորատիվ պարտատոմսեր	4-17.75	2028-2030	1.45-10.25	2025-2029

15 Տրամադրված փոխառություններ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Իրավաբանական անձանց տրված փոխառություններ	797,333	-
Ֆիզիկական անձանց տրված փոխառություններ	1,245,659	-
	2,042,992	-
Պարտքային կորուստների գծով պահուստ	(4,086)	-
Ընդամենը տրամադրված փոխառություններ	2,038,906	-

Տրամադրված փոխառություններ գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

	2025թ.		2024թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	-	-	4,671	4,671
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	4,086	4,086	(4,671)	4,671
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,086	4,086	-	-

Փոխառությունները գեղչվել են 1-3%-ով, որի արդյունքում իրական արժեքը ներկայացված է Ծանոթագրություն 24-ում, 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված փոխառությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Տրամադրված փոխառությունների ժամկետային վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 26-ում:

Տրամադրված փոխառությունների պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է Ծանոթագրություն 27-ում:

Գործարքները կապակցված կողմերի հետ ներկայացված են Ծանոթագրություն 23-ում:

16 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Համակարգ- չային տեխնիկա և կապի միջոցներ	Տրանսպորտային Այլ միջոցներ	Վարձակալված հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ	Ոչ նյութական ակտիվներ	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ		
					Գրասենյակային տարածք	Ընդամենը	
Սկզբնական արժեք							
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	17,449	5,571	-	8,352	22,168	53,540	
Ավելացում	14,472	4,976	1,435	41,883	99,249	162,015	
Վերաչափում	-	-	-	-	(1,641)	(1,641)	
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,921	10,547	-	1,435	50,235	213,914	

	Համակարգ- չային տեխնիկա և կապի միջոցներ	Սրանսպո- րտային Այլ միջոցներ	Վարձակալված հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ	Ոչ նյութական ակտիվներ	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ		Ընդամենը
					Գրասենյակային տարածք		
Ավելացում	2,264	5,522	22,079	-	66,967	-	96,832
Օտարում	(2,091)	(429)	-	-	-	(20,528)	(23,048)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	32,094	15,640	22,079	1,435	117,202	99,248	287,698
Կուրակված մաշվածություն							
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	12,015	1,165	-	-	-	11,105	24,285
Տարվա ծախս	4,851	1,180	-	51	-	18,869	24,951
Վերաչափում	-	-	-	-	-	(1,323)	(1,323)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	16,866	2,345	-	51	-	28,651	47,913
Տարվա ծախս	4,883	1,904	230	179	-	44,032	51,228
Օտարում	(2,091)	(429)	-	-	-	(20,528)	(23,048)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,658	3,820	230	230	-	52,155	76,093
Հաշվեկշռային արժեք							
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	15,055	8,202	-	1,384	50,235	91,125	166,001
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,436	11,820	21,849	1,205	117,202	47,093	211,605

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 15,509 հազար << դրամ (2024թ. 14,834 հազար << դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվներ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

Պայմանագրային պարտավորություններ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու նպատակով (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

17 Այլ ակտիվներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ստացվելիք գումարներ պահառության գործունեությունից	8,719	4,871
Այլ ստացվելիք գումարներ	675,806	91,928
Պարտքային կորուստների գծով պահուստ	(1,369)	-
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	683,156	96,799
Վառելիք	97	-
Կանխավճարներ	12,207	1,235
Կանխավճարներ այլ հարկերի գծով	-	16
Այլ ակտիվներ	7,679	9,065
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	19,983	10,316
Ընդամենը այլ ակտիվներ	703,139	107,115

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներում փոփոխությունների վերլուծությունը ստորև.

	2025թ.	2024թ.
	Փուլ 1	Փուլ 1
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	-	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաշափում	1,369	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,369	-

18 Ներգրված վարկեր և փոխառություններ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Վարկեր բանկերից	978,453	-
Կապակցված կողմերից ստացված փոխառություններ	40,080	41,697
Այլ անձանցից ստացված փոխառություններ	89,622	117,309
Հետզման պայմանագրերի ֆինանսական կազմակերպությունների հետ	57,077,610	39,198,802
Հետզման պայմանագրերի ֆիզիկական անձանց հետ	50,369	70,593
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ	58,236,134	39,428,401

Ֆինանսական կազմակերպություններից վարկերը և ֆիզիկական անձանցից ստացված փոխառություններ ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

Հետզման պայմանագրերով ներգրված վարկերը ապահովված են Ընկերության կողմից գրավադրված 59,590,981 հազար << դրամ (2024թ.՝ 42,410,537 հազար << դրամ գումարով շահույթի և վնասի միջոցով իրական արժեքով չափվող) գումարով շահույթի և վնասի միջոցով իրական արժեքով չափվող սեփական

արժեթղթերով և հաճախորդներին պատկանող 2,461,992 հազար դրամ իրական արժեքով արժեթղթերով (2024թ-ին՝ առկա չէ): Ըստ պայմանագրի Ընկերությանը վերապահված է՝ հաճախորդների կողմից պահառության, պահպանման կամ կառավարման նպատակով հանձնված արժեթղթերը, սահմանափակ կամ պայմանական օգտագործման իրավունքով գրավադրել կարճաժամկետ հետզնման պայմանագրերով Ընկերության կողմից պարտազանցման բացակայության դեպքում: Սակայն պայմանագրային կողմը պարտավոր է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ժամկետի ավարտին:

Բանկերից ստացված վարկերը ապահովված են Ընկերության կողմից գրավադրված 1,082,617 հազար << դրամ (2024թ.՝ առկա չէ) մինչև 90 օր տևողությամբ ավանդային հաշիվներով բանկերում (տե՛ս Ծանոթագրություն 12):

Ընկերությունն ունի գլխավոր վարկային պայմանագիր բանկի հետ, որի համաձայն ստանում է վարկեր, վարկային գծեր, երաշխիքներ, օվերդրաֆտներ, ֆակտորինգային ֆինանսավորում, ֆինանսական վարձակալություն: Բանկից ստացված վարկի մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրո է: Այդ պայմանագրի դիմաց գրավադրված են Ընկերության բանկային հաշիվները և հետագայում այդ հաշիվներին մուտքագրվող բոլոր դրամական միջոցները, ինչպես նաև Ընկերությունը կնքել է սեփականության իրավունքով պատկանող գույքով և դրամական միջոցներով երաշխավորության պայմանագիր (տե՛ս Ծանոթագրություն 12):

Հաշվետու ժամականաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2024թ.՝ նույնպես):

19 Պարտավորություններ բրոքերային ծառայությունների գծով

Ընկերության և իր հաճախորդների միջև կնքված պայմանագրերի համաձայն, ստացված գումարների դիմաց, Ընկերությունը պարտավորվում է պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով համապատասխան որոշված վճարի դիմաց հաճախորդներին մատուցել բրոքերային ծառայություններ: Տվյալ պարտավորությունները կարճաժամկետ են (տե՛ս Ծանոթագրություն 26):

Ընկերության և իր հաճախորդների միջև կնքված պայմանագրերի շրջանակներում ստացված դրամական միջոցները պահվում են Ընկերության սեփական կամ հաճախորդների համար բացված հաշիվներում: Կառավարման վերցված դրամական միջոցների այն մասը, որը պահվում է Ընկերության սեփական հաշիվներում ներկայացված է Ծանոթագրություն 12-ում: Ընկերությունը արտահաշվեկշռային հաշվառում է իրականացնում բրոքերային ծառայությունների շրջանակներում կառավարվող դրամական միջոցների նկատմամբ, որի մնացորդը 31 դեկտեմբերի 2025թ. դրությամբ կազմել է 7,175,620 հազար << դրամ:

20 Այլ պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Վարձակալության գծով պարտավորություններ	39,379	84,164
Այլ վճարվելիք գումարներ	19,954	50,910
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	105,585	204,952
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	164,918	340,026
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	61,276	45,813
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	61,276	45,813
Ընդամենը այլ պարտավորություններ	226,194	385,839

Վարձակալության գծով պարտավորություններ

Ընկերությունը վարձակալության պայմանագրեր է կնքել գլխամասային գրասենյակի համար: Վարձակալությունը արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Ընկերությունը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տե՛ս Ծանոթագրություն 16):

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

	2025թ.	2024թ.
Հունվարի 1-ի դրությամբ	84,164	10,476
Ավելացում	-	99,249
Վերաչափում	-	(1,641)
Տոկոսի կուտակում	7,816	2,968
Վճարումներ	(52,601)	(26,888)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	39,379	84,164

2025թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 12.2% (2024թ.՝ 12.11%):

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով չզեղչված պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է Ծանոթագրություն 27.3-ում:

21 Սեփական կապիտալ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 840,000 հազար դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 84,000 հասարակ անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,000 դրամ անվանական արժեքով:

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են.

	31 դեկտեմբերի 2025թ.		31 դեկտեմբերի 2024թ.	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Արմինե Նաչարյան	420,000	50	380,000	50
Արմեն Տեր-Հակոբյան	420,000	50	380,000	50
	840,000	100	760,000	100

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

2025թ.-ի ընթացքում Ընկերությունը ավելացրել է բաժնետիրական կապիտալը 80,000 հազ. << դրամ գումարով:

2025թ.-ի ընթացքում Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշել է նախորդ տարիների չբաշխված շահույթից Ընկերության բաժնետերերին վճարել 2,400,000 հազ. << դրամի շահաբաժիններ (2024թ. համար՝ 1,600,000 հազ. << դրամի շահաբաժիններ): Հաշվի առնելով, որ Ընկերությունը վճարել

է 2024թ. համար 800,000 հազ. << դրամ միջանկյալ շահաբաժին, վճարման ենթական գումարը կազմել է 1,600,000 հազ. << դրամ:

Վճարված շահաբաժիններից 1,520,000 հազ. << դրամ ուղղվել է կապակցված կողմերից ստացված փոխառությունների մարմանը (2024թ.՝ 983,665 հազ. << դրամ):

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն << օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն << օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով:

22 Պայմանականություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության նկատմամբ չի եղել որևէ դատական հայց: Հետևաբար Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն:

Ընկերությունը ունի շարժական գույքի ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

23 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերությունը չունի վերջնական վերահսկող անձ:

Ընկերությունը իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են փոխառությունները, ռեպո համաձայնագրերը,

վարձավճարները և այլն: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտը և ծախսերը հետևյալն են.

	2025թ.		2024թ.	
	Բաժնետերեր և կապակց- ված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակց- ված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
Տարվա ընթացքում ավելացում	8,264,391	-	-	-
Տարվա ընթացքում նվազում	(7,968,197)	-	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	296,194	-	-	-
Ներդրումներ արժեթղթերում՝ ՀՀ ֆոնդի փայ				
Հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
Տարվա ընթացքում ավելացում	240,535	-	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	240,535	-	-	-
Տրամադրված փոխառություններ				
Հունվարի 1-ի դրությամբ	-	-	269,905	-
Տարվա ընթացքում տրամադրված	200,000	-	2,532,000	-
Տարվա ընթացքում մարված	(200,000)	-	(2,801,905)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	-
Ներգրաված վարկեր և փոխառություններ				
Հունվարի 1-ի դրությամբ	41,697	-	42,549	-
Տարվա ընթացքում ստացված	155,483	-	6,947	-
Տարվա ընթացքում մարված	(6,500)	-	(7,799)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	190,481	-	41,697	-

	2025թ.		2024թ.	
	Բաժնետերեր և կապակց- ված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակց- ված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Պարտավորություններ բրոքերային ծառայությունների գծով				
Հունվարի 1-ի դրությամբ	109,818	-	-	-
Նոր փոխկապակցված անձ	248,058	-	-	-
Տարվա ընթացքում ստացված	43,953,132	25,881	4,730,639	-
Տարվա ընթացքում վճարված	(43,527,423)	(25,114)	(4,620,821)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	783,585	767	109,818	-
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ				
Հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
Տարվա ընթացքում ավելացում	44,695	-	-	-
Տարվա ընթացքում վճարված	(18,000)	-	-	-
Հաշվեգրված տոկոսներ և այլ ճշգրտումներ	4,266	-	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	30,961	-	-	-
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն				
Տոկոսային ծախսեր, ներառյալ ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	(4,667)	-	(2,326)	-
Արժեթղթերի վաճառքից վնաս	(54,538)	-	(698)	-
Կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալության ծախսեր	(10,800)	-	(10,800)	-
Արժեզրկման ծախս	-	-	(4,671)	-
Գործուղման ծախսեր	(810)	(2,924)	(653)	(2,581)
Վերագնահատում	527,015	-	257	-
Արտարժույթի առք ու վաճառքից եկամուտ	1,258	-	5,172	-
Պահառության գործունեությունից միջնորդավճարներ	47,884	-	2,438	-
Բրոքերային ծառայություններից եկամուտներ	35,239	-	6,079	-

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	239,635	160,189
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	239,635	160,189

24 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

24.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

				31 դեկտեմբերի 2025թ.	
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	12,235,595	-	12,235,595	12,235,595
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	3,357,132	-	3,357,132	3,357,132
Տրամադրված փոխառություններ	-	2,016,023	-	2,016,023	2,038,906
Այլ ակտիվներ	-	683,156	-	683,156	683,156

				31 դեկտեմբերի 2025թ.	
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ					
Ներգրված վարկեր և փոխառություններ	-	58,236,134	-	58,236,134	58,236,134
Պարտավորություններ բրոքերային ծառայությունների գծով	-	12,451,561	-	12,451,561	12,451,561
Վարձակալության գծով պարտավորություններ	-	39,379	-	39,379	39,379
Այլ պարտավորություններ (բացառությամբ ֆինանսական վարձակալության)	-	125,539	-	125,539	125,539

				31 դեկտեմբերի 2024թ.	
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	5,618,180	-	5,618,180	5,618,180
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	998,240	-	998,240	998,240
Այլ ակտիվներ	-	96,799	-	96,799	96,799

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ					
Ներգրված վարկեր և փոխառություններ	-	39,428,401	-	39,428,401	39,428,401
Պարտավորություններ բրոքերային ծառայությունների գծով	-	13,831,228	-	13,831,228	13,831,228
Վարձակալության գծով պարտավորություններ	-	84,164	-	84,164	84,164
Այլ պարտավորություններ (բացառությամբ ֆինանսական վարձակալության)	-	255,862	-	255,862	255,862

Պահանջներ և պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

24.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

	31 դեկտեմբերի 2025թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող արժեթղթեր, այդ թվում գրավադրված	17,366,607	54,310,544	-	71,677,151
Զուտ իրական արժեք	17,366,607	54,310,544	-	71,677,151

	31 դեկտեմբերի 2024թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող արժեթղթեր, այդ թվում գրավադրված	7,549,830	51,963,392	-	59,513,222
Զուտ իրական արժեք	7,549,830	51,963,392	-	59,513,222

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում 1-ին և 2-րդ մակարդակների միջև փոխանցումներ չեն կատարվել:

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Զգնանշվող պարտքային արժեթղթեր

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող չգնանշվող պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու նպատակով:

25 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ թե ոչ:

	Ճանաչված ֆինանսական պարտավորությունների ամախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների ամախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	31 դեկտեմբերի 2025թ.		
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր (Ծանոթագրություն 14, 18)	(54,945,636)	-	(54,945,636)	59,590,981	-	4,645,345
Ընդամենը	(54,945,636)	-	(54,945,636)	59,590,981	-	4,645,345

	Ճանաչված ֆինանսական պարտավորությունների ամախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների ամախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	31 դեկտեմբերի 2024թ.		
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր (Ծանոթագրություն 14, 18)	(39,269,395)	-	(39,269,395)	42,410,537	-	3,141,142
Ընդամենը	(39,269,395)	-	(39,269,395)	42,410,537	-	3,141,142

26 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Ընկերության չգեղջկված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 27.3-ում:

	31 դեկտեմբերի 2025թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12,235,595	-	12,235,595	-	-	-	12,235,595
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,356,132	1,000	3,357,132	-	-	-	3,357,132
Ներդրումներ արժեթղթերում	6,651,846	240,497	6,892,343	4,488,099	705,728	5,193,827	12,086,170
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	57,579,550	2,011,431	59,590,981	-	-	-	59,590,981
Տրամադրված փոխառություններ	-	2,038,906	2,038,906	-	-	-	2,038,906
Այլ ակտիվներ	683,156	-	683,156	-	-	-	683,156
	80,506,279	4,291,834	84,798,113	4,488,099	705,728	5,193,827	89,991,940
Պարտավորություններ							
Ներգրված վարկեր և փոխառություններ	54,631,867	3,483,231	58,115,098	121,036	-	121,036	58,236,134
Պարտավորություններ բրոքերային ծառայություններից	12,451,561	-	12,451,561	-	-	-	12,451,561
Վարձակալության գծով պարտավորություններ	3,421	27,447	30,868	8,511	-	8,511	39,379
Այլ պարտավորություններ	-	125,539	125,539	-	-	-	125,539
	67,086,849	3,636,217	70,723,066	129,547	-	129,547	70,852,613
Զուտ դիրք	13,419,430	655,617	14,075,047	4,358,552	705,728	5,064,280	19,139,327
Կուտակված ճեղքվածք	13,419,430	14,075,047		18,433,599	19,139,327		

	31 դեկտեմբերի 2024թ.						
	Ցափահանց և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա- հանրա- գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա- հանրա- գումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,618,180	-	5,618,180	-	-	-	5,618,180
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	997,240	1,000	998,240	-	-	-	998,240
Ներդրումներ արժեթղթերում	5,066,415	465,147	5,531,562	5,395,246	6,175,877	11,571,123	17,102,685
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	41,550,567	859,970	42,410,537	-	-	-	42,410,537
Այլ ակտիվներ	96,799	-	96,799	-	-	-	96,799
	53,329,201	1,326,117	54,655,318	5,395,246	6,175,877	11,571,123	66,226,441
Պարտավորություններ							
Ներգրավված վարկեր և փոխառություններ	38,182,916	1,225,612	39,408,528	19,873	-	19,873	39,428,401
Պարտավորություններ բրոքերային ծառայություններից	13,831,228	-	13,831,228	-	-	-	13,831,228
Վարձակալության գծով պարտավորություններ	3,026	37,015	40,041	44,123	-	44,123	84,164
Այլ պարտավորություններ	-	255,862	255,862	-	-	-	255,862
	52,017,170	1,518,489	53,535,659	63,996	-	63,996	53,599,655
Զուտ դիրք	1,312,031	(192,372)	1,119,659	5,331,250	6,175,877	11,507,127	12,626,786
Կուտակված ճեղքվածք	1,312,031	1,119,659		6,450,909	12,626,786		

27 Ռիսկի կառավարում

Ներդրումային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Ընկերությունն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Ընկերության շահութաբերության կայունության ապահովման գործում, և Ընկերության յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի և գործառնական ռիսկերի:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի կառավարումն իրականացվում է Ընկերության կառուցվածքային տարբեր մակարդակներում:

Բաժնետերերի ժողովը

Բաժնետերերի ժողովը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ուղղվածության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Տնօրինություն

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի իրականացման և վերահսկման համար: Պատասխանատու է Ընկերության ակտիվների և պարտավորությունների կառավարման համար: Պատասխանատվություն է կրում նաև Ընկերության իրացվելիության ռիսկի և ֆինանսավորման ռիսկի կառավարման համար:

Ընկերության ռիսկի կառավարման քաղաքականության նպատակն է ախտորոշել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, և արժանահավատ և նորացված տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը: Ընկերությունը պարբերաբար վերանայում է ռիսկի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայում, գործիքներում փոփոխություններն արտացոլելու և լավագույն փորձին հետևելու համար:

Կարևորագույն ռիսկերն են պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկը: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքների, տոկոսադրույքների և այլ գնային ռիսկերը:

27.1 Պարտքային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված փոխառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Ընկերությանը կորուստներ կարող է պատճառել:

Պարտքային ռիսկը կապված է հիմնականում փոխառությունների տրամադրման հետ և ներդրումային գործունեության հետ, որոնք Ընկերության ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ:

2025 և 2024թթ. ընթացքում Ընկերությունում չկան արժեզրկված ակտիվներ:

Ընկերության ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

Ընկերությունը իր պարտքային ռիսկը զսպելու նպատակով կարող է իր հետ համագործակցող հաստատությունների համար սահմանել միջոցների տեղաբաշխման առավելագույն սահմանաչափեր: Յուրաքանչյուր հաստատության համար կարող է սահմանվել առանձին սահմանաչափ:

27.1.1 Պարտքային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Ընկերության՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ:

Ներքին վականիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 27.1.2-ում:

Ներքին վարկանիշեր	31 դեկտեմբերի 2025թ.		31 դեկտեմբերի 2024թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Ստանդարտ	12,260,118	12,260,118	5,629,441	5,629,441
Համախառն հաշվեկշռային արժեք	12,260,118	12,260,118	5,629,441	5,629,441
Պարտքային կորուստների գծով պահուստ	(24,523)	(24,523)	(11,261)	(11,261)
Զուտ հաշվեկշռային արժեք	12,235,595	12,235,595	5,618,180	5,618,180
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	3,363,860	3,363,860	1,000,432	1,000,432
Համախառն հաշվեկշռային արժեք	3,363,860	3,363,860	1,000,432	1,000,432
Պարտքային կորուստների գծով պահուստ	(6,728)	(6,728)	(2,192)	(2,192)
Զուտ հաշվեկշռային արժեք	3,357,132	3,357,132	998,240	998,240
Տրամադրված փոխառություններ				
Ստանդարտ	2,042,992	2,042,992	-	-
Համախառն հաշվեկշռային արժեք	2,042,992	2,042,992	-	-
Պարտքային կորուստների գծով պահուստ	(4,086)	(4,086)	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	2,038,906	2,038,906	-	-
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	684,525	684,525	96,799	96,799
Համախառն հաշվեկշռային արժեք	684,525	684,525	-	-
Պարտքային կորուստների գծով պահուստ	(1,369)	(1,369)	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	683,156	683,156	96,799	96,799

27.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Ընկերության՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տե՛ս Ծանոթագրություն 4.6(զ)):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Ընկերությունը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում պարտագանցում տեղի ունենալու ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Ընկերությունը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Ընկերությունը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Տրված փոխատվությունների չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված փոխառությունների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց՝ փոխառությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Պարտազանցում («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես պարտազանցման դեպք, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտվող փոխառություններ. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան): Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Ներդրումային արժեթղթերի չափանիշներ

Ստորև ներկայացված են արժեթղթերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները, որոնք բոլորն էլ որոշման մեջ ունեն հավասար կշիռ.

- 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն - 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցում տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում երկրի (սուվերեն) վարկանիշը: Վարկանիշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's ու Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's ու Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ թողարկողները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և Ընկերությունը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ պարտազանցման վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Ընկերության կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցե մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Ընկերությունը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են պարտազանցում տեղի ունենալու ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված՝ ոչ ժամկետանց ֆինանսական ակտիվները սահմանվում են որպես բարձր վարկանիշ ունեցող, մինչև 30 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ստանդարտ վարկանիշ ունեցող, ավելի քան 30 օր և մինչև 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ոչ ստանդարտ կամ ցածր և ավելի քան 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ չաշխատող վարկանիշ ունեցող) գործոններով, որոնք մատնանշում են պատազանցում տեղի ունենալու ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Խմբային կամ անհատական գնահատում

Ընկերությունը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փոլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից փոխառությունները՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- զանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեթղթ/իրական արժեթղթ՝ այլ համապատասխան ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները,
- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, եթե սկզբնական փոխառությունը ապաճանաչվել է, իսկ նոր փոխառությունը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Ընկերությունը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով փոխառությունների բնութագրերի վրա:

Պարտազանցման սահմանում և «առողջացում»

Ընկերությունը համարում է ֆինանսական գործիքը պարտազանցման ենթարկված, և, հետևաբար, Փոլ 3-ում դասակարգված (արժեզրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Ընկերությունը բանկային հաշիվները համարում է պարտազանցման ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք փոխառուն վճարունակ է, Ընկերությունը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Ընկերությունը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ պարտազանցման ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է փոխառությունը դասակարգել Փոլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փոլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ փոխառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,

- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում՝ փոխառության զգալի մասի զիջմամբ,
- Ընկերությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Ընկերության քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում պարտագանցման սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Ընկերության՝ ակնկալվող պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չաշխատող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Վերանայված և փոփոխված տրամադրված փոխառություններ

Ընկերությունը երբեմն զիջումներ կամ փոփոխություններ է կատարում տրամադրված փոխառության սկզբնական պայմաններում՝ արձագանքելով փոխառուի ֆինանսական դժվարություններին՝ գրավը սեփականություն վերցնելու կամ այլ կերպ այն հավաքագրելու փոխարեն: Ընկերությունը համարում է փոխառությունը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով փոխառուի ներկա կամ ապագային առնչվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե փոխառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ծախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և փոխառության նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո ցանկացած արժեզրկում չափվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ, որը հաշվարկվում է պայմանների փոփոխությունից առաջ: Դա Ընկերության՝ վերանայված փոխառությունների վերահսկման քաղաքականությունն է, ինչը կօգնի ապահովել ապագա վճարումների հավանականությունը:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Ընկերությունը «առողջացման» ժամանակաշրջան է սահմանում վերանայումից հետո ընկած 12-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է միայն վերանայված և չաշխատող պարտքերի համար (բացառելով արտոնյալ ժամանակահատվածը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայումից անմիջապես հետո հնարավոր չէ որոշել ֆինանսական դժվարությունների առկայությունը՝ անհրաժեշտ է օգտագործել «առողջացման» ժամանակաշրջանը՝ որոշելու համար արդյոք պարտքն արդյունավետ է «առողջացել»:
Այսպիսով, բոլոր վերանայված և չաշխատող պարտքերը վերանայումից հետո՝ «առողջացման» ժամանակաշրջանում, պետք է մնան 3-րդ փուլում, անկախ պարտավորության դրական դրսևորումից (ժամկետանց օրերի բացակայություն և այլն):

Ընկերությունը փորձաշրջան է համարում «առողջացման» ժամանակաշրջանից հետո ընկած 24-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է վերանայված և աշխատող պարտքերի համար: Ակտիվը՝ որպես վերանայված և աշխատող պարտքեր դասակարգվելուց հետո շարունակում է մնալ առնվազն 24-ամսյա փորձաշրջանում որպես վերանայված:

Որպեսզի փոխառություն չդասակարգվի վերանայված կատեգորիայում, հաճախորդը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին.

- իր բոլոր պարտքերը պետք է դիտարկվեն աշխատող,
- երկու տարվա փորձաշրջանն ավարտվում է այն օրը, երբ վերանայման պայմանագիրը համարվում է աշխատող,
- փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսի ընթացքում ոչ էական համարվող մայր գումարի կամ տոկոսագումարի կանոնավոր վճարումներ,
- հաճախորդը չունի որևէ պայմանագիր, որը ավելի քան 30 օր ժամկետանց է:

Պարտազանցման տեղի ունենալու հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է փոխառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ փոխառության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են պարտազանցումից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական գեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար պարտազանցման տեղի ունենալու դիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանատելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում պարտազանցման տեղի ունենալու պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Ընկերության պարտազանցումների վերջին տվյալների վերլուծության վրա:

Ապագայամետ տեղեկատվություն

Ընկերությունը չի ներառել ապագայամետ տեղեկատվությունը ֆինանսական ակտիվների հետ կապված: Ղեկավարության գնահատմամբ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու ազդեցությունն էական չէ:

27.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Պարտքային ռիսկի ենթարկվող ակտիվներն հիմնականում տեղաբաշխված են << տարածքում:

27.2 Ծուկայական ռիսկ

Ծուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են

տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Ընկերությունը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանափակումներ ֆինանսական գործիքների գծով, որոնք կանոնավոր ուսումնասիրվում և հաստատվում են Գործադիր տնօրենի կողմից:

27.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Ստորև ներկայացվում է շահույթի կամ վնասի զգայունության վերլուծությունը՝ պայմանավորված շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությամբ, որի իրականացվել է 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա դիրքերի և եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	2025թ.	
	Փոփոխություններ հիմնական տոկոսա- դրույքներում	Շահույթ կամ վնաս
<< դրամ	1	(2,810,383)
<< դրամ	(1)	3,134,133

	2024թ.	
	Փոփոխություններ հիմնական տոկոսա- դրույքներում	Շահույթ կամ վնաս
<< դրամ	1	(2,058,518)
<< դրամ	(1)	2,259,070

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2025թ.			2024թ.		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	<< դրամ	Ազատ փոխարկելի արտարժույթ	Այլ արտարժույթ	<< դրամ	Ազատ փոխարկելի արտարժույթ	Այլ արտարժույթ
Տոկոսաբեր ակտիվներ						
Ավանդ բանկում	7.52	-	-	8.59	-	-
Տրամադրված փոխառություններ	-	9.88	-	-	-	-
Ներդրումներ արժեթղթերում	8.93	8.82	17	10.83	6.26	-
Հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	8.64	5.54	-	10.56	3.71	-

	2025թ.			2024թ.		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	<< դրամ	Ազատ փոխարկելի արտարժույթ	Այլ արտարժույթ	<< դրամ	Ազատ փոխարկելի արտարժույթ	Այլ արտարժույթ
Տոկոսակիր պարտավորություններ						
Վարկեր բանկերից	-	-	12.11	-	-	-
Հետգնման պայմանագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ	7.19	4.24	-	7.74	5.00	-
Հետգնման պայմանագրեր ֆիզիկական անձանց հետ	5.50	-	-	-	3.16	-
Ստացված փոխառություններ	-	4.20	-	-	4.93	-

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի << դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

	31 դեկտեմբերի 2025թ.		31 դեկտեմբերի 2024թ.	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	10	909,539	10	872,358
Եվրո	10	(948,957)	10	4,834
ԱՄՆ դոլար	(10)	(909,539)	(10)	(872,358)
Եվրո	(10)	948,957	(10)	(4,834)

Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

	31 դեկտեմբերի 2025թ.			
	<< դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,614,706	4,030,868	590,021	12,235,595
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,140	1,928,567	1,419,425	3,357,132
Ներդրումներ արժեթղթերում	2,060,484	5,661,318	4,364,368	12,086,170
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	43,866,951	15,724,030	-	59,590,981
Տրամադրված փոխառություններ	-	2,038,906	-	2,038,906
Այլ ակտիվներ	23,073	543,315	116,768	683,156
Ընդամենը	53,574,354	29,927,004	6,490,582	89,991,940
Պարտավորություններ				
Ներգրված վարկեր և փոխառություններ	45,695,975	11,561,706	978,453	58,236,134
Պարտավորություններ բրոքերային ծառայությունների գծով	1,104,917	10,216,258	1,130,386	12,451,561
Վարձակալության գծով պարտավորություններ	39,379	-	-	39,379
Այլ պարտավորություններ	122,477	-	3,062	125,539
Ընդամենը	46,962,748	21,777,964	2,111,901	70,852,613
Զուտ դիրք 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,611,606	8,149,040	4,378,681	19,139,327
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	42,755,868	22,397,448	1,073,125	66,226,441
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	39,361,689	13,629,406	608,560	53,599,655
Զուտ դիրք 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,394,179	8,768,042	464,565	12,626,786

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև S<24-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

27.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը: Ընկերությունը պահում է բարձր իրացվելի ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում:

Ստորև ներկայացվում է 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս Ծանոթագրություն 26-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես:

	31 դեկտեմբերի 2025թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Ներգրված վարկեր և փոխառություններ	54,749,264	3,522,647	126,167	-	58,398,078	58,236,134
Պարտավորություններ բրոքերային ծառայություններից	12,451,561	-	-	-	12,451,561	12,451,561
Վարձակալության գծով պարտավորություններ	3,872	30,270	9,386	-	43,528	39,379
Այլ պարտավորություններ	-	125,539	-	-	125,539	125,539
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	67,204,697	3,678,456	135,553	-	71,018,706	70,852,613

	31 դեկտեմբերի 2024թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Ներգրված վարկեր և փոխառություններ	38,266,585	1,237,658	20,075	-	39,524,318	39,428,401
Պարտավորություններ բրոքերային ծառայություններից	13,831,228	-	-	-	13,831,228	13,831,228
Վարձակալության գծով պարտավորություններ	3,872	43,987	50,641	-	98,500	84,164
Այլ պարտավորություններ	-	255,862	-	-	255,862	255,862
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	52,101,685	1,537,507	70,716	-	53,709,908	53,599,655

27.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Ընկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է խորհուրդը, գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

28 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

	Ներգրաված վարկեր և փոխառություններ	Վարձակալության գծով պարտավորություններ	Ֆինանսավորման գործունեությունից ընդամենը պարտավորություններ
Հաշվեկշռային արժեք 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	208,630	10,476	219,106
Մուտքեր	152,139,198	99,249	152,238,447
Մարումներ	(151,981,147)	(26,888)	(152,008,035)
Արտարժույթային փոխարկումներ	(207,864)	-	(207,864)
Այլ	189	1,327	1,516
Հաշվեկշռային արժեք 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	159,006	84,164	243,170
Մուտքեր	9,486,809	-	9,486,809
Մարումներ	(8,656,287)	(52,601)	(8,708,888)
Արտարժույթային փոխարկումներ	114,495	-	114,495
Այլ	4,132	7,816	11,948
Հաշվեկշռային արժեք 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,108,155	39,379	1,147,534

«Այլ» տողում ներառված են նոր ձևավորված վարձակալության գծով պարտավորությունները և անկանխիկ շարժ հանդիսացող վարձակալության վերանայումները: Այն նաև ներառում է պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, ստացված փոխառությունների և վարձակալության գծով պարտավորությունների գծով հաշվեգրված, բայց դեռևս չվճարված տոկոսներից: Ընկերությունը դասակարգում է վճարված տոկոսները որպես դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից:

29 Կապիտալի համարժեքություն

Ընկերությունը կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Ընկերությունը պահպանում է ամուր պարտքային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է երկրորդային կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման և այլ պահուստները:

<< կենտրոնական բանկը ներդրումային ընկերությունների համար սահմանել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի տնտեսական նորմատիվ՝ 300,000 հազար դրամ:

<< կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն << կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտի չենթարկված	
	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Հիմնական կապիտալ	18,706,587	11,889,325
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	18,706,587	11,889,325
Ռիսկով կշռված ակտիվներ	2,620,793	1,494,488
Կապիտալի համարժեքության նորմատիվ (Ն1.1)	14.01%	12.57%

Ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

30 Հետհաշվեկշռային իրադարձություններ

Կանոնադրական կապիտալ

2026թ. փետրվարի 23-ին Ընկերության բաժնետերերի ժողովը հաստատել է, որ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 8,400,000 հազ. << դրամ՝ կազմված 100,000 << դրամ անվանական արժեքով 84,000 հատ հասարակ անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսերից:

2026թ մարտի 4-ին կանոնադրական կապիտալը փաստացի լրացուցիչ համալրվել է 7,560,000 հազ. << դրամով:

Ընկերության վարկանշավորում

2026թ. մարտի 19-ին Fitch Ratings միջազգային վարկանշային գործակալությունը Ընկերությանը հաստատել է «B-» երկարաժամկետ թողարկողի դեֆոլտի վարկանիշը (Long-term Issuer Default Rating (IDR)):

**Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն**

**«Կուրբ Ինվեսթ» փակ բաժնետիրական
ընկերություն**

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևանի Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Կուբ Ինվեսթ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կուբ Ինվեսթ» փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԻ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԻ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության

հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերության լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերության դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Նաիրա Ուլունց
Առաջադրանքի ղեկավար



7 ապրիլի, 2025թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսարդյունքի մեթոդով	5	292,118	484,051
Տոկոսային ծախս	5	(1,912,945)	(1,074,659)
Զուտ տոկոսային ծախս		(1,620,827)	(590,608)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	6	3,147,396	1,086,451
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	6	(1,517,979)	(1,974,283)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ (ծախս)		1,629,417	(887,832)
Զուտ առևտրային եկամուտ	7	16,603,587	13,289,362
Զուտ օգուտ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վերադասակարգումից	14	347,305	-
Արտարժույթի վերագնահատումից զուտ օգուտ		1,237,727	234,089
Պարտքային կորուստների գծով (ծախս) ծախսի հակադարձում	8	19,371	(26,426)
Զուտ գործառնական եկամուտ		18,216,580	12,018,585
Անձնակազմի գծով ծախսեր	9	(7,566,284)	(6,185,706)
Այլ ծախսեր	10	(358,237)	(229,793)
Շահույթ մինչև հարկումը		10,292,059	5,603,086
Շահութահարկի գծով ծախս	11	(1,798,018)	(1,013,959)
Տարվա շահույթ		8,494,041	4,589,127
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		8,494,041	4,589,127

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 65-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ		31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
	Ծանոթ.		
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	5,618,180	777,907
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13	998,240	6,565,125
Ներդրումներ արժեթղթերում	14	17,102,685	8,787,573
Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	14	42,410,537	9,831,841
Տրամադրված փոխառություններ	15	-	265,234
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	166,001	29,255
Հետաձգված հարկային ակտիվ	11	4,427	59,393
Այլ ակտիվներ	17	107,115	31,924
Ընդամենը՝ ակտիվներ		66,407,185	26,348,252
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ	18	39,428,401	9,319,697
Պարտավորություններ բրոքերային ծառայությունների գծով	19	13,831,228	10,110,539
Շահութահարկի գծով ընթացիկ պարտավորություն		1,121,841	1,035,352
Այլ պարտավորություններ	20	385,839	456,829
Ընդամենը՝ պարտավորություններ		54,767,309	20,922,417

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	21	760,000	640,000
Գլխավոր պահուստ		96,479	71,479
Չբաշխված շահույթ		10,783,397	4,714,356
Ընդամենը՝ սեփական կապիտալ		11,639,876	5,425,835
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ			
		66,407,185	26,348,252

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. ապրիլի 7-ին:

Միքայել Մարգարյան

Գլխավոր տնօրեն / Տնօրենության նախագահ

Արմեն Ազիզյան

Գլխավոր հաշվապահ




Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 65-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	640,000	71,479	4,714,356	5,425,835
Տարվա շահույթ	-	-	8,494,041	8,494,041
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	8,494,041	8,494,041
Բաժնետիրական կապիտալի ավելացում	120,000	-	-	120,000
Հատկացում պահուստին	-	25,000	(25,000)	-
Շահաբաժիններ բաժնետերերին (Ծանոթագրություն 21)	-	-	(2,400,000)	(2,400,000)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	120,000	25,000	(2,425,000)	(2,280,000)
Հաշվեկշիռը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	760,000	96,479	10,783,397	11,639,876
Հաշվեկշիռը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	640,000	71,479	125,229	836,708
Տարվա շահույթ	-	-	4,589,127	4,589,127
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	4,589,127	4,589,127
Հաշվեկշիռը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	640,000	71,479	4,714,356	5,425,835

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 65-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսներ	208,953	324,350
Վճարված տոկոսներ	(1,865,040)	(1,082,552)
Ստացված կոմիսիոն և այլ վճարներ	3,147,396	1,086,451
Վճարված կոմիսիոն և այլ վճարներ	(1,517,979)	(1,974,283)
Զուտ առևտրային օգուտ	15,865,893	13,391,968
Զուտ օգուտ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վերադասակարգումից	347,305	-
Անձնակազմի գծով ծախսեր	(7,566,284)	(6,185,706)
Այլ (ծախսեր) եկամուտներ	(128,334)	4,587
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	8,491,910	5,564,815
(Ավելացում) նվազում գործառնական ակտիվներում		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,859,360	(5,936,447)
Տրամադրված փոխառություններ	(2,532,000)	(1,358,134)
Տրամադրված փոխառությունների վճարումներ	90,000	1,243,539
Ներդրումներ արժեթղթերում	(40,023,633)	(14,817,058)
Այլ ակտիվներ	(339,263)	664,818
Ավելացում գործառնական պարտավորություններում		
Պարտավորություններ բրոքերային ծառայությունների գծով	7,135,320	10,104,085
Այլ պարտավորություններ	(344,797)	355,358
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործունեության համար օգտագործված մինչև շահութահարկը	(22,663,103)	(4,179,024)
Վճարված շահութահարկ	(1,656,563)	-
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(24,319,666)	(4,179,024)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(62,766)	(23,458)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(62,766)	(23,458)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	120,000	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ	30,364,717	5,592,056
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունների	-	(846,764)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(26,888)	(8,400)
Շահաբաժինների վճարում (Շանթթագրություն 21)	(1,416,335)	-
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	29,041,494	4,736,892
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	4,659,062	534,410
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	777,907	618,492
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	192,472	(374,995)
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքներ վրա	(11,261)	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (Շանթթագրություն 12)	5,618,180	777,907

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 65-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Կուր Ինվեսթ» փակ բաժնետիրական ընկերության

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված
հազար հայկական (<<) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ն գործունեություն է իրականացնում արժեթղթերի և արտարժույթի շուկաներում, մասնավորապես՝

- հանդիսանում է արժեթղթերի բրոքեր և դիլեր,
- մատուցում է ռեստավարման և պահառության ծառայություններ,
- տրամադրում է խորհրդատվություն արժեթղթերի շուկայի վերաբերյալ,
- իրականացնում է արտարժույթի անկանխիկ առուվաճառքի գործառնություններ:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՄ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն և գործում է Հայաստանի Հանրապետության («ՀՀ») օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 2017 թվականի փետրվարի 3-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի («ՀՀ ԿԲ») կողմից թիվ 33 Ա որոշմամբ և տրվել է ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա:

Ընկերությունը 28.06.2024թ.-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 107 Ա որոշմամբ գրանցել է «Շանհայ Դրագոն» ոչ հրապարակային միջակայքային պայմանագրային ներդրումային ֆոնդ, սակայն 2024թ. գործունեություն չի իրականացրել:

Ընկերության գլխավոր գրասենյակը գտնվում է քաղաք Երևանում: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փողոց 1:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ. կազմել է 26 մարդ (2023թ.՝ 30 մարդ):

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունը ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Ընկերության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

Հայկական դրամը սպասվածից ավելի ուժեղ գտնվեց՝ զսպելով գնաճը, բայց դժվարություններ ստեղծելով արտահանողների և արտարժույթային պարտավորություններ ունեցող ձեռնարկությունների համար:

Համաշխարհային գնաճը և էներգայի աճող գները ճնշում են գործադրում Հայաստանի տնտեսության վրա՝ հատկապես ներմուծումից կախվածության պատճառով:

Չնայած այս մարտահրավերներին՝ ձեռնարկությունները դիվերսիֆիկացնում են մատակարարման շղթաները և ուսումնասիրում նոր շուկաներ, իսկ կառավարության բարեփոխումների ջանքերը երկարաժամկետ կայունության ուղի են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի հաջողությունը կախված կլինի իր ձեռնարկատիրության՝ այդ ռիսկերը արդյունավետորեն նավարկելու կարողությունից:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

2.1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ձևը

Ընկերությունը ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ըստ իրացվելիության՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվության համապատասխան հողվածային տողի ակտիվների/պարտավորությունների մեծ մասը ստանալու/մարելու Ընկերության մտադրության և ակնկալվող կարողության վրա: Հաշվետու ամսաթվից (ընթացիկ) հետո 12 ամսվա և հաշվետու ամսաթվից (ոչ ընթացիկ) հետո ավելի քան 12 ամիսների ընթացքում ակտիվների/պարտավորությունների ստացման կամ մարման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 26-ում:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Ընկերությունը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍՄ) և ՀՀՄՄ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (<<ՄՍ 1 փոփոխություններ),
- «Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հեղադարձ վարձակալությամբ գործարքներում» (<<ՄՍ 16 փոփոխություններ),
- «Մատակարարման շղթայի ֆինանսավորման մեխանիզմներ» (<<ՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ),
- «Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ» (<<ՄՍ 1 փոփոխություններ)

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍՄ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից և ներկայացվում են ստորև.

- «Փոխանակելիության բացակայություն» (<<ՄՍ 21 փոփոխություն)

- ՖՀՄՍ 19 «Դուստր ծեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ»
- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

Ղեկավարության կանխատեսմամբ՝ բացառությամբ ստորև նշված ստանդարտների, որոնք գտնվում են գնահատման գործընթացում, այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)

2024թ. մայիսին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (<<ՀՄՍԻ) հրապարակել է փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման վերաբերյալ, որոնք փոփոխել են ՖՀՄՍ 9-ը և ՖՀՄՍ 7-ը:

Պահանջները ուժի մեջ են մտնելու 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ վաղաժամկետ կիրառման հնարավորությամբ և վերաբերում են՝

- էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով ֆինանսական պարտավորությունների մարմանը և
- ֆինանսական ակտիվների՝ ներառյալ կայուն զարգացման հետ կապված ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի բնութագրերի գնահատմաը:

Ընկերությունը գտնվում է նոր փոփոխությունների ազդեցության գնահատման գործընթացում:

ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

ՖՀՄՍ 18-ը փոխարինում է ՀՀՄՍ 1-ին՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» և ուժի մեջ է մտնում 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

Նոր ստանդարտը ներկայացնում է հետևյալ հիմնական նոր պահանջները.

Ընկերությունները պետք է դասակարգեն բոլոր եկամուտներն ու ծախսերը շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում հինգ՝ մասնավորապես՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, դադարեցված գործառնությունների և շահութահարկի կատեգորիաներով: Ընկերությունները պետք է ներկայացնեն նաև գործառնական շահույթի նոր ենթագումար: Ընկերությունների զուտ շահույթը չի փոխվի:

Ղեկավարության կողմից որոշված կատարողականի ցուցանիշները բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններին կից մեկ ծանոթագրությունում:

Տրամադրում է ընդլայնված ուղեցույց ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության խմբավորման վերաբերյալ:

Բացի այդ, բոլոր կազմակերպությունները անուղղակի մեթոդով գործառնական դրամական միջոցների հոսքերը ներկայացնելիս պետք է օգտագործեն գործառնական շահույթի ենթագումարը՝ որպես դրամական միջոցների հոսքերի հաշվետվության ելակետ:

Ընկերությունը շարունակում է գնահատել նոր ստանդարտի ազդեցությունը, մասնավորապես՝ կապված Ընկերության շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունների կառուցվածքի, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունների և Ղեկավարության կողմից որոշված կատարողականի ցուցանիշներ համար պահանջվող լրացուցիչ բացահայտումների հետ: Ընկերությունը նաև գնահատում է ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության խմբավորման վրա ազդեցությունը, ներառյալ որպես «այլ» դասակարգված հոդվածների մասով:

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով: Ֆինանսական գործիքները ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա գեղչված արժեքով, ինչպես նաև իրական արժեքով:

4.1.1 Համադրելի տեղեկատվություն

Համադրելի տեղեկատվությունը վերադասակարգվել է՝ հաշվետու ժամանակաշրջանի ներկայացման փոփոխությունների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ներկայացման հիմնական փոփոխություններն ունեցել են հետևյալ ազդեցությունները.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

	31 դեկտեմբերի 2023թ.	Վերադասակարգ- ման ճշգրտում	31 դեկտեմբերի 2023թ. (վերադասակարգ- ված)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	708,359	69,548	777,907
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,634,673	(69,548)	6,565,125

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության ներկայացման հիմնական փոփոխություններն ունեցել են հետևյալ ազդեցությունները.

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

	2023թ.	Վերադասակարգ- ման ճշգրտում	31 դեկտեմբերի 2023թ. (վերադասակարգ- ված)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(6,005,430)	68,983	(5,936,447)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	617,927	565	618,492
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	708,359	69,548	777,907

4.2 Կլիմային առնչվող հարցեր

Ընկերությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ծախսերի հետ, և որոշակի ապրանքների,

արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

4.3 Արտարժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (<< դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: << դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում է ուղղակիորեն շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված դրամային արժեթղթերի (որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով ներդրումային արժեթղթեր դասակարգվող) իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսեր, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ բաժնային գործիքներ դասակարգված բաժնետոմսերինը, որոնց համար ընտրությունը կատարվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում իրական արժեքի հետագա փոփոխությունները ներկայացնելու տարբերակը, ընդգրկվում են կապիտալում՝ իրական արժեքի փոփոխությունների պահուստում:

Յուրաքանչյուր արտարժույթային գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
<< դրամ/1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
<< դրամ/1 Եվրո	413.89	447.9
<< դրամ/1 Ռուբ	3.71	4.5

4.4 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Ընկերությունը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս Ծանոթագրություն 4.6 (զ) -ում:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ ներդրումների կառավարման վճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները, ճանանչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Ընկերության ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Ընկերությունը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից և արտարժույթային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը, երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է, ինչպես նաև ածանցյալ գործիքներից զուտ օգուտը կամ վնասը:

4.5 Ծահուֆահարկ

Ծահույթի գծով հաշվետու տարվա շահուֆահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ծահուֆահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գույքի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

<<-ում Ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.6 Ֆինանսական գործիքներ

ա) Ճանաչում և սկզբնական չափում

Ընկերությունը սկզբնապես ճանաչում է տրամադրված և ներգրավված փոխառությունները դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Ընկերության՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափում է իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

բ) Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և

- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է՝

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Ընկերության ղեկավարությանը,
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Ընկերությունը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Ընկերությունը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական

ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ Ընկերությունը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամկետ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Ընկերության պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածություններ) և
- հատկանիշներ, որոնք փոխում են փողի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Ընկերությունը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

գ) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տե՛ս նաև Ծանոթագրություն 4.6(դ) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ վնասի տարբերությունը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորդված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Ընկերության կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ընկերությունը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կա՛մ բոլոր, կա՛մ գրեթե բոլոր ռիսկերն ու հատույցները, կա՛մ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոփով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Ընկերությունը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները:

Գործարքներում, որոնցում Ընկերությունը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Ընկերությունը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան սպասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

դ) Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Ընկերությունը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տե՛ս Ծանոթագրություն 4.6 (գ), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տե՛ս Ծանոթագրություն 4.6(գ), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

ե) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն գտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Ընկերությունը առևտրային գործունեության ընթացքում:

զ) Արժեզրկում

Ընկերությունը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Ընկերությունը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Ընկերությունը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ պարտազանցման ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Ընկերությունը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած պարտազանցման ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է Ծանոթագրություն 27.1.1-ում:

Վերոնշյալի հիման վրա՝ Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ ֆինանսական ակտիվները ճանաչվում են առաջին անգամ, Ընկերությունը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված ֆինանսական ակտիվները նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և ֆինանսական ակտիվը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ ֆինանսական ակտիվը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Ընկերությունը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված ֆինանսական ակտիվները նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և ֆինանսական ակտիվը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – արժեզրկված ֆինանսական ակտիվներ: Ընկերությունը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների խումբ - գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվներն սկզբնական ճանաչման պահին

արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները պարտազանցում տեղի ունենալու հավանականության, պարտազանցման պահին պարտքի գումարի, պարտազանցման դեպքում կորստի գումարի գեղջված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Պարտազանցում տեղի ունենալու հավանականություն (PD): Այն որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD): Այն ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարտքի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD): Այն արտահայտում է կորստի գնահատված գումարն, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Պարտազանցում տեղի ունենալու հավանականությունը պարտազանցման պահին պարտքի գումարը, պարտազանցման դեպքում կորստի գումարը մանրամասն բացահայտվում են Ծանոթագրություն 27.1.1-ում:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տե՛ս՝ Ծանոթագրություն 4.6(գ), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ գեղջվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյո՞ք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են պարտքային առումով արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացառաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Ընկերության կողմից վարկի կամ փոխառության պայմանների այնպիսի վերանայումը, որը Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսննկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Ֆինանսական ակտիվը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում,
- փոխառության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով:

Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ Ընկերության պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Կրճատումները զեղչվում են ռիսկով ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստներում:

Դուրսգրում

Փոխառությունները և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Ընկերությունը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Ընկերության պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

4.6.1 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են << առևտրային բանկերում հաշիվներից, այդ թվում, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռքբերման օրից 90 օր է, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակամիջոցում հեշտությամբ և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի և հաշիվներից քլիրինգային համակարգերում:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6.2 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ավանդային հաշիվներ: Բանկերում ներդրված ժամկետային ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Ընկերության ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.6.3 Փոխատվություններ և դեբիտորական պարտքեր

Տրամադրված փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է փոխառության իրական արժեքից, օրինակ երբ փոխառությունը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և փոխառության իրական արժեքների տարբերությունը փոխառության սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև փոխառությունները և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Տրված փոխառությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.6.4 Ներդրումներ արժեթղթերում

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արժեթղթերում ներդրումները ներառում են,

- պարտքային և բաժնային արժեթղթեր, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կամ նախորոշվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իսկ իրական արժեքի փոփոխությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում,
- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.6.5 Հետզնման և հակադարձ հետզնման պայմանագրեր

Հետզնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետզնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և

փոխառություններ: Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.7 Վարձակալություն

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում Ընկերությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կամ հստակ սահմանված է պայմանագրում, կամ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Ընկերությանը,
- Ընկերությունն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Ընկերությունն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Ընկերությունն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Ընկերությունը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնք իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրաթեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Ընկերությունը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

4.8 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Համակարգիչներ և կապի միջոցներ	3-5	33.3-20
Այլ հիմնական միջոցներ	3-8	33.3-12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Ընկերություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից գուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.9 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները անորոշ են: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.10 Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքի՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը գեղջվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով գեղջման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

4.11 Ներգրված միջոցներ

Ներգրված միջոցները սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսեր: Սկզբնական ճանաչումից հետո ներգրված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.12 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելվածար:

Գլխավոր պահուստ

Գլխավոր պահուստը ստեղծված է համաձայն << Օրենսդրության պահանջների՝ ընդհանուր պարտքային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Ընկերության կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս, քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

Զբաղիված շահույթ

Զբաղիված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով

կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

4.13 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՏՀՄ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

4.13.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ֆինանսական ակտիվների դասակարգում

Ընկերությունը գնահատում է այն բիզնես մոդելը, որի շրջանակում ակտիվները պահվում են, ինչպես նաև գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներ են:

Ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկմանը վերաբորող չափանիշների սահմանում

Ընկերությունը սահմանում է չափանիշներ որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրությունն և հաստատումը:

4.13.2 Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման մոդելներ: Սա ներառում է գնահատումների և ենթադրությունների մշակում համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան մատուցում է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է ձեռք բերվել անհատական գործարքների դեպքում (տե՛ս Ծանոթագրություն 24):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը նմանատիպ ակտիվների օգտագործման փորձի հիման վրա դատողության արդյունք է: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող մաշվածությունը:

Վարձակալության երկարաձգման օպցիոններ

Երբ Ընկերությունն ունի վարձակալության երկարաձգման օպցիոն, ղեկավարությունը օգտագործում է իր դատողությունը՝ որոշելու այդ հնարավորության ողջամտորեն կիրառումը: Ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները՝ ներառյալ իրենց նախկին փորձը և ակտիվը փոխելու դեպքում առաջացած ցանկացած ծախս, եթե երկարաձգման օպցիոնը չի կիրառվում վարձակալության ժամկետը որոշելու համար:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տե՛ս Ծանոթագրություն 23):

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը, ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տե՛ս Ծանոթագրություն 27):

Հարկային օրենսդրություն

<< հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տե՛ս Ծանոթագրություն 22:

5 Տոկոսային եկամուտ և ծախս

	2024թ.	2023թ.
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	102,888	10,719
Ներդրումներ արժեթղթերում	-	453,083
Հակադարձ հետգնման պայմանագրեր	189,230	20,249
Ընդամենը տոկոսային եկամուտ	292,118	484,051

	2024թ.	2023թ.
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ	42,909	488,196
Հետգնման պայմանագրեր	1,867,068	585,092
Վարձակալության գծով պարտավորություններ	2,968	1,371
Ընդամենը տոկոսային ծախս	1,912,945	1,074,659
Ընդամենը զուտ տոկոսային ծախս	(1,620,827)	(590,608)

6 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ և ծախս

	2024թ.	2023թ.
Պահառության գործունեությունից	667,673	266,801
Արժեթղթերով գործարքների միջնորդավճարներից	2,464,859	804,855
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	14,864	14,795
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	3,147,396	1,086,451
Բրոքերային ծառայություններից միջնորդավճարներ	1,355,436	1,826,733
Պահառության գործունեությունից	95,046	101,105
Բանկային ծախսեր	63,738	43,498
Այլ ծախսեր	3,759	2,947
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	1,517,979	1,974,283

7 Զուտ առևտրային եկամուտ

	2024թ.	2023թ.
Զուտ եկամուտ արժեթղթերի առք ու վաճառքից և վերագնահատումից	14,967,154	12,371,115
Զուտ օգուտ արտարժույթի առք ու վաճառքի գործարքներից	1,627,058	951,378
Զուտ օգուտ (վնաս) ածանցյալ գործիքներից	9,375	(33,131)
Ընդամենը զուտ առևտրային օգուտ	16,603,587	13,289,362

8 Պարտքային կորուստների գծով ծախս (ծախսի հակադարձում)

	Ծանոթ.	2024թ.		2023թ.	
		Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	11,261	11,261	-	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13	(2,114)	(2,114)	16,926	16,926
Ներդրումներ արժեթղթերում	14	(23,847)	(23,847)	7,314	7,314
Տրամադրված փոխառություններ	15	(4,671)	(4,671)	2,186	2,186
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս (ծախսի հակադարձում)		(19,371)	(19,371)	26,426	26,426

9 Անձնակազմի գծով ծախսեր

	2024թ.	2023թ.
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	7,566,284	6,185,706

Աշխատակիցների հատուցումները ներառում են 6,512,064 հազար << դրամ (2023թ.՝ 5,652,681 հազար << դրամ) գումարով պարգևավճարներ, որոնց մեծ մասը վճարվել են աշխատակիցներին՝ շուկայի ընդլայնման գործունեության և նոր բիզնես սեգմենտների զարգացման համար:

10 Այլ ծախսեր

	2024թ.	2023թ.
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	71,770	66,269
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	51,159	33,667
Ներկայացուցչական և գովազդի ծախսեր	44,123	17,632
Կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալության ծախսեր	26,370	25,963
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	25,454	12,304
Մաշվածություն և անորտիզացիա	24,951	15,981
Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	20,965	9,181
Գրասենյակային ծախսեր	19,528	10,138
Գործուղման ծախսեր	18,576	20,128
Վարկանշավորման գծով ծախս	14,904	-
Անդամակցության վճարներ	13,604	4,154
Բարեգործական նվիրատվություններ	10,000	-
Ապահովագրության ծախսեր	3,215	46
Անվտանգության գծով ծախսեր	1,296	816
Այլ ծախսեր	12,322	13,514
Ընդամենը այլ ծախսեր	358,237	229,793

11 Շահութահարկի գծով ծախս

	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	1,743,052	1,035,352
Հետաձգված հարկ	54,966	(21,393)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	1,798,018	1,013,959

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2023թ.՝ 18%): << հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	10,292,059		5,603,086	
Շահութահարկ	1,852,571	18	1,008,555	18
Չնվազեցվող ծախսեր	168,238	2	8,960	-
Արտարժույթի (դրական) բացասական փոխարժեքային տարբերություն	(222,791)	(2)	(42,136)	(1)
Փոխանցվող հարկային վնաս	-	-	38,580	1
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	1,798,018	18	1,013,959	18

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ՝

	2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Չուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	2024թ. Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	2,027	2,027	2,027	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	395	395	395	-
Ներդրումներ արժեթղթերում	18,215	(50,977)	(32,762)	-	(32,762)
Հիմնական միջոցներ	(4,315)	3,870	(445)	-	(445)
Պահուստներ	43,607	(7,142)	36,465	36,465	-
Վարձակալության գծով պարտավորություններ	1,886	(3,139)	(1,253)	-	(1,253)
Հետաձգված հարկային ակտիվ (պարտավորություն)	59,393	(54,966)	4,427	38,887	(34,460)

	2022թ.	Շահույթում	2023թ.		
		կամ վնասում ճանաչված	Չուս մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Հիմնական միջոցներ	(75)	(4,240)	(4,315)	-	(4,315)
Ներդրումներ արժեթղթերում	-	18,215	18,215	18,215	-
Պահուստներ	4,803	38,804	43,607	43,607	-
Այլ ակտիվներ	(171)	171	-	-	-
Վարձակալության գծով պարտավորություններ	-	1,886	1,886	1,886	-
Փոխանցվող հարկային վնաս	33,443	(33,443)	-	-	-
Հետաձգված հարկային ակտիվ (պարտավորություն)	38,000	21,393	59,393	63,708	(4,315)

12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Հաշիվներ բանկերում	2,423,710	435,985
Մինչև 90 օր տևողությամբ ավանդային հաշիվներ բանկերում	2,541,752	69,548
Ընթացիկ հաշիվներ քլիրինգային համակարգերում	663,979	272,374
	5,629,441	777,907
Պարտքային կորուստների գծով պահուստ	(11,261)	-
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,618,180	777,907

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության մեկ բանկում բացված բանկային հաշիվները, որոնց մնացորդը կազմում է 398,000 հազ. << դրամ (2023թ.՝ 288,725 հազ. << դրամ) և հետագայում այդ հաշիվներին մուտքագրվող բոլոր դրամական միջոցները գրավադրված են Ընկերության կնքված գլխավոր վարկային պայմանագրի դիմաց (Ծանոթագրություն 18):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

	2024թ.		2023թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	-	-	-	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	11,261	11,261	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,261	11,261	-	-

13 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ավանդ բանկում	1,000	1,000
Ստացվելիք գումարներ պահառության գործունեությունից	41,417	1,484
Արժեթղթերով գործարքների գծով դեբիտորական պարտքեր	957,976	6,566,947
Այլ	39	-
	1,000,432	6,569,431
Պարտքային կորուստների գծով պահուստ	(2,192)	(4,306)
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	998,240	6,565,125

Ավանդը բանկում ունի 90 օրից ավել մարման ժամկետ, և ըստ պայմանագրի սահմանված է, որ ավանդի գումարի վրա թույլատրվում է կատարել անսահմանափակ քանակությամբ մուտքագրումներ և ելքագրումներ ավանդից 1,000 հազ. << դրամ չնվազող մնացորդ պահպանելով:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

	2024թ.		2023թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	4,306	4,306	13,269	13,269
Զուտ վերաչափում	(2,114)	(2,114)	16,926	16,926
Դուրսգրում	-	-	(25,889)	(25,889)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,192	2,192	4,306	4,306

14 Ներդրումներ արժեթղթերում

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
<< պետական պարտատոմսեր	-	263,895
Պարտքային կորուստների գծով պահուստ	-	(718)
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	263,177
Շեղանակային պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
<< պետական պարտատոմսեր	-	8,500,020
Պարտքային կորուստների գծով պահուստ	-	(23,129)
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	8,476,891

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Ամորտիզացված արժեքով չափվող՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

	2024թ.		2023թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	23,847	23,847	16,533	16,533
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(23,847)	(23,847)	7,314	7,314
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	23,847	23,847

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերն ըստ եկամտաբերության և մարմանը մնացած ժամկետների.

	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
<< պետական պարտատոմսեր	-	-	9.25-12.5%	2028-2037

Ընկերությունը փոխել է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը և 2024թ. հունվարի 1-ի դրությամբ 8,763,915 հազար << դրամ հաշվեկշռային արժեքով արժեթղթերը վերադասակարգել է ամորտիզացված արժեքով չափվող կատեգորիայից դեպի իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով (FVTPL) կատեգորիա՝ ՖՀՄՍ 9-ի դրույթների համաձայն: Վերադասակարգման արդյունքում ամորտիզացված արժեքի և իրական արժեքի տարբերությունից առաջացած օգուտը 347,305 հազար << դրամ գումարով անմիջապես ճանաչվել է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Ընկերությունը չի վերանայել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի տվյալները, իսկ վերադասակարգումը իրականացվել է հեռանկարային հիմունքով, համաձայն ՖՀՄՍ 9-ի:

Շահույթի և վնասի միջոցով իրական արժեքով չափվող արժեթղթեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթեր		
<< պետական պարտատոմսեր	4,912,788	1,657,978
<< կորպորատիվ պարտատոմսեր	5,118,303	1,640,631
Օտարերկրյա պետական պարտատոմսեր	4,814,030	-
Օտարերկրյա կորպորատիվ պարտատոմսեր	2,251,026	3,965,776
Օտարերկրյա կորպորատիվ բաժնետոմսեր	6,538	1,260,011
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	17,102,685	8,524,396

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Հեղզնման պայմանագրերով գրավադրված շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթեր		
<< պետական պարտատոմսեր	42,178,146	1,354,950
<< կորպորատիվ պարտատոմսեր	232,391	-
Ընդամենը հետզնման պայմանագրերով գրավադրված շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	42,410,537	1,354,950

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթերին ըստ եկամտաբերության և մարմանը մնացած ժամկետների.

	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
<< պետական պարտատոմսեր	3.6-12.5	2026-2050	3.6-12.5	2025-2037
<< կորպորատիվ պարտատոմսեր	4.75-11.5	2025-2030	5.5	2025
Օտարերկրյա պետական պարտատոմսեր	0	2025	-	-
Օտարերկրյա կորպորատիվ պարտատոմսեր	1.45-10.25	2025-2029	5.18-5.25	2024

15 Տրամադրված փոխառություններ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Կապակցված կողմերին տրված փոխառություններ	-	269,905
	-	269,905
Պարտքային կորուստների գծով պահուստ	-	(4,671)
Ընդամենը տրամադրված փոխառություններ	-	265,234

Տրամադրված փոխառություններ գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

	2024թ.		2023թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	4,671	4,671	2,485	2,485
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(4,671)	4,671	2,186	2,186
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	4,671	4,671

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխառությունները տրամադրվել են Ընկերության հետ կապակցված անձանց (տե՛ս Ծանոթագրություն 23):

Կապակցված կողմերին տրամադրված փոխառությունները կարճաժամկետ են և տրամադրվել են անտոկոս: Փոխառությունները գեղչվել են 16.2%-ով, որի արդյունքում իրական արժեքը ներկայացված է Ծանոթագրություն 24-ում, 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված փոխառությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Տրամադրված փոխառությունների ժամկետային վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 26-ում:

Տրամադրված փոխառությունների պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է Ծանոթագրություն 27-ում:

16 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Համակարգ- չային տեխնիկա և կապի միջոցներ	Վարձակալված հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ Այլ	Ոչ նյութական ակտիվներ	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ		
				Գրասենյակային տարածք	Ընդամենը	
Սկզբնական արժեք						
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	6,299	1,615	-	-	22,168	30,082
Ավելացում	11,150	3,956	-	8,352	-	23,458
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,449	5,571	-	8,352	22,168	53,540
Ավելացում	14,472	4,976	1,435	41,883	99,249	162,015
Վերաչափում	-	-	-	-	(1,641)	(1,641)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,921	10,547	1,435	50,235	119,776	213,914
Կուրակված մաշվածություն						
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	3,965	624	-	-	3,715	8,304
Տարվա ծախս	8,050	541	-	-	7,390	15,981
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,015	1,165	-	-	11,105	24,285
Տարվա ծախս	4,851	1,180	51	-	18,869	24,951
Վերաչափում	-	-	-	-	(1,323)	(1,323)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	16,866	2,345	51	-	28,651	47,913
Հաշվեկշիռային արժեք						
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,434	4,406	-	8,352	11,063	29,255
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	15,055	8,202	1,384	50,235	91,125	166,001

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 14,834 հազար << դրամ (2023թ. 6,341 հազար << դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվներ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

Պայմանագրային պարտավորություններ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու նպատակով (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես) :

17 Այլ ակտիվներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ստացվելիք գումարներ պահառության գործունեությունից	4,871	8,325
Այլ ստացվելիք գումարներ	91,928	20,631
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	96,799	28,956
Վառելիք	-	213
Կանխավճարներ	1,235	1,010
Կանխավճարներ այլ հարկերի գծով	16	323
Այլ ակտիվներ	9,065	1,422
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	10,316	2,968
Ընդամենը այլ ակտիվներ	107,115	31,924

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստները մոտ են զրոյական արժեքի, այդ իսկ պատճառով չեն բացահայտվում այս աղյուսակում:

18 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Վարկեր բանկերից	-	244
Կապակցված կողմերից ստացված փոխառություններ	41,697	208,386
Այլ անձանցից ստացված փոխառություններ	117,309	-
Հետգնման պայմանագրեր բանկերի հետ	39,198,802	9,111,067
Վարկեր հետգնման պայմանագրերով ֆիզիկական անձանց հետ	70,593	-
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների ր ֆիզիկական անձանց նկատմամբ	39,428,401	9,319,697

Ֆինանսական կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից ստացված վարկերը ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

Հետգնման պայմանագրերով ներգրավված վարկերը ապահովված են Ընկերության կողմից գրավադրված 42,410,537 հազար << դրամ (2023թ.՝ 1,354,950 հազար << դրամ գումարով շահույթի և վնասի միջոցով

իրական արժեքով չափվող և 8,476,891 հազար << դրամ գումարով ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերով) գումարով շահույթի և վնասի միջոցով իրական արժեքով չափվող արժեթղթերով:

Ընկերությունն ունի գլխավոր վարկային պայմանագիր բանկի հետ, որի համաձայն ստանում է վարկեր, վարկային գծեր, երաշխիքներ, օվերդրաֆտներ, ֆակտորինգային ֆինանսավորում, ֆինանսական վարձակալություն: Բանկից ստացված վարկի մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրո է (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ուներ բացված վարկային գծի պայմանագիր 2,000 հազ. ԱՄՆ դոլար առավելագույն սահմանաչափով, 16% տարեկան տոկոսադրույքով և որի մնացորդը գրո էր): Այդ պայմանագրի դիմաց գրավադրված են Ընկերության բանկային հաշիվները և հետագայում այդ հաշիվներին մուտքագրվող բոլոր դրամական միջոցները, ինչպես նաև Ընկերությունը կնքել է սեփականության իրավունքով պատկանող գույքով և դրամական միջոցներով երաշխավորության պայմանագիր (Ծանոթագրություն 12):

Հաշվետու ժամականաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2023թ.՝ նույնպես):

19 Պարտավորություններ բրոքերային ծառայությունների գծով

Ընկերության և իր հաճախորդների միջև կնքված պայմանագրերի համաձայն, ստացված գումարների դիմաց, Ընկերությունը պարտավորվում է պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով համապատասխան որոշված վճարի դիմաց հաճախորդներին մատուցել բրոքերային ծառայություններ: Տվյալ պարտավորությունները կարճաժամկետ են (տե՛ս Ծանոթագրություն 26):

20 Այլ պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Վարձակալության գծով պարտավորություններ	84,164	10,476
Այլ վճարվելիք գումարներ	50,910	72,620
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	204,952	218,399
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	340,026	301,495
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	45,813	155,334
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	45,813	155,334
Ընդամենը այլ պարտավորություններ	385,839	456,829

Վարձակալության գծով պարտավորություններ

Ընկերությունը վարձակալության պայմանագրեր է կնքել գլխամասային գրասենյակի համար: Վարձակալությունը արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Ընկերությունը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տե՛ս Ծանոթագրություն 16):

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

	2024թ.	2023թ.
Հունվարի 1-ի դրությամբ	10,476	17,505
Ավելացում	99,249	-
Վերաչափում	(1,641)	-
Տոկոսի կուտակում	2,968	1,371
Վճարումներ	(26,888)	(8,400)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	84,164	10,476

2024թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 12.11% (2023թ.՝ 10%):

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով չզեղչված պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է Ծանոթագրություն 27.3-ում:

21 Սեփական կապիտալ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 760,000 հազար դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 76,000 հասարակ անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,000 դրամ անվանական արժեքով:

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են.

	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Արմինե Նաջարյան	380,000	50%	320,000	50%
Արմեն Տեր-Հակոբյան	380,000	50%	320,000	50%
	760,000	100%	640,000	100%

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

2024թ.-ի ընթացքում Ընկերությունը ավելացրել է բաժնետիրական կապիտալը 120,000 հազ. << դրամ գումարով:

2024թ.-ի ընթացքում Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշել է նախորդ տարիների չբաշխված շահույթից Ընկերության բաժնետերերին վճարել 1,600,000 հազ. << դրամի շահաբաժիններ: Ընկերությունը նաև վճարել է 2024թ. համար 800,000 հազ. << դրամ միջանկյալ շահաբաժին:

Վճարված շահաբաժիններից 983,665 հազ. << դրամ ուղղվել է կապակցված կողմերից ստացված փոխառությունների մարմանը:

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն << օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն << օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով:

22 Պայմանականություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության նկատմամբ չի եղել որևէ դատական հայց: Հետևաբար Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն:

Ընկերությունը ունի շարժական գույքի ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

23 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերությունը չունի վերջնական վերահսկող անձ:

Ընկերությունը իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են փոխառությունները, ռեպո համաձայնագրերը, վարձավճարները և այլն: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտը և ծախսերը հետևյալն են.

	2024թ.		2023թ.	
	Բաժնետերեր և կապակց- ված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակց- ված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվեդրվություն				
Տրամադրված փոխառություններ				
Հունվարի 1-ի դրությամբ	265,234	-	155,310	-
Տարվա ընթացքում տրամադրված	2,532,000	-	1,355,948	-
Տարվա ընթացքում մարված	(2,801,905)	-	(1,241,353)	-
Պարտքային կորուստների գծով պահուստ	-	-	(4,671)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	265,234	-
Սրացված փոխառություններ				
Հունվարի 1-ի դրությամբ	42,549	-	47,068	-
Տարվա ընթացքում ստացված	6,947	-	18,222	-
Տարվա ընթացքում մարված	(7,799)	-	(22,741)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	41,697	-	42,549	-
Պարտավորություններ բրոքերային ծառայությունների գծով				
Հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
Տարվա ընթացքում ստացված	4,730,639	-	-	-
Տարվա ընթացքում վճարված	(4,620,821)	-	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	109,818	-	-	-

	2024թ.		2023թ.	
	Բաժնետերեր և կապակց- ված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակց- ված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն				
Տոկոսային ծախսեր	(2,326)	-	(2,305)	-
Արժեթղթերի վաճառքից վնաս	(698)	-	-	-
Կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալության ծախսեր	(10,800)	-	(11,700)	-
Արժեզրկման ծախս (հակադարձում)	(4,671)	-	2,186	-
Գործուղման ծախսեր	(653)	(2,581)	(1,430)	(4,766)
Վերագնահատում	257	-	(1,195)	-
Արտարժույթի առք ու վաճառքից եկամուտ	5,172	-	-	-
Պահառության գործունեությունից միջնորդավճարներ	2,438	-	-	-
Բրոքերային ծառայություններից եկամուտներ	6,079	-	-	-

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	160,189	139,909
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	160,189	139,909

24 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

24.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

	31 դեկտեմբերի 2024թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	5,618,180	-	5,618,180	5,618,180
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	998,240	-	998,240	998,240
Այլ ակտիվներ	-	96,799	-	96,799	96,799
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ	-	39,428,401	-	39,428,401	39,428,401
Պարտավորություններ բրոքերային ծառայությունների գծով	-	13,831,228	-	13,831,228	13,831,228
Վարձակալության գծով պարտավորություններ	-	84,164	-	84,164	84,164
Այլ պարտավորություններ (բացառությամբ ֆինանսական վարձակալության)	-	255,862	-	255,862	255,862

	31 դեկտեմբերի 2023թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	777,907	-	777,907	777,907
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	6,565,125	-	6,565,125	6,565,125
Տրամադրված փոխառություններ	-	230,422	-	230,422	265,234
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր, այդ թվում գրավադրված	-	8,541,426	-	8,541,426	8,476,891
Այլ ակտիվներ	-	28,956	-	28,956	28,956
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ	-	9,319,697	-	9,319,697	9,319,697
Պարտավորություններ բրոքերային ծառայությունների գծով	-	10,110,539	-	10,110,539	10,110,539
Վարձակալության գծով պարտավորություններ	-	10,476	-	10,476	10,476
Այլ պարտավորություններ (բացառությամբ ֆինանսական վարձակալության)	-	291,019	-	291,019	291,019

Պահանջներ և պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը հիմնված է շուկայում գործող տոկոսադրույքների վրա: Այն արժեթղթերի իրական արժեքը, որոնց վերաբերյալ բացակայում են գնանշումները, հիմնված են ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկի վրա, որոնք զեղչվում են տարվա վերջին շուկայում գործող տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

24.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

	31 դեկտեմբերի 2024թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող արժեթղթեր, այդ թվում գրավադրված	7,549,830	51,963,392	-	59,513,222
Զուտ իրական արժեք	7,549,830	51,963,392	-	59,513,222

	31 դեկտեմբերի 2023թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող արժեթղթեր, այդ թվում գրավադրված	6,866,417	3,012,929	-	9,879,346
Զուտ իրական արժեք	6,866,417	3,012,929	-	9,879,346

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում 1-ին և 2-րդ մակարդակների միջև փոխանցումներ չեն կատարվել:

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Զգնանշվող պարտքային արժեթղթեր

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող զգնանշվող պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու նպատակով:

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-րդում

3-րդ մակարդակում դասակարգված Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա:

25 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ թե ոչ:

	Ճանաչված Ֆինանսական պարտավորու- թյունների ամախառն գումար	Ճանաչված Ֆինանսական ակտիվների/ պարտավորու- թյունների ամախառն գումար՝ հաշվանցված Ֆինանսական վիճակի մասին հաշվետվութ- յունում	Ֆինանսական պարտավորու- թյունների զուտ գումար՝ ներկայացված Ֆինանսական վիճակի մասին հաշվետվութ- յունում	31 դեկտեմբերի 2024թ.		
				Կապակցված գումարներ, որոնց գծով Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
				Ֆինանսա- կան գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր (Ծանոթագրություն 14, 18)	(39,269,395)	-	(39,269,395)	42,410,537	-	3,141,142
Ընդամենը	(39,269,395)	-	(39,269,395)	42,410,537	-	3,141,142

	Ճանաչված Ֆինանսական պարտավորու- թյունների ամախառն գումար	Ճանաչված Ֆինանսական ակտիվների/ պարտավորու- թյունների ամախառն գումար՝ հաշվանցված Ֆինանսական վիճակի մասին հաշվետվութ- յունում	Ֆինանսական պարտավորու- թյունների զուտ գումար՝ ներկայացված Ֆինանսական վիճակի մասին հաշվետվութ- յունում	31 դեկտեմբերի 2023թ.		
				Կապակցված գումարներ, որոնց գծով Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
				Ֆինանսա- կան գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր (Ծանոթագրություն 14, 18)	(9,111,067)	-	(9,111,067)	9,831,841	-	720,774
Ընդամենը	(9,111,067)	-	(9,111,067)	9,831,841	-	720,774

26 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Ընկերության չգեղջկված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 27.3-ում:

	31 դեկտեմբերի 2024թ.						
	Ցպահանգ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա- հանրա- գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա- հանրա- գումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,618,180	-	5,618,180	-	-	-	5,618,180
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	997,240	1,000	998,240	-	-	-	998,240
Ներդրումներ արժեթղթերում	5,066,415	465,147	5,531,562	5,395,246	6,175,877	11,571,123	17,102,685
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	41,550,567	859,970	42,410,537	-	-	-	42,410,537
Այլ ակտիվներ	96,799	-	96,799	-	-	-	96,799
	53,329,201	1,326,117	54,655,318	5,395,246	6,175,877	11,571,123	66,226,441
Պարտավորություններ							
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ	38,182,916	1,225,612	39,408,528	19,873	-	19,873	39,428,401
Պարտավորություններ բրոքերային ծառայություններից	13,831,228	-	13,831,228	-	-	-	13,831,228
Վարձակալության գծով պարտավորություններ	3,026	37,015	40,041	44,123	-	44,123	84,164
Այլ պարտավորություններ	-	255,862	255,862	-	-	-	255,862
	52,017,170	1,518,489	53,535,659	63,996	-	63,996	53,599,655
Զուտ դիրք	1,312,031	(192,372)	1,119,659	5,331,250	6,175,877	11,507,127	12,626,786
Կուտակված ճեղքվածք	1,312,031	1,119,659		6,450,909	12,626,786		

	31 դեկտեմբերի 2023թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա- հանրա- գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա- հանրա- գումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	777,907	-	777,907	-	-	-	777,907
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,564,125	1,000	6,565,125	-	-	-	6,565,125
Տրամադրված փոխառություններ	-	265,234	265,234	-	-	-	265,234
Ներդրումներ արժեթղթերում	1,259,294	3,965,776	5,225,070	2,479,446	1,083,057	3,562,503	8,787,573
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	9,831,841	-	9,831,841	-	-	-	9,831,841
Այլ ակտիվներ	28,956	-	28,956	-	-	-	28,956
	18,462,123	4,232,010	22,694,133	2,479,446	1,083,057	3,562,503	26,256,636
Պարտավորություններ							
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ	9,111,648	208,049	9,319,697	-	-	-	9,319,697
Պարտավորություններ բրոքերային ծառայություններից	10,110,539	-	10,110,539	-	-	-	10,110,539
Վարձակալության գծով պարտավորություններ	615	7,115	7,730	2,746	-	2,746	10,476
Այլ պարտավորություններ	-	291,019	291,019	-	-	-	291,019
	19,222,802	506,183	19,728,985	2,746	-	2,746	19,731,731
Զուտ դիրք	(760,679)	3,725,827	2,965,148	2,476,700	1,083,057	3,559,757	6,524,905
Կուտակված ճեղքվածք	(760,679)	2,965,148		5,441,848	6,524,905		

27 Ռիսկի կառավարում

Ներդրումային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Ընկերությունն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Ընկերության շահութաբերության կայունության ապահովման գործում, և Ընկերության յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի և գործառնական ռիսկերի:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի կառավարումն իրականացվում է Ընկերության կառուցվածքային տարբեր մակարդակներում:

Բաժնետերերի ժողովը

Բաժնետերերի ժողովը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ուղղվածության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Տնօրինություն

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի իրականացման և վերահսկման համար: Պատասխանատու է Ընկերության ակտիվների և պարտավորությունների կառավարման համար: Պատասխանատվություն է կրում նաև Ընկերության իրացվելիության ռիսկի և ֆինանսավորման ռիսկի կառավարման համար:

Ընկերության ռիսկի կառավարման քաղաքականության նպատակն է ախտորոշել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, և արժանահավատ և նորացված տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը: Ընկերությունը պարբերաբար վերանայում է ռիսկի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայում, գործիքներում փոփոխություններն արտացոլելու և լավագույն փորձին հետևելու համար:

Կարևորագույն ռիսկերն են պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկը: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքների, տոկոսադրույքների և այլ գնային ռիսկերը:

27.1 Պարտքային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված փոխառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Ընկերությանը կորուստներ կարող է պատճառել:

Պարտքային ռիսկը կապված է հիմնականում փոխառությունների տրամադրման հետ և ներդրումային գործունեության հետ, որոնք Ընկերության ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ:

2024 և 2023թթ. ընթացքում Ընկերությունում չկան արժեզրկված ակտիվներ:

Ընկերության ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

Ընկերությունը իր պարտքային ռիսկը զսպելու նպատակով կարող է իր հետ համագործակցող հաստատությունների համար սահմանել միջոցների տեղաբաշխման առավելագույն սահմանաչափեր: Յուրաքանչյուր հաստատության համար կարող է սահմանվել առանձին սահմանաչափ:

27.1.1 Պարտքային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Ընկերության՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ:

Ներքին վականիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 27.1.1-ում:

Ներքին վարկանիշեր	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Ստանդարտ	5,629,441	5,629,441	777,907	777,907
Համախառն հաշվեկշռային արժեք	5,629,441	5,629,441	777,907	777,907
Պարտքային կորուստների գծով պահուստ	(11,261)	(11,261)	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	5,618,180	5,618,180	777,907	777,907
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	1,000,432	1,000,432	6,569,431	6,569,431
Համախառն հաշվեկշռային արժեք	1,000,432	1,000,432	6,569,431	6,569,431
Պարտքային կորուստների գծով պահուստ	(2,192)	(2,192)	(4,306)	(4,306)
Զուտ հաշվեկշռային արժեք	998,240	998,240	6,565,125	6,565,125
Ներդրումներ արժեթղթերում				
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ	-	-	8,763,915	8,763,915
Համախառն հաշվեկշռային արժեք	-	-	8,763,915	8,763,915
Պարտքային կորուստների գծով պահուստ	-	-	(23,847)	(23,847)
Զուտ հաշվեկշռային արժեք	-	-	8,740,068	8,740,068
Տրամադրված փոխառություններ				
Ստանդարտ	-	-	269,905	269,905
Համախառն հաշվեկշռային արժեք	-	-	269,905	269,905
Պարտքային կորուստների գծով պահուստ	-	-	(4,671)	(4,671)
Զուտ հաշվեկշռային արժեք	-	-	265,234	265,234
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	96,799	96,799	28,956	28,956
Զուտ հաշվեկշռային արժեք	96,799	96,799	28,956	28,956

27.1.1 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Ընկերության՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տե՛ս Ծանոթագրություն 4.6(գ)):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Ընկերությունը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում պարտազանցում տեղի ունենալու ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Ընկերությունը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Ընկերությունը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Տրված փոխատվությունների չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված փոխառությունների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց՝ փոխառությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Պարտազանցում («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես պարտազանցման դեպք, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտվող փոխառություններ. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան): Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Ներդրումային արժեթղթերի չափանիշներ

Ստորև ներկայացված են արժեթղթերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները, որոնք բոլորն էլ որոշման մեջ ունեն հավասար կշիռ.

- 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն - 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցում տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում երկրի (սովետերեն) վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's ու Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն

դեպքերում, երբ թողարկողները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և Ընկերությունը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ պարտազանցման վարկանիշը, որը համապատասխանում է սովյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Ընկերության կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցե մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Ընկերությունը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են պարտազանցում տեղի ունենալու ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված՝ ոչ ժամկետանց ֆինանսական ակտիվները սահմանվում են որպես բարձր վարկանիշ ունեցող, մինչև 30 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ստանդարտ վարկանիշ ունեցող, ավելի քան 30 օր և մինչև 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ոչ ստանդարտ կամ ցածր և ավելի քան 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ չաշխատող վարկանիշ ունեցող) գործոններով, որոնք մատնանշում են պատազանցում տեղի ունենալու ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Խմբային կամ անհատական գնահատում

Ընկերությունը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից փոխառությունները՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- զանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեթղթ/իրական արժեթղթ՝ այլ համապատասխան արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները,
- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, եթե սկզբնական փոխառությունը ապաճանաչվել է, իսկ նոր փոխառությունը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Ընկերությունը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով փոխառությունների բնութագրերի վրա:

Պարտազանցման սահմանում և «առողջացում»

Ընկերությունը համարում է ֆինանսական գործիքը պարտազանցման ենթարկված, և, հետևաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Ընկերությունը բանկային հաշիվները համարում է պարտազանցման ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք փոխառուն վճարունակ է, Ընկերությունը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Ընկերությունը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ պարտազանցման ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է փոխառությունը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող

պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ փոխառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,
- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում՝ փոխառության զգալի մասի զիջմամբ,
- Ընկերությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Ընկերության քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում պարտազանցման սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Ընկերության՝ ակնկալվող պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չաշխատող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Վերանայված և փոփոխված փոխառություններ

Ընկերությունը երբեմն զիջումներ կամ փոփոխություններ է կատարում փոխառության սկզբնական պայմաններում՝ արձագանքելով փոխառուի ֆինանսական դժվարություններին՝ գրավը սեփականություն վերցնելու կամ այլ կերպ այն հավաքագրելու փոխարեն: Ընկերությունը համարում է փոխառությունը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով փոխառուի ներկա կամ ապագային առնչվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե փոխառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ձախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և փոխառության նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո ցանկացած արժեզրկում չափվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ, որը հաշվարկվում է պայմանների փոփոխությունից առաջ: Դա Ընկերության՝ վերանայված փոխառությունների վերահսկման քաղաքականությունն է, ինչը կօգնի ապահովել ապագա վճարումների հավանականությունը:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Ընկերությունը «առողջացման» ժամանակաշրջան է սահմանում վերանայումից հետո ընկած 12-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է միայն վերանայված և չաշխատող պարտքերի համար (բացառելով արտոնյալ ժամանակահատվածը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայումից անմիջապես հետո հնարավոր չէ որոշել ֆինանսական դժվարությունների առկայությունը՝ անհրաժեշտ է օգտագործել «առողջացման» ժամանակաշրջանը՝ որոշելու համար արդյոք պարտքն արդյունավետ է «առողջացել»: Այսպիսով, բոլոր վերանայված և չաշխատող պարտքերը վերանայումից հետո՝ «առողջացման» ժամանակաշրջանում, պետք է մնան 3-րդ փուլում, անկախ պարտավորության դրական դրսևորումից (ժամկետանց օրերի բացակայություն և այլն):

Ընկերությունը փորձաշրջան է համարում «առողջացման» ժամանակաշրջանից հետո ընկած 24-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է վերանայված և աշխատող պարտքերի համար: Ակտիվը՝ որպես վերանայված և աշխատող պարտքեր դասակարգվելուց հետո շարունակում է մնալ առնվազն 24-ամսյա փորձաշրջանում որպես վերանայված:

Որպեսզի փոխառություն չդասակարգվի վերանայված կատեգորիայում, հաճախորդը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին.

- իր բոլոր պարտքերը պետք է դիտարկվեն աշխատող,
- երկու տարվա փորձաշրջանն ավարտվում է այն օրը, երբ վերանայման պայմանագիրը համարվում է աշխատող,
- փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսի ընթացքում ոչ էական համարվող մայր գումարի կամ տոկոսագումարի կանոնավոր վճարումներ,
- հաճախորդը չունի որևէ պայմանագիր, որը ավելի քան 30 օր ժամկետանց է:

Պարտազանցման տեղի ունենալու հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է փոխառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ փոխառության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են պարտազանցումից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական գեղչերի, բռնազանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար պարտազանցման տեղի ունենալու դիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում պարտազանցման տեղի ունենալու պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Ընկերության պարտազանցումների վերջին տվյալների վերլուծության վրա:

Ապագայամետ տեղեկատվություն

Ընկերությունը չի ներառել ապագայամետ տեղեկատվությունը ֆինանսական ակտիվների հետ կապված: Ղեկավարության գնահատմամբ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու ազդեցությունն էական չէ:

27.1.1 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Պարտքային ռիսկի ենթարկվող ակտիվներն հիմնականում տեղաբաշխված են << տարածքում:

27.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Ընկերությունը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանափակումներ ֆինանսական գործիքների գծով, որոնք կանոնավոր ուսումնասիրվում և հաստատվում են Գործադիր տնօրենի կողմից:

27.1.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Ստորև ներկայացվում է շահույթի կամ վնասի զգայունության վերլուծությունը՝ պայմանավորված շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությամբ, որի իրականացվել է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա դիրքերի և եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

Արտարժույթ	2024թ.	
	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Շահույթ կամ վնաս
<< դրամ	1	(2,058,518)
<< դրամ	(1)	2,259,070

Արտարժույթ	2023թ.	
	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Շահույթ կամ վնաս
<< դրամ	1	(281,145)
<< դրամ	(1)	33,891

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2024թ.			2023թ.		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	<< դրամ	Ազատ փոխարկելի արտարժույթ	Այլ արտարժույթ	<< դրամ	Ազատ փոխարկելի արտարժույթ	Այլ արտարժույթ
Տոկոսաբեր ակտիվներ						
Ավանդ բանկում	8.59	-	-	8.8	-	-
Ներդրումներ արժեթղթերում	10.83	6.26	-	12.5	5.57	-
Հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	10.56	3.71	-	9.89	-	-
Տոկոսակիր պարտավորություններ						
Վարկեր բանկերից	-	-	-	-	16	-
Հետզնման պայմանագրեր բանկերի հետ	7.74	5.00	-	9.98	-	-
Հետզնման պայմանագրեր ֆիզիկական անձանց հետ	-	3.16	-	-	-	-
Ստացված փոխառություններ	-	4.93	-	-	5.31	-

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի << դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	10	872,358	10	496,229
Եվրո	10	4,834	10	18,238
ԱՄՆ դոլար	(10)	(872,358)	(10)	(496,229)
Եվրո	(10)	(4,834)	(10)	(18,238)

Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

	31 դեկտեմբերի 2024թ.			
	<< դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,562,252	2,531,570	524,358	5,618,180
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,027	452,953	544,260	998,240
Ներդրումներ արժեթղթերում	4,012,153	13,089,501	1,031	17,102,685
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	36,171,230	6,239,307	-	42,410,537
Այլ ակտիվներ	9,206	84,117	3,476	96,799
Ընդամենը	42,755,868	22,397,448	1,073,125	66,226,441
Պարտավորություններ				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ	38,710,171	427,933	290,297	39,428,401
Պարտավորություններ բրոքերային ծառայությունների գծով	355,813	13,201,473	273,942	13,831,228
Վարձակալության գծով պարտավորություններ	84,164	-	-	84,164
Այլ պարտավորություններ	211,541	-	44,321	255,862
Ընդամենը	39,361,689	13,629,406	608,560	53,599,655
Զուտ դիրք 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,394,179	8,768,042	464,565	12,626,786
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	10,987,338	15,171,888	97,410	26,256,636
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	9,358,646	10,022,423	350,662	19,731,731
Զուտ դիրք 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,628,692	5,149,465	(253,252)	6,524,905

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀՀ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

27.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը: Ընկերությունը պահում է բարձր իրացվելի

ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում:

Ստորև ներկայացվում է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս Ծանոթագրություն 26-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես:

	31 դեկտեմբերի 2024թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռա- յին արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ	38,266,585	1,237,658	20,075	-	39,524,318	39,428,401
Պարտավորություններ բրոքերային ծառայություններից	13,831,228	-	-	-	13,831,228	13,831,228
Վարձակալության գծով պարտավորություններ	3,872	43,987	50,641	-	98,500	84,164
Այլ պարտավորություններ	-	255,862	-	-	255,862	255,862
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	52,101,685	1,537,507	70,716	-	53,709,908	53,599,655

	31 դեկտեմբերի 2023թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռա- յին արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ	9,131,597	257,386	-	-	9,388,983	9,319,697
Պարտավորություններ բրոքերային ծառայությունների գծով	10,110,539	-	-	-	10,110,539	10,110,539
Վարձակալության գծով պարտավորություններ	700	7,700	11,200	-	19,600	10,476
Այլ պարտավորություններ	-	291,019	-	-	291,019	291,019
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	19,242,836	556,105	11,200	-	19,810,141	19,731,731

27.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Ընկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է խորհուրդը, գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ << ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

28 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

	Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	Վարձակալության գծով պարտավորություններ	Ֆինանսավորման գործունեությունից ընդամենը պարտավորություններ
Հաշվեկշռային արժեք 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,713,135	851,630	17,505	4,582,270
Մուտքեր	246,613,761	-	-	246,613,761
Մարումներ	(241,021,705)	(846,764)	(8,400)	(241,876,869)
Արտարժույթային փոխարկումներ	(1,383)	(4,866)	-	(6,249)
Այլ	15,889	-	1,371	17,260
Հաշվեկշռային արժեք 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,319,697	-	10,476	9,330,173
Մուտքեր	182,297,282	-	99,249	182,396,531
Մարումներ	(151,932,565)	-	(26,888)	(151,959,453)
Արտարժույթային փոխարկումներ	(303,918)	-	-	(303,918)
Այլ	47,905	-	1,327	49,232
Հաշվեկշռային արժեք 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	39,428,401	-	84,164	39,512,565

«Այլ» տողում ներառված են նոր ձևավորված վարձակալության գծով պարտավորությունները և անկանխիկ շարժ հանդիսացող վարձակալության վերանայումները: Այն նաև ներառում է պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, ստացված փոխառությունների և վարձակալության գծով պարտավորությունների գծով հաշվեգրված, բայց դեռևս չվճարված տոկոսներից: Ընկերությունը դասակարգում է վճարված տոկոսները որպես դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից:

29 Կապիտալի համարժեքություն

Ընկերությունը կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Ընկերությունը պահպանում է ամուր պարտքային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է երկրորդային կապիտալը, որը ընդգրկում է վերազնահատման և այլ պահուստները:

<< կենտրոնական բանկը ներդրումային ընկերությունների համար սահմանել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի տնտեսական նորմատիվ՝ 300,000 հազար դրամ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (<<) դրամով)

<< կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2024 և 2023թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն << կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտի չենթարկված	
	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Հիմնական կապիտալ	11,889,325	6,394,396
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	11,889,325	6,394,396
Ռիսկով կշռված ակտիվներ	1,494,488	1,065,946
Կապիտալի համարժեքության նորմատիվ (Ն1.1)	12.57%	16.67%

Ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները: